





USAID
FROM THE AMERICAN PEOPLE

LGP 3

ՑԵՊԱԿԱՆ ԻՆՎԵՍՏԻՄԵՆՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒ 3

Համայնքի բյուջետավարձան ուղեցույց

Community Budgeting Guidance





USAID
FROM THE AMERICAN PEOPLE

LGP 3

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՓՈՒԼ 3

**ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**Community Budgeting
Guidance**

ԵՐԵՎԱՆ
Նոյյան տապան
2010

ՀՏԴ 351/354(479.25):336(07)
ԳՄԴ 67.99(2Հ)1+65.9(2Հ)26 ց7
Հ 201



Սույն աշխատանքով մենք հարգանքի տուրք ենք մատուցում մեր գործընկերոջ՝ «Համայնքի բյուջետավարման ուղեցույց» առաջին ձեռնարկի հեղինակ, լուսահոգի Արտյուշա Մուրադյանի հիշատակին:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը կազմվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության («Ռիսըրչ Թրայանգլ Ինստիտուտ» ոչ առևտրային կորպորացիայի հայաստանյան մասնաճյուղի իրականացմամբ) Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլի շրջանակներում:

Լրամշակող և կազմող՝

Վահրամ Շահբազյան, ՏԻԾ 3 բյուջետային և ֆինանսական կառավարման մասնագետ, «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ վարչության անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Խմբագրական խորհուրդ՝

Ռոբերտ Բողո, Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլի ղեկավար
Վահան Մովսիսյան, «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ նախագահ
Նվեր Գևորգյան, Տեղական ինքնակառավարման ֆինանսական փորձագետ,
«Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ անդամ
Ղավիթ Համբարձումյան, Բյուջետային գործընթացի կառավարման մասնագետ

Հ 201 Համայնքի բյուջետավարման ուղեցույց /կազմ.՝ Վ. Շահբազյան;
Խմբ. խորհուրդ՝ Ռ. Բողո և ուրիշներ/-եր., Նոյյան տապան, 2010, 256 էջ:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը նվիրված է՝ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի գործող օրենսդրության և ՀՀ համայնքների ֆինանսական կառավարման շրջանակներում, համայնքի տարեկան բյուջեի կազմման, քննարկման, հաստատման, կատարման, վերահսկման, հաշվետվությունների կազմման, ինչպես նաև համայնքի ֆինանսական վերլուծությունների իրականացման և բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման զնա-հատման բնագավառներում ՏԻՄ-երի տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ձեռքբերման և օգտագործման հարցերին:

Ձեռնարկը հասցեագրված է ՀՀ համայնքների ղեկավարներին, նրանց աշխատակազմե-րի ֆինանսական կառավարման մասնագետներին, ավագանիների անդամներին, ինչպես նաև ուսանողներին, դասախոսներին և տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող այլ մասնագետներին:

Ձեռնարկը հրատարակվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Տեղա-կան ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլի օժանդակությամբ: Ձեռնարկում ներկայաց-վածը հեղինակների տեսակետներն են և միշտ չէ, որ դրանք արտահայտում են ԱՄՆ Միջազ-գային զարգացման գործակալության տեսակետները:

ՀՏԴ 351/354(479.25):336(07)
ԳՄԴ 67.99(2Հ)1+65.9(2Հ)26 ց7

ISBN 978-9939-57-024-2

© Վահրամ Շահբազյան, 2010
© ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլ, 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Կարծիք գրախոսի կողմից	7
1. «Բյուջե» հասկացությունը, դրա նպատակները և տեսակները	8
2. ՀՀ բյուջետային համակարգը և դասակարգումը	24
3. Համայնքի բյուջեի ձևավորման սկզբունքները և կառուցվածքը	37
4. Համայնքի բյուջեի մուտքերը, դրանց կանխատեսումը և կառավարումը	45
5. Համայնքի բյուջեի ելքերը և դրանց դասակարգումը	69
6. Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպումը	76
7. Համայնքի կապիտալ բյուջետավարումը	82
8. Համայնքի բյուջեի նախագծի կազմումը, քննարկումը և հաստատումը	109
9. Համայնքի գնումների գործընթացի կազմակերպումը	117
10. Համայնքի բյուջեի կատարումը, կատարման հսկողությունը և վերահսկումը	127
11. <i>Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունների կազմումը, քննարկումը և հաստատումը</i>	134
12. Համայնքի բյուջեի հրապարակայնությունը	137
13. Համայնքի ֆինանսական վերլուծության մեթոդաբանությունը	140
14. Համայնքի բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման գնահատումը	155
Վերջաբան	164
Սկզբնաղբյուրներ	165
Հավելված 1. Համայնքի ֆինանսական կառավարման ռազմավարության (քաղաքականության) օրինակելի ձև	166
Հավելված 2. Համայնքի բյուջեի հակիրճ նախագծի նմուշ	172
Հավելված 3. Համայնքի բյուջեի նախագծի նմուշ	182
Հավելված 4. Գնման առարկայի բնութագրի և ժամանակացույցի օրինակներ	206
Հավելված 5. Համայնքի բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման ցուցանիշների օրինակներ՝ ըստ առանձին ոլորտների	210

*	Community Budgeting Guidance	214
	Table of contents	216
	Foreword	217
	Preamble	219
	Executive summary	221
	Conclusion	234
	Critic's review	235
	Tables and Charts related to 2003-2009 financial analysis of 38 LGP 3 supported cities	236

ԱՌԱՋԱԲԱՆ

Համայնքի բյուջետավարման սույն ուղեցույցը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ համայնքների ֆինանսական կառավարման բնագավառում ուսուցման ծրագրերի գծով իմ անմոռանալի գործընկեր, երջանկահիշատակ Արտյուշա Սուրադյանի կողմից մշակված և 2004 թվականին «Համայնքների ֆինանսիստների միավորում» (ՀՖՄ) ՀԿ կողմից հրատարակված «Համայնքի բյուջետավարման ուղեցույց» ձեռնարկը, այդ ժամանակից ի վեր տեղական ինքնակառավարման բնագավառի ՀՀ օրենսդրությունում կատարված մեծաքանակ փոփոխությունները և լրացումները: Ձեռնարկում ներառվել են նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) Տեղական ինքնակառավարման ծրագիր, երրորդ փուլի (ՏԻԾ 3)՝ «Արժիւյ» ամերիկյան կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի իրականացմամբ, 2006-10թթ. ընթացքում համայնքների պլանավորման և բյուջետավարման բնագավառում մշակված և ՀՀ 38 քաղաքային համայնքներում ներդրված ուսուցման և գործնական նյութերը:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 24 հոկտեմբերի 2007թ. ՀՕ-224-Ն ՀՀ օրենքով արմատական փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ բյուջետային դասակարգման մեջ: Համայնքների բյուջեների կազմման մասով, դրանք ուժի մեջ են մտել 2009 թվականի բյուջետային գործընթացն, օրենքով սահմանված կարգով, սկսվելու պահից, իսկ համայնքների բյուջեների կատարման մասով՝ 2009 թվականի հունվարի 1-ից: Օրենսդրական այդ փոփոխությունները համահունչ են միջազգայնորեն ընդունված՝ Պետական ֆինանսների վիճակագրություն-2001 (GFS-2001) բյուջետային դասակարգմանը:

Ներկայումս անհրաժեշտություն է զգացվում՝ վերանայելու և լրամշակելու համայնքների բյուջետավարման բնագավառում օգտագործվող ուսումնամեթոդական ձեռնարկներն ու ուղեցույցերը և, միաժամանակ, հանդես բերելու նոր տեսակետներ ու մոտեցումներ բյուջետավարման ամբողջ գործընթացի նկատմամբ: Սույն ուղեցույցի հրատարակումը նպատակաուղղված է, առաջին հերթին, հենց այդ բացը լրացնելուն:

Միաժամանակ, համայնքի արդյունավետ բյուջետավարումը մեծապես կախված է համայնքի գործունեության ռազմավարական (մասնավորապես՝ միջնաժամկետ) պլանավորման գործառույթների արդյունավետ կատարումից: Այս բնագավառում ՏԻԾ 3-ում ընդգրկված ՀՀ 38 քաղաքները վերջին տարիներին արձանագրել են բավականին շոշափելի հաջողություններ, այլ համայնքների համար

ուսանելի փորձ: Համայնքի գործունեության պլանավորման և ֆինանսական կառավարման համակարգերի սերտ կապն ապահովելու նպատակով, ՏԻԾ 3 կողմից մշակվել և ՀՀ 38 համայնքներում ներդրվել են կապիտալ պլանավորման և բյուջետավարման նոր մոտեցումներ ու գործընթացներ՝ օգտագործելով այդ բնագավառում միջազգային փորձը: Սույն ուղեցույցում բավարար մանրամասնությամբ ներկայացվում են համայնքի ֆինանսական կառավարման քաղաքականության մշակման, կապիտալ բյուջետավարման գործընթացի կազմակերպման, կապիտալ ծրագրերի առաջնահերթությունների որոշման, բյուջեների հանրային քննարկումների կազմակերպման և այլ հարակից հարցերը: Ուղեցույցում տեղ են գտել նաև համայնքներում ֆինանսական վերլուծությունների իրականացման նոր մեթոդաբանությունը, ինչպես նաև բյուջեով նախատեսված աշխատանքների և ծրագրերի գնահատման համակարգի հակիրճ նկարագրությունը:

Ուղեցույցն առավելապես ունի գործնական ուղղվածություն, այն հասցեագրված է, առաջին հերթին, համայնքների ղեկավարներին, նրանց աշխատակազմերի ֆինանսական կառավարման մասնագետներին, համայնքների ավագանիների անդամներին: Ձեռնարկը կարող է ծառայել նաև որպես ուսումնական ձեռնարկ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների և այն կազմակերպությունների համար, որոնք իրականացնում են համայնքային ծառայողների մասնագիտական ուսուցման և վերապատրաստման ծրագրեր: Ուղեցույցի հավելվածներում բերված են համայնքի ֆինանսական կառավարման բնագավառում կիրառելի մի շարք նմուշներ, օրինակելի ձևեր, օրինակներ:

Ցանկանում են խորին երախտագիտությունս հայտնել ԱՄՆ ՄՁԳ ՏԻԾ 3 նախկին ղեկավար Սեմուել Քոքսոնին, ներկայիս ղեկավար Ռոբերտ Բոդոյին և ՀՖՄ ՀԿ նախագահ Վահան Մովսիսյանին՝ ուղեցույցի պատրաստման և հրատարակման գործում մեծ աջակցություն ցուցաբերելու համար, բյուջետային գործընթացի կառավարման մասնագետ Դավիթ Համբարձումյանին և տեղական ինքնակառավարման ֆինանսական փորձագետ, ՀՖՄ ՀԿ անդամ Նվեր Գևորգյանին՝ ուղեցույցում ներառված որոշ նյութերի լրամշակման ընթացքում ունեցած ներդրումի, արժեքավոր դիտողությունների և առաջարկությունների համար, Նարինե Քոլոյանին՝ ուղեցույցի սեղմագրի անգլերեն լեզվով որակյալ թարգմանության համար:

Վահրամ Շահբազյան

***ԱՄՆ ՄՁԳ ՏԻԾ 3 բյուջետային և ֆինանսական կառավարման մասնագետ
ՀՖՄ ՀԿ վարչության անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու***

ԿԱՐԾԻՔ ԳՐԱԽՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Ներկայումս, ինչպես և նախկինում, մեր հանրապետությունում շատ քիչ են համայնքային մակարդակով բյուջետավորման հարցերին նվիրված հրապարակումները: Այդ առումով 2004թ.-ին ՀՖՄ ՀԿ վարչության անդամ, Աբովյանի քաղաքապետի գլխավոր խորհրդական Արտյուշա Մուրադյանի կողմից կազմված և հրապարակված «Համայնքի բյուջետավորման ուղեցույց» ձեռնարկը շատ պահանջված էր: Այդ ձեռնարկն այն եզակի նյութերից էր, որում, գործնական կիրառման տեսանկյունից, մատչելի ձևով, բավարար մանրամասնությամբ ներկայացվել էին համայնքներում բյուջետավորման հիմնական հարցերը: Սակայն այդ հրապարակումից շուրջ վեց տարի անց, անշուշտ, կարիք է առաջացել այն նորից կազմելու՝ հաշվի առնելով բյուջետավորման բնագավառում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները և այլ զարգացումները: Այդ իսկ պատճառով ողջունելի են համարում սույն «Համայնքի բյուջետավորման ուղեցույց» ձեռնարկի կազմման և հրատարակման՝ ԱՄՆ ՄՁԳ ՏԻԾ 3 նախաձեռնությունը:

Ձեռնարկում ներկայացված նյութը, ինչպես և վեց տարի առաջ, շատ արդիական է: Վերջինումս ոչ միայն քայլ է արվել այն օրենսդրության մեջ կատարված փոփոխություններին համապատասխանեցնելու, այլև փորձ է արվել ընդլայնել համայնքային բյուջետավորման գործընթացի դիտարկման շրջանակը: Դա ավելի տրամաբանական և ամբողջական է դարձրել ներկայացված նյութերի դիտարկումը և դրանց ընկալումը: Որպես ձեռնարկի ակնհայտ և կարևոր ձեռքբերում, պետք է նշել համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի միջև փոխադարձ կապի ամրապնդման հարցերին անդրադարձը: Կարևորում են նաև ձեռնարկում համայնքի ֆինանսական կառավարման, համայնքի կարիքների համար գնումների կազմակերպման, կապիտալ բյուջետավորման, բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման գնահատման հարցերին վերաբերող նոր մասերի ներառման հանգամանքը: Անշուշտ, հետաքրքրություն կառաջացնի նաև ձեռնարկում ներկայացված՝ համայնքներում բյուջետավորման առանձին հարցերում տեղական և միջազգային փորձը, ինչպես նաև ՏԻԾ 3 փորձագետների կողմից հանրապետության 38 քաղաքներում կատարված ֆինանսական վերլուծությունը: Ձեռնարկը՝ վերջինումս ներկայացված նյութերի կիրառության տեսանկյունից, շահել է բյուջետավորման գործին աջակցող զանազան մնուշների և օրինակելի ձևերի զետեղումից:

Գտնում են, որ սույն ձեռնարկը կարող է օգտագործվել ուսումնական և գործնական նպատակներով՝ համայնքի բյուջետավորման գործընթացում ընդգրկված համապատասխան մասնագետների և ավագանու անդամների կողմից:

Դավիթ Համբարձումյան

1. «ԲՅՈՒՋԵ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ի՞նչ է բյուջեն

Բյուջեն պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ-երին) Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիր է:

ՏԻՄ-երը պետք է համայնքի սահմանափակ ֆինանսական միջոցները բաշխեն այնպես, որ ֆինանսավորվեն օրենքով նրանց վերապահված լիազորությունների սահմաններում մի շարք գործառույթներ և միջոցառումներ: Ցանկացած համայնքի տարեկան հիմնական ֆինանսական փաստաթուղթը, որտեղ ձևակերպվում են համայնքի տարեկան զարգացման քաղաքականությունը և ՏԻՄ-երի գործունեության պլանավորումը, բյուջեն է: ՏԻՄ-երի կողմից համայնքի բյուջեի նախագծի կազմումն, ըստ էության, սահմանափակ ֆինանսական միջոցների բաշխումն է համայնքային ծառայությունների և միջոցառումների միջև այնպես, որպեսզի առավել արդյունավետ բավարարվեն համայնքի հանրության կարիքներն ու պահանջները:

Համայնքի բյուջեն ներառում է՝

- տվյալ տարում իրականացման համար պլանավորվող ծրագրերը (այդ թվում՝ միջոցառումները, ծառայությունները, աշխատանքները և այլն),
- համայնքի եկամուտների կանխատեսումները և այն ծախսերի նախահաշիվները, որոնք անհրաժեշտ են պլանավորվող ծրագրերը ֆինանսավորելու համար:

Բյուջեն ազդեցիկ գործիք է համայնքի գործունեության մրցակցող առաջնահերթությունների միջև սահմանափակ միջոցները բաշխելու համար: Բյուջեն, որպես կանոն, ձևավորվում է միջոցների սակավության պայմաններում, որտեղ կարիքները միշտ գերազանցում են գոյություն ունեցող միջոցներին: Բյուջեով սահմանված ծախսերը չափվում են ոչ միայն դրանց կատարումից ստացված օգուտներով, այլև տվյալ ծախսային ուղղության ընտրության հետևանքով կորսվող այլ ծախսային ուղղությունների չիրացված հնարավորություններով: Հարցը հետևյալն է. «ի՞նչպե՞ս է որոշվում, թե Ա միջոցառմանն ավելի շատ միջոցներ է

տրամադրվում, քան Բ-ին»: Դրանից կախված՝ բյուջեն, փաստորեն, մի շարք այլ-ընտրանքների միջև ընտրություն կատարելն է:

Եթե պարզ ձևով ներկայացնելու լինենք, համայնքի բյուջեն ակնկալվող բյուջետային մուտքերի և առաջարկվող բյուջետային ելքերի համապարփակ թվարկումն է՝ գալիք բյուջետային տարվա համար, ՏԻՄ-երի գործունեության ուղղություններով: Բյուջեն համայնքային ծառայությունների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝ բյուջեն համայնքի ֆինանսական կառավարման առանցքն է:

Բյուջեի նպատակները

Նպատակները, որոնց կարող է ծառայել համայնքի բյուջեն, պետք է ուղղորդված լինեն ՏԻՄ-երին օրենքով սահմանված տարաբնույթ լիազորությունների կատարմանը: Ստորև ամփոփ ներկայացվում են մի շարք նպատակներ, որոնց կարող է ծառայել համայնքի բյուջեն:

Որպես պայմանագիր

Համայնքի ղեկավարը և ավագանին պայմանավորվում են միջոցներ տրամադրել համայնքային ստորաբաժանումներին՝ որոշակի ուղղություններով ծախսելու համար: Այս առումով բյուջեն մի պայմանագիր է, որը կնքվում է համայնքի ներկայացուցչական և գործադիր մարմինների միջև: Բյուջեն կարող է դիտվել նաև որպես կնքվող պայմանագիր համայնքի բնակչության և ՏԻՄ-երի միջև: Այս իմաստով, համայնքի բնակչությունը, ի դեմս ավագանու, համաձայնվում է համայնքի բյուջե վճարել հարկեր, տուրքեր, վճարներ՝ ՏԻՄ-երի կողմից մատուցվող որոշակի հանրային ծառայություններ ստանալու ակնկալիքով:

Որպես քաղաքականություն մշակելու կարևոր միջոց

Բյուջեն իրենից ներկայացնում է համայնքային տարեկան քաղաքականություն մշակելու կարևոր միջոց: Թե ինչպե՞ս են ՏԻՄ-երը որոշում ծախսել բյուջեի սուղ միջոցները, հավանաբար, ամենակարևոր քաղաքական որոշումն է, որ ՏԻՄ-երն ընդունում են բյուջետային տարվա ընթացքում: ՏԻՄ-երի կողմից տնօրինվող միջոցները միշտ էլ քիչ են այն ծավալից, որն անհրաժեշտ է համայնքի բոլոր խնդիրները լուծելու համար: Վերջիններս մրցակցող այլընտրանքներ են: ՏԻՄ-երը պարտավոր են կատարել խնդիրների այնպիսի ընտրություն, որոնց լուծումն առավելագույնս կծառայի համայնքի շահերին: Այսպիսով, բյուջեն կարելի է դիտել որպես մի միջոց, որով սահմանվում է համայնքի տարեկան զարգացման քա-

ղաքականությունը: ՏԻՄ-երը պետք է պատասխանեն նաև այն հարցին, թե արդյո՞ք իրենց կողմից սահմանված քաղաքականությունը լավագույնն է:

Որպես պլան

Բյուջեն համայնքի ղեկավարի գործունեության տարեկան աշխատանքային պլանն է, որտեղ ներկայացվում են տվյալ տարում կատարման ենթակա աշխատանքները: Բյուջեն նաև համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության համապատասխանեցման միջոց է: Այն պետք է բովանդակի մանրամասն տեղեկատվություն, թե ի՞նչ նպատակներ կիրականացվեն առաջարկվող ծախսերը կատարելու դեպքում: Պլանավորման ուղղվածությունը կարող է ի հայտ բերել դրված նպատակների իրականացման այլընտրանքային մեթոդներ:

Որպես գործունեության ուղենիշ

Համայնքային ստորաբաժանումների կողմից համայնքի ղեկավարին ներկայացվող առաջիկա տարվա բյուջետային հայտերում նկարագրվում են առաջարկվող ծրագրերը և ծախսերը: Սահմանվում են նաև այն քանակական և, հնարավորության դեպքում, որակական ցուցանիշները և չափորոշիչները, որոնց հիման վրա գնահատվելու են այդ ծրագրերի կատարողականը և ձեռքբերված փաստացի արդյունքները: Սահմանվում են նաև յուրաքանչյուր ծրագրից ակնկալվող արդյունքները, շահառուների թիվը, անհրաժեշտ աշխատակիցների թիվը, նրանց գործառույթները բյուջետային գործընթացում և այլն:

Որպես կառավարման միջոց

Բյուջեն ՏԻՄ-երի որոշումների և պարտավորությունների մասին մի հայտարարություն է՝ իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ: Որպես կառավարման միջոց, լավ պլանավորված բյուջեն կարող է ՏԻՄ-երին օգնել՝ սահմանելու և գնահատելու համայնքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը: Այն հնարավորություն է տալիս բարձրացնելու համայնքի կառավարման պատասխանատվությունը և հաշվետու լինելու աստիճանը:

Որպես խթան

Բյուջեն կարող է օգտագործվել որպես խթանման միջոց՝ համապատասխան ներգրավվածություն ու նվիրվածություն ապահովելու նպատակով, որոշակի խթանիչ մեխանիզմների կիրառմամբ: Բյուջեն առաջադրված նպատակները և ձեռքբերված նվաճումները համադրելու, ինչպես նաև սահմանված խնդիրները և փաստացի ստացված արդյունքները համեմատելու լավ միջոց է: Համայնքային ստորաբաժանումներն առավել արդյունավետ կգործեն, եթե նրանք հստակ պատկերացնեն իրենց վերջնանպատակը և դրան հասնելու եղանակները:

Որպես ֆինանսական հսկողության կառուցակարգ

Որպես ֆինանսական հսկողության կառուցակարգ, բյուջեն կարող է դիտվել որպես միջոց, որով սահմանվում է կոնկրետ կատարողի պատասխանատվության չափը: Բյուջեն հնարավորություն է ստեղծում իրականացնել հսկողություն և վերահսկողություն կատարող ստորաբաժանման գործունեության նկատմամբ:

Որպես հաղորդակցման կառուցակարգ

Բյուջեն հնարավորություն է տալիս քաղաքացիներին, ՏԻՄ-երին, քաղաքականություն մշակողներին, պոտենցիալ ներդրողներին, պետական, հասարակական ու մասնավոր հատվածների ներկայացուցիչներին և այլ անձանց պարզորոշ ըմբռնել համայնքի հիմնախնդիրները, զարգացման միտումները և այլընտրանքները: Բյուջետային փաստաթուղթը պետք է պարունակի համայնքի գործունեությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվություն: Հարկ եղած դեպքում, պետք է բերել համապատասխան աղյուսակներ, գծապատկերներ ու գրաֆիկներ, որոնք ավելի մատչելի կդարձնեն բյուջեում ներառված ֆինանսական և վիճակագրական տվյալները:

Որպես ժողովրդավարության հաստատման միջոց

Ի սկզբանե, բյուջետային գործընթացի կարևորագույն նպատակներից մեկը համայնքում ժողովրդավարության հաստատմանը նպաստելն է: Հանրությունը պետք է ազատորեն արտահայտի իր կամքը, իսկ ՏԻՄ-երը՝ բաց լինեն հանրության կողմից կառուցողական քննադատության համար: Բյուջեն համայնքի ֆինանսական միջոցների նկատմամբ հանրային հսկողություն իրականացնելու լավագույն միջոցն է:

Բյուջեի տեսակները

Համայնքի բյուջետավարման գործում կարևոր նշանակություն ունի բյուջեի տեսակի ընտրությունը, որով էլ պայմանավորված է համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման բովանդակությունը: Համայնքներում օգտագործվող բյուջեների տեսակների ընտրությունը մեծ չափով պայմանավորված է գործող բյուջետային օրենսդրության պահանջներով ու առանձնահատկություններով և այն հնարավորություններով ու կարողություններով, որոնք առկա են տվյալ համայնքում:

Բյուջեի յուրաքանչյուր տեսակ ունի իր առավելություններն ու թերությունները: Ստորև դիտարկվում են համայնքի բյուջեի երեք տեսակների առավելություն-

ները և թերությունները, որոնց վերլուծությունից էլ կախված է, գործող բյուջետային օրենսդրության շրջանակներում, նրանց կիրառման նպատակահարմարության և հնարավորության վերաբերյալ կոնկրետ համայնքի որոշման կայացումը:

ԲՅՈՒՋԵԻ ԵՐՆՔ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բյուջեի տեսակները	Բնութագրերը	Տրվող հարցը	Չափանիշները
Ըստ ծախսատեսակների (հողվածային)	Ծախսեր և եկամուտներ՝ կապված գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հետ	Ի՞նչ է գնվելու	Վերահսկման հնարավորություն
Ծրագրային	Ծախսեր և եկամուտներ՝ կապված հանրային նպատակների հետ	Ի՞նչ նպատակի ենք հասնելու	Պլանավորման ներգործություն
Ըստ աշխատանքների կատարման արդյունքների	Ծախսեր և եկամուտներ՝ կապված աշխատանքների արդյունքների հետ	Ի՞նչ արդյունքներ են ստացվելու	Կառավարման արդյունավետություն

Ծախսային բյուջե

Ծախսային (հողվածային) բյուջեն ըստ ծախսատեսակների դասակարգված ֆինանսական փաստաթուղթ է, որը սահմանում է, թե ինչ գումարներ կծախսվեն յուրաքանչյուր ծախսային հողվածի գծով: Այս տեսակի բյուջեներում հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է այն բանի վրա, թե ի՞նչ է գնվելու, կամ թե ինչքա՞ն է ծախսվելու ինչի՞ համար: Ծախսերը դասակարգվում են ըստ խմբերի, ինչպիսիք են՝ աշխատավարձը, սուբսիդիաները, դրամաշնորհները, ձեռքբերվող ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները և այլն: Ծախսային բյուջեն համարվում է բյուջեի պարզագույն տեսակ: Այսպիսի բյուջեի միջոցով որոշակի հնարավորություններ կան վերահսկելու ֆինանսական միջոցների հոսքե-

րը, որն արտահայտվում է միայն ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների գնման համար պլանավորված և փաստացի ծախսված գումարները վերահսկելով:

Չնայած մշակման պարզությանը՝ ծախսային բյուջեն ոչ մի տեղեկատվություն չի պարունակում որևէ ծրագրի, արդյունքի, համայնքային ծառայությունների և ծախսողների վերաբերյալ: Աշխատավարձի, մատակարարման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքների գծով կատարված ծախսերի և դրանց ծավալների մասին տեղեկատվությունը շատ բան չի ասում կոնկրետ աշխատանքների կատարման արդյունքների մասին՝ քանի՞ մարդ կօգտվի ծրագրի իրականացումից, քանի՞ կիլոմետր փողոց կմաքրվի, քանի՞ երեխա կսպասարկվի մանկապարտեզում, ի՞նչ չափանիշներով է ընտրված այդ ծախսը կատարելու առաջնահերթությունը, ովքե՞ր են կատարվող ծախսի շահառուները և այլն: Այս հարցերին պատասխանելու համար պետք է ծախսերը դասակարգել ըստ ծրագրերի կամ ըստ աշխատանքների կատարման արդյունքների:

Ստորև բերվում է օրինակ, հատված՝ համայնքի ծախսային բյուջեից:

Հատված՝ համայնքի ծախսային բյուջեից

Բաժին - 09		ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
Խումբ - 1, Դաս - 1		Նախադպրոցական կրթություն
Կազմակերպություն		Թիվ 2 մանկապարտեզ
Ընթացիկ ծախսեր՝ ըստ տնտեսագիտական դասակարգման		
Կոդ	Հոդված	Գումար (հազ. դրամ)
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1200.0
4131	Սոցիալական ապահովության վճարներ	405.0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ	35.0
4236	Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	2170.0
4212	Էներգետիկ ծառայություններ	90.0
4213	Կոմունալ ծառայություններ	51.4
4214	Կապի ծառայություններ	18.0
4221	Ներքին գործուղումներ	126.0
4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	38.0
Ընդամենը ընթացիկ ծախսեր		4133.4

Ծախսային բյուջեի մշակման և հաստատման գործընթացը համեմատաբար քիչ աշխատատար է, այն հիմնականում բաղկացած է հետևյալ փուլերից՝

- համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից բյուջեի նախագծի մշակում,
- համայնքի ղեկավարի մոտ մշակված բյուջեի նախագծի քննարկում և դրա արդյունքներով լրամշակում,
- համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի նախագծի քննարկում և հաստատում:

Ծախսային բյուջեն բավարար չափով չի ապահովում կապը բյուջետավարման և ՏԻՄ գործունեության կառավարման միջև: Հաճախ բյուջեով կոնկրետ աշխատանքի համար նախատեսված գումարներն ամբողջությամբ ծախսվում են, սակայն անհրաժեշտ արդյունքին հասնելու փաստը կամ չհասնելու պատճառները մնում են բյուջետավարման գործընթացից դուրս: Ծախսերի նախատեսված սահմանների չգերազանցումը ծախսերի վերահսկման (կամ հաշվապահական հաշվառման) գործառույթ է, մինչդեռ նախատեսված աշխատանքների որակյալ և լիարժեք կատարումը կամ թերակատարումը ՏԻՄ գործունեության կառավարման խնդիր է:

Չունենալով լուրջ մասնագիտական գիտելիքներ և բյուջետավարման բավարար փորձ՝ բազմաթիվ համայնքներ իրենց տարեկան բյուջեները հիմնականում կազմում են ըստ ծախսային հոդվածների: Այդ բյուջեները «ծախսային» տեսակի են և չեն պարունակում լուրջ տեղեկատվություն իրականացվելիք աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալների և որակի մասին:

Թեպետ համայնքի բյուջեի կազմման համար, համաձայն օրենքի, որպես հիմք պետք է ծառայի համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, սակայն հաճախ համայնքներում (հատկապես գյուղական համայնքներում) այդ ծրագիրը պատշաճ չի կազմվում կամ կրում է ձևական բնույթ, և շատ համայնքային բյուջեներ ոչ մի կապ չեն ունենում իրենց համայնքների զարգացման միջնաժամկետ ծրագրերի և դրանցից ակնկալվող արդյունքների հետ:

Բազմաթիվ համայնքներ իրենց բյուջեները կազմում են որպես ծախսերի և եկամուտների նախահաշիվներ, առանց լուրջ կանխատեսումների և իրականացվելիք ծրագրերի հաշվի առնման: Մասնավորապես, ՏԻՄ-երը հաճախ բյուջեների հարկային եկամուտների հիմնավորված կանխատեսումներ չեն կատարում, դրանց մուտքային մասում ուղղակիորեն նախատեսում են հարկային եկամտա-

տեսակների (հողի հարկ, գույքահարկ) տարեկան հաշվարկային գումարները՝ ավելացրած նախորդ տարիներից փոխանցված ապառքների և տուլժերի մի մասը: Նման ձևով կազմված բյուջեների եկամուտների կատարման վերահսկումը գործնականում դառնում է անհնարին, և արդյունքում բյուջեները թերակատարվում են: Եթե հաշվի առնենք նաև այն, որ համայնքների բյուջեների մուտքերը և ելքերը պետք է լինեն հավասարակշռված, ապա ոչ ճիշտ կանխատեսված (ուռճացված) եկամուտներով բյուջեների ծախսային մասում որոշ հողվածների ամբողջական կատարումը դառնում է անհրատեսական: Նման ուռճացված ծախսային հողվածներ պարունակող բյուջեներում, շատ դեպքերում, համայնքի ղեկավարն ինքնուրույն է սահմանում ծախսերի առաջնահերթությունները՝ հարցականի տակ դնելով համայնքի ավագանու մասնակցությունը բյուջեի ծախսերի առաջնահերթությունների սահմանման գործում:

ՀՀ-ում կան բազմաթիվ փոքր համայնքներ, որոնց բյուջետային միջոցները չեն բավարարում լուրջ աշխատանքներ կատարելու ու ծառայություններ մատուցելու համար և հիմնականում ծախսվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման վրա: Այդ համայնքների ՏԻՄ-երում չկան ֆինանսական մասնագետներ և բյուջետավարման ամբողջ գործընթացն ապահովում են հաշվապահները, իսկ բյուջեները հիմնականում կազմվում են մարզպետարանների ակտիվ խորհրդատվությամբ, երբեմն նույնիսկ՝ անմիջապես վերջիններիս աշխատակիցների ուժերով:

Սրան զուգահեռ, քաղաքային համայնքների մեծ մասում բյուջետավարման ոլորտում կան որոշակի դրական տեղաշարժեր: Այդ համայնքներում իրականացվում են բյուջեի եկամուտների կանխատեսման, համայնքի իրավիճակի գնահատման, իրականացվելիք ծրագրերի կազմման, բյուջեների նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման և այլ աշխատանքներ: Այս համայնքներից շատերում որոշակիորեն լուծված են որակյալ կադրերի, համայնքի իրավիճակային տեղեկատվության հավաքագրման և համակարգչային մշակման, բյուջետավարման գործընթացի թափանցիկության ու հրապարակայնության, առաջավոր փորձի ծանոթացման ու ներդրման և այլ նմանատիպ հիմնահարցերը: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ ՀՀ քաղաքային համայնքներից շատերը ներկայումս պատրաստ են կազմելու և կատարելու «ծախսային» տեսակի բյուջեից ավելի բարդ՝ «ծրագրային» կամ «ըստ աշխատանքների կատարման արդյունքների» բյուջեներ:

Ծրագրային բյուջե

Ծրագրային բյուջեն նախատեսում է այլ մոտեցումներ բյուջետավարման գործում: Ուշադրության կենտրոնում այստեղ ոչ թե համայնքի կողմից կատարվող «գնումներն» են, այլ իրականացվող ծրագրերը: Այս բյուջեի պայմաններում միջոցները հատկացվում են գործունեության տեսակներին ու ծրագրերին՝ նկարագրելով աշխատանքների ծավալները և սպասվող արդյունքները, որոնք բխում են ՏԻՄ-երի որդեգրած համայնքային քաղաքականությունից ու նպատակներից: Օրինակ՝ ճանապարհային տնտեսության բնագավառում բարեկարգման աշխատանքների գծով նախատեսվում է որոշակի գումար համայնքի փողոցների վերանորոգման համար: Այդ աշխատանքները կազմակերպելու համար, կազմվում է ներհամայնքային փողոցների վերանորոգման ծրագիր, որտեղ նշվում են նպատակները և պլանավորվող կոնկրետ աշխատանքները: Սրան զուգահեռ, հաշվարկվում և բյուջեում նախատեսվում են այն ֆինանսական միջոցները, որոնք անհրաժեշտ են սահմանված նպատակներին հասնելու համար: Այս բյուջեն, որպես հիմնավորում, իր մեջ ներառում է ծախսային հոդվածների մանրամասնություններ: Այստեղ կարևորությունը տրվում է նպատակներին և ոչ թե դրանց հասնելու միջոցներին:

Ծրագրային բյուջեն համատեղում է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ՏԻՄ-երի կողմից իրականացվող բյուջետային քաղաքականությունը և ակնկալվող արդյունքները: Այս տեսակի բյուջեում շեշտը դրվում է համայնքային խնդիրների իրականացման վրա, որտեղ եկամուտները և ծախսերը փոխկապակցվում են այն ծրագրերի հետ, որոնք համապատասխանում են սահմանված քաղաքականությանը, նպատակներին և խնդիրներին:

Այսպիսով՝ ծրագրային բյուջեն հաստատում է աշխատանք-փող կապը, որտեղ ծախսերը վերագրվում են այն բանին, թե ինչու՞ և ի՞նչ է արվելու, ո՞վ է դա անելու, ի՞նչ է ստացվելու կամ ձեռք բերվելու և ինչպե՞ս է դա արվելու:

Ծրագրային բյուջեի մշակումն ավելի շատ ժամանակ և աշխատանք է պահանջում, քան ըստ ծախսատեսակների բյուջեինը: Պարզ է, որ առանց համայնքի վերաբերյալ համապարփակ տեղեկատվական բազայի առկայության, առանց համայնքային հիմնախնդիրների լիարժեք պատկերացման և առանց համայնքի ուժեղ և թույլ, վտանգ սպառնացող և զարգացմանը նպաստող կողմերի գիտակցման, ՏԻՄ-երի համար անհնարին է կազմել ծրագրային բյուջե: Այստեղից հետևում է, որ ծրագրային բյուջետավարման գործընթացի իրականացման համար համայնքի աշխատակազմը պետք է համալրված լինի համապատասխան

արհեստավարժ մասնագետներով և տիրապետի համայնքի իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությանը:

Ծրագրային բյուջեի առավելությունների շարքում հատկապես կարևոր է նշել համայնքի բնակչության ներգրավման հնարավորությունը և անհրաժեշտությունը: Համայնքի զարգացման քաղաքականության մշակման ժամանակ բնակչության մասնակցությունը առավել նպատակային և հասցեական է դարձնում համայնքի բյուջեն՝ այն ուղղելով համայնքի առջև ծառայած հիմնախնդիրների լուծմանը և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Համայնքի բնակչության կողմից բյուջեի կատարման վերահսկումը բյուջետային գործընթացը դարձնում է ավելի թափանցիկ ու հրապարակային՝ նպաստելով բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանը:

Ստորև բերվում է օրինակ, հատված՝ համայնքի ծրագրային բյուջեից:

Հատված՝ համայնքի ծրագրային բյուջեից

Բաժին - 09	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
<p>Նկարագրություն</p> <ul style="list-style-type: none"> ❖ Կազմակերպում է համայնքային նախադպրոցական (մանկապարտեզներ) և արտադպրոցական (պատանի տեխնիկների կայան, մանկական ստեղծագործության կենտրոն և այլն) հիմնարկների աշխատանքը: ❖ Մշակում և իրականացնում է կրթական ծրագրեր: ❖ Մասնակցում է կրթությանն ուղղվող ֆինանսական միջոցների ծավալների որոշմանը և հսկողություն սահմանում դրանց նպատակային և արդյունավետ օգտագործման վրա: ❖ Կոորդինացնում է ազգային արհեստների և զեղարվեստական ինքնագործունեության զարգացմանն ուղղությամբ տարվող աշխատանքները: <p>Նպատակներ</p> <ul style="list-style-type: none"> ❖ Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ձևավորել սոցիալական հարմարվողականության և համակեցության վարքագիծ: ❖ Ամրապնդել գիտելիքների և գործնական հմտությունների փոխադարձ կապ: <p>Խնդիրներ</p> <ul style="list-style-type: none"> ❖ Կոորդինացնել համայնքի կրթության բնագավառում գործող ___ հիմնարկների աշխատանքը, որտեղ ընդգրկված է շուրջ ___ երեխա: 	
Խումբ - 1 Դաս 1	Նախադպրոցական կրթություն
Կազմակերպություն	Թիվ 2 մանկապարտեզ
<p>Նկարագրություն</p> <ul style="list-style-type: none"> ❖ Մանկապարտեզի նախագծային հզորություն - 100 երեխա/տեղ ❖ Մանկապարտեզի փաստացի ծանրաբեռնվածություն - 75 երեխա ❖ Աշխատողների փաստացի թվաքանակ - 25 մարդ ❖ Մանկապարտեզի շենքն ապահովված է՝ <ul style="list-style-type: none"> • լոկալ ջեռուցում • հեռախոսակապ • ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ ❖ Այլ տեղեկատվություն 	

Խնդիրներ		
❖ 2010թ. ընթացքում ապահովել 75 երեխաների (3խումբ) 8-ժամյա սպասարկում		
❖ այլ		
Ընթացիկ ծախսեր		
Կոդ	Հոդված	Փումար (հ.դրամ)
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1200.0
4131	Սոցիալական ապահովության վճարներ	405.0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ	35.0
4236	Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	2170.0
4212	Էներգետիկ ծառայություններ	90.0
4213	Կոմունալ ծառայություններ	51.4
4214	Կապի ծառայություններ	18.0
4221	Ներքին գործուղումներ	126.0
4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	38.0
Ընդամենը ընթացիկ ծախսեր		4133.4

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջե¹

Ինչպես բյուջեի եկամուտները, այնպես էլ ծախսերը կարելի է որոշել տարբեր մեթոդներով ու ձևաչափերով: Բյուջեի եկամուտների կանխատեսման մեթոդների ընտրությունը կարևոր է իրատեսական բյուջե պլանավորելու առումով, սակայն բյուջեի փաստացի մուտքերն ապահովելու հարցը կախված է ոչ միայն դրանից: Մինչդեռ, բյուջեի ծախսերի պլանավորման և կատարման ձևաչափի ընտրությունը չափազանց կարևոր է ծախսերի արդյունավետության և վերջնական արդյունքների ստացման տեսանկյունից: Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն առանձնանում է հենց ծախսերի պլանավորման ու կատարման յուրահատուկ ձևաչափով:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն ուղղված է դեպի տվյալ հանրային իրավունքի սուբյեկտի (կառավարության կամ համայնքի) գործունեության արդյունքները: Այն ցույց է տալիս, թե ի՞նչ արդյունքներ ձեռք կբեր-

¹ Դ. Թումանյան, Վ. Մովսիսյան. «Տեղական ինքնակառավարման համակարգում ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման ձեռնարկ», ՄԱԶԾ, «Ի-Դի-Ար-Սի Քոնսալթինգ» ՍՊԸ, Երևան, 2006


վեն՝ տվյալ աշխատանքը կատարելիս կամ բյուջետային ծրագիրն իրականացնելիս, և թե ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ՝ տվյալ աշխատանքի կամ ծրագրի քանակական և որակական արդյունքների ձեռքբերման համար:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն պատասխանում է հետևյալ հարցերին՝

- Ի՞նչ արդյունքներ ձեռք կբերվեն,
- Ի՞նչ ազդեցություն կլինի հասարակության վրա,
- Ի՞նչ ազդեցություն կլինի սպառողների (շահառուների) վրա,
- Որքա՞ն գումար կծախսվի տվյալ աշխատանքը կատարելու կամ ծառայությունը մատուցելու վրա:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն ընդգրկում է համայնքի ռազմավարական (մասնավորապես, զարգացման քառամյա) ծրագրի իրականացման տարեկան (բյուջետային) ծրագիրը և բյուջեն, որոնք արտացոլում են ռազմավարական ծրագրի ֆինանսավորման և սպասվող արդյունքների միջև փոխհարաբերակցությունները: Այն ներկայացնում է՝ ո՞ր նպատակին կամ նպատակների խմբին է անհրաժեշտ հասնել տվյալ ծավալի ծախսեր կատարելով, և կապ է ստեղծում ծախսվող դրամի ու աշխատանքի կատարման արդյունքների միջև, ինչպես նաև ցույց է տալիս այդ փոխհարաբերությունների ձևավորման ձևաչափը: Դա ռազմավարական ծրագիրն արդյունավետ իրականացնելու հիմնական միջոցներից է:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն նախատեսում է բյուջետային ծրագրի իրականացման բոլոր գործողությունները և ընդգծում է յուրաքանչյուր գործողության կատարման համար անհրաժեշտ ծախսերը: Այն կարելի է պատկերել հետևյալ ձևով՝



Ծրագրի ղեկավարներն իրենց ռեսուրսներն արդյունավետ կառավարելու համար պետք է ժամանակին ունենան ճշգրիտ տեղեկատվություն ծախսերի և աշխատանքների կատարման վերաբերյալ: Դրա կարևոր պայմանն է գործողու-

թյուններն իրականացնող պատասխանատուների և աշխատանքների կատարման ցուցանիշների հստակ սահմանումը:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն հաշվետվողականության ապահովման կարևոր միջոց է: Այն հստակ և պարզ ձևով ցույց է տալիս, թե տվյալ արդյունքն ստանալու (ծառայությունը մատուցելու) համար ի՞նչ միջոցներ են ծախսվել: Բյուջեի այս տեսակը մատչելի և հասկանալի է նաև համայնքի ավագանու անդամների և քաղաքացիների համար:

Սահմանում. Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն համայնքի առաքելության, նպատակների ու խնդիրների սահմանման և, որպես բյուջետային գործընթացի մաս, պարբերաբար դրանց արդյունքների գնահատման ֆինանսական ծրագիր է, որը կապ է հաստատում համայնքի ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների և ակնկալվող արդյունքների միջև:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեի մշակումը կատարվում է միաժամանակ վերևից ներքև և ներքևից վերև: Տեղական մակարդակում համայնքի ղեկավարը և ավագանին պետք է նախանշեն համայնքի զարգացման ռազմավարական նպատակները և խնդիրները, դրանց հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսները, սահմանեն այն ցուցանիշներն ու չափանիշները, որոնց միջոցով հնարավոր կլինի պարզել, թե արդյո՞ք ձեռք են բերվել այդ նպատակները և ռեսուրսները ծախսվել են արդյունավետ ձևով: Այդ բոլորը պետք է արվի համայնքի ղեկավարի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումների և համայնքային կազմակերպությունների ղեկավարների (պատասխանատուների) անմիջական մասնակցությամբ, ինչպես նաև համայնքի բնակչության ու ակտիվ խմբերի ներգրավմամբ: Համայնքային ստորաբաժանումների ու կազմակերպությունների ղեկավարներն ու պատասխանատուներն ավելի լավ են պատկերացնում իրենց ոլորտում տիրող իրավիճակը և կարող են կազմել տարեկան ծրագրի աշխատանքների կատարման առավել իրատեսական պլաններ: ՏԻՄ-երի, համայնքի ղեկավարի աշխատակազմի ու համայնքային կազմակերպությունների նման սերտ համագործակցության արդյունքում, բոլոր մակարդակների ղեկավարները ոչ միայն մանրակրկիտ պլանավորում են տարեկան ծրագրի և ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեի ուղղակի ու անմիջական կապը, այլև ապահովում են դրանց կատարման հաջողությունը:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեի ընձեռած հնարավորությունները

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջետավարումը նշանակում է նոր որակի և մակարդակի կառավարում: Այն անընդհատ գործընթաց է, որտեղ ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների բոլոր մակարդակների ղեկավարները (պատասխանատուները): Նման ձևով կառավարումը դառնում է հետադարձ կապ ապահովող շրջան, որը բոլոր մակարդակների ղեկավարներին հնարավորություն է տալիս թարմ տեղեկատվություն ստանալ կառավարման ամբողջ գործընթացում: Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն պահանջում է համայնքի ստորաբաժանումների և ենթակա կազմակերպությունների ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում: ՏԻՄ-երը պարտավոր են համայնքի ռեսուրսները բաշխել ռացիոնալ ձևով, որպեսզի հնարավոր լինի ձեռք բերել բյուջեով նախատեսված արդյունքները:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջետավարումը արդյունավետ միջոց է ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև ինտեգրացված կապ ձևավորելու համար: Ստորաբաժանումների ու ծրագրերի ղեկավարները հնարավորություն են ստանում անմիջականորեն առնչվել ներդրող ռեսուրսների և ակնկալվող արդյունքների միջև բարդ փոխազդեցությունների հետ և մշակել դրանց կարգավորման սեփական «խաղի կանոնները»: Ընդհանուր առմամբ, դա բարելավում է ծրագրի կառավարումը, բարձրացնում է ծրագրի իրականացման արդյունավետությունը, հնարավորություն է տալիս վերլուծել ու գնահատել ծրագրի գործողությունների արդյունքները և ավելի շատ տեղեկատվություն է տրամադրում բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակի մասին:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն ապահովում է բյուջետային ծրագրի քայլերի ու գործողությունների կատարման մեծ թափանցիկություն: Օգտագործելով սահմանված գործողությունների ու հաշվարկված ծախսերի չափորոշիչները, որպես ծրագրի նպատակների իրականացման և արդյունքների ստացման հիմք, ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեի միջոցով գնահատվում է, թե ինչպե՞ս են ծախսերի փոփոխությունները

ազդում արդյունքների վրա: Դա բյուջեի հիմնավորման և թափանցիկության ապահովման կարևոր պայմաններից է:

Քանի որ այս տեսակի բյուջեում կիրառվում են ծախսերի հաշվարկման սահմանված ընթացակարգեր ու մեթոդներ, ապա բյուջեն դառնում է ավելի հասկանալի ու ընդունելի: Բացի դրանից, հստակ սահմանվում են սպասվող արդյունքները և դրանց վերաբերյալ տրվում է հաշվետվություն, որի շնորհիվ համայնքի բնակիչները կարող են ավելի լավ հասկանալ, թե ինչի՞ վրա են ծախսվել բյուջեի միջոցները և դրա արդյունքում ի՞նչ է ստացվել: Դա ոչ միայն բյուջեի հիմնավորման կարևոր պայմաններից է, այլև բարձրացնում է բյուջեի կատարման թափանցիկությունը: Այդպիսով, բոլոր շահագրգիռ կողմերը կարող են հետևել, թե բյուջետային ի՞նչ միջոցներ են ծախսվում և ի՞նչ արդյունքներ են ստացվում:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջետավարումը ձևավորում է վերահսկման արդյունավետ կառուցակարգ: Համայնքի ղեկավարը և ավագանին հեշտությամբ կարող են վերահսկել հստակորեն սահմանված նպատակների, խնդիրների ու գործողությունների իրականացումը և դրանց կատարման համար նախատեսված ծախսերը: Յուրաքանչյուր գործողության կատարման համար ծախսի նախատեսումը և հաշվարկումը, ինչպես նաև դրա ուղղվածությունը դեպի որոշակի խնդրի լուծումը, դրա վերահսկումը դարձնում է ավելի հեշտ և արդյունավետ:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն պարունակում է օգտակար համեմատական տեղեկատվություն: Այն հիմնվում է մատուցվող ծառայության միավորի (օրինակ՝ մեկ երեխային ընկնող) ծախսի վրա: Եթե որոշ համայնքներ կարողանան իջեցնել ծառայության միավորի ծախսը, ապա դա կարող է դառնալ առաջավոր փորձ և ինչ-որ տեղ վարակիչ այլ համայնքների համար: Ծրագրերի ղեկավարները կարող են նաև օգտագործել համեմատական տեղեկատվություն՝ իրենց գործողությունների արդյունավետությունն ու որակը բարձրացնելու նպատակով:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջետավարումը ՏԻՄ-երին հնարավորություն է տալիս ավելի հիմնավորված և օբյեկտիվ որոշումներ կայացնել համայնքային ծառայությունների մատուցման վերաբերյալ: Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջետավարման դեպքում, համայնքի ղեկավարի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները պետք է

ամբողջական պատկերացում ունենան աշխատանքի կամ ծառայության յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ ծախսերի, առկա վիճակի մասին և պարբերաբար ՏԻՄ-երին ներկայացնեն տեղեկատվություն, զեկույցներ ու հաշվետվություններ ընթացիկ վիճակի վերաբերյալ, որոնց հիման վրա ՏԻՄ-երը կարող են կայացնել ավելի հիմնավորված որոշումներ:

Բյուջեի՝ վերևում ներկայացված այս կամ այն տեսակին նախապատվություն տալուց առաջ, անհրաժեշտ է ոչ միայն համեմատել դրանց առավելություններն ու թերությունները, այլև գնահատել գոյություն ունեցող հնարավորություններն ու ռեսուրսները: Օրինակ, այն, որ ծախսային բյուջեի կազմելն ավելի հեշտ է և դա հնարավոր է իրականացնել՝ առանց ունենալու համապատասխան տեղեկատվական բազա և մասնագետներ, թվացյալ առավելություն է, և հաճախ այս տեսակի բյուջեն օգտագործում են՝ ավելի շատ ստիպված լինելով, քան նախընտրելով:

Ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջեն և ծրագրային բյուջեն ունեն բազմաթիվ ընդհանուր գծեր և նմանություններ, վերևում թվարկված հնարավորությունները հավասարապես բնորոշ են նաև ծրագրային բյուջեին: Դրանք երկուսն էլ կենտրոնանում են ծրագիր-աշխատանքներ-ծախսեր կապերի վրա՝ կարևորելով աշխատանքների կատարման արդյունավետությունը, իսկ ծրագրային ու ֆինանսական կանխատեսումներն ու հաշվետվությունները խստորեն կապվում են միմյանց հետ:

Հաճախ համայնքներն օգտագործում են բյուջետավարման խառը տարբերակներ՝ զուգակցելով ծախսային, ծրագրային ու ըստ աշխատանքների կատարման արդյունքների բյուջետավարման առանձին տարրերը, բայց ոչ ամբողջական որևէ տեսակի բյուջե: Դա արդեն մասնագիտական քննարկումների ու բյուջետային օրենսդրական բարեփոխումների իրականացման առանձին թեմա է, որը կարիք է զգում քաղաքական նոր որոշումների կայացման՝ հիմնված միջազգային փորձի և լուրջ հետազոտությունների ու վերլուծությունների վրա:

2. ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՍՎԱՐԳԸ ԵՎ ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ


ՀՀ բյուջետային համակարգը

Պետության ֆինանսական համակարգի առանձնահատուկ մասն է կազմում բյուջետային համակարգը, որը՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով (հոդված 3) սահմանված իրավունքի նորմերով կարգավորվող ՀՀ տնտեսական հարաբերությունների և ՀՀ պետական կառուցվածքի վրա հիմնված, հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է (տե՛ս գծապատկեր 1)՝

1. Առաջին մակարդակ՝ պետական բյուջե,
2. Երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ:

Հանդիսանալով բյուջետային մեկ համակարգի բաղադրամասեր՝ պետական և համայնքների բյուջեները հիմնվում են ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա: Բյուջետային համակարգի հիմքում դրված ընդհանուր սկզբունքների նկարագրությունը բերվում է ստորև:

Գծապատկեր 1. ՀՀ բյուջետային համակարգի և համախմբված բյուջեի կառուցվածքները



ՀՀ պետական բյուջեն և ՀՀ համայնքների բյուջեները միասին կազմում են ՀՀ համախմբված բյուջեն (տե՛ս «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 4, ինչպես նաև գծապատկեր 1):

Պետական և համայնքների բյուջեները, որպես բյուջետային համակարգի և համախմբված բյուջեի բաղկացուցիչ մասեր, սերտորեն կապված են միմյանց հետ և, այս առումով, այդ համակարգի արդյունավետ կառավարման կարևոր հիմքերից մեկը բյուջետային հարաբերությունների հստակ և արդյունավետ կարգավորումն է: Այն իրականացվում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, որպես բյուջետային համակարգի կազմակերպման, դրա կառուցվածքի սահմանման, բյուջետային դասակարգման, բյուջեների միջև եկամուտների բաշխման, բյուջեների կատարման, վերահսկման, հաշվետվությունների կազմման և բյուջեներում փոփոխությունների ու լրացումների կատարման ուղղությամբ իրավասու մարմինների՝ օրենքով նրանց վերապահված լիազորությունների սահմաններում իրականացվող գործունեություն:

Բյուջետային համակարգի հիմքում դրվող սկզբունքները

(համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի)

1. ***Բյուջետային համակարգի միասնականության սկզբունքը*** նշանակում է իրավական հիմքի, դրամական համակարգի, բյուջետային դասակարգման, բյուջետային գործընթացի սկզբունքների, բյուջետային փաստաթղթերի ձևերի, բյուջետային օրենսդրության խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցների միասնություն, ինչպես նաև բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեների մուտքերի հաշվառման և ելքերի ֆինանսավորման վարման միասնական կարգ:

2. Բյուջետային համակարգում տարբեր մակարդակների բյուջեների միջև ***բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատման սկզբունքը*** նշանակում է պետական և համայնքների բյուջեներին բյուջետային մուտքերի համապատասխան տեսակների (ամբողջապես կամ մասնակիորեն), ինչպես նաև այդ բյուջեներից ելքերի իրականացման գծով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների ամրագրում:

3. ***Բյուջեների ինքնուրույնության սկզբունքը*** նշանակում է՝

ա) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ բյուջետային համակարգի յուրաքանչյուր մակարդակում օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն իրականացնել բյուջետային գործընթացը,

բ) բյուջետային համակարգի յուրաքանչյուր մակարդակի բյուջեների մուտքերի՝ օրենսդրությանը համապատասխան որոշվող սեփական աղբյուրների առկայություն,

գ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ օրենսդրությանը համապատասխան, ինքնուրույն որոշելու համապատասխան բյուջեների միջոցների ծախսման ուղղությունները,

դ) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ օրենսդրությանը համապատասխան ինքնուրույն որոշելու համապատասխան բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները,

ե) բյուջեների մասին օրենքների (որոշումների) կատարման ընթացքում չստացված մուտքերի և լրացուցիչ ելքերի՝ բյուջետային համակարգի այլ մակարդակի բյուջեների հաշվին փոխհատուցման անթույլատրելիություն:

4. *Բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվության սկզբունքը* նշանակում է, որ օրենսդրությամբ սահմանված բյուջեների մուտքերը և ելքերը պարտադիր կարգով և ամբողջ ծավալով ենթակա են արտացոլման բյուջեներում: Պետական և համայնքների բյուջեների բոլոր ելքերը ենթակա են ֆինանսավորման բյուջետային համակարգում կուտակված բյուջետային միջոցների հաշվին:

5. *Բյուջեների հաշվեկշռվածության սկզբունքը* նշանակում է, որ բյուջեով նախատեսված ելքերի ծավալը չպետք է գերազանցի մուտքերի ծավալին:

6. *Բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածության սկզբունքը* նշանակում է, որ բյուջեի բոլոր ելքերը պետք է ծածկվեն բյուջեի մուտքերով: Մուտքերը չեն կարող կապվածություն ունենալ որոշակի ելքերի հետ, բացառությամբ նպատակային բյուջետային մուտքերի ստացման դեպքերի, կամ օրենսդրությամբ նպատակային բյուջետային ֆոնդերի ստեղծման դեպքում՝ դրանց մուտքերի:

7. *Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը* նշանակում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ, պետք է ելնել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտա-

գործնամբ, կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով՝ լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից:

8. ***Բյուջեների հրապարակայնության սկզբունքը*** նշանակում է՝

ա) հաստատված բյուջեների և դրանց կատարման մասին հաշվետվությունների պարտադիր հրապարակումը մամուլում, բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն,

բ) բյուջեների նախագծերի քննարկման և որոշումների ընդունման գործընթացի պարտադիր թափանցիկություն՝ հասարակության և զանգվածային լրատվության միջոցների համար: Ի տարբերություն պետական բյուջեի, համայնքների բյուջեների կազմում չեն կարող հաստատվել գաղտնի հոդվածներ:

9. ***Բյուջետային միջոցների հասցեագրվածության և նպատակայնության սկզբունքը*** նշանակում է, որ բյուջետային միջոցներն, օրենսդրությանը համապատասխան, հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ:

Բյուջետային միջոցների հատկացման ժամանակ, օրենսդրության շրջանակներից դուրս ցանկացած գործողություն, որը հանգեցնում է բյուջեով նախատեսված միջոցների հասցեագրվածության խախտմանը կամ այդ միջոցների ուղղմանը բյուջեով չնախատեսված նպատակներին, որակվում է որպես օրենսդրության խախտում:

10. ***Բյուջեների իրատեսության սկզբունքը*** նշանակում է համապատասխան տարածքի (երկրի, համայնքի) զարգացման կանխատեսման և դրա հիման վրա բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման իրատեսություն:

Բյուջեների դրամական մուտքերը և ելքերը²

Բյուջետային եկամուտներն անվերադարձ կարգով, օրենսդրությանը համապատասխան, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են:

Բյուջետային ծախսերը պետության և տեղական ինքնակառավարման խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղվող դրամական միջոցներն են:

² Բյուջեների դրամական մուտքերի և ելքերի բովանդակությունն այստեղ մեկնաբանվում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ գործող օրենքի 9-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Բյուջետային մուտքերը ներառում են տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, ոչ ֆինանսական ակտիվների օտարումից, տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից ստացվող, ինչպես նաև փոխառու և ներգրավված այլ դրամական միջոցները:

Բյուջետային ելքերը ներառում են բյուջետային ծախսերը (ընթացիկ և կապիտալ ծախսեր), ինչպես նաև բյուջետային վարկերի ու փոխատվությունների տրամադրումը և ներգրաված փոխառու միջոցների մարումները:

Բյուջետային հատկացումները բյուջեն հաստատող իրավական ակտով բյուջետային միջոցներ ստացողի գծով նախատեսված բյուջետային միջոցներն են:

Կապիտալ ծախսերը (որոնք բյուջետային դասակարգման մեջ անվանվում են նաև «ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր») ներառում են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների, պետական ռազմավարական կամ համայնքային նշանակության պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը:

Ընթացիկ ծախսերը ներառում են այն ծախսերը, որոնք ընդգրկված չեն կապիտալ ծախսերում:

Բյուջետային հարաբերությունների կարգավորման կարևոր ուղղություններից մեկը բյուջեների միջև եկամուտների բաշխումն է: Կախված այն բանից, թե պետությունը օրենքով սահմանված կարգով ի՞նչ եկամուտներ, ի՞նչ սկզբունքներից ելնելով և ինչպե՞ս է ամրագրում բյուջեներին, պայմանավորում է դրանց ֆինանսական բազան, տրված լիազորությունների շրջանակներում խնդիրների լուծման հնարավորություններն ու մակարդակը: Տեղական ինքնակառավարում ապահովելու տեսանկյունից այս խնդրի լուծումը պահանջում է ՏԻՄ-երին տրված լիազորությունների իրականացմանը համարժեք ֆինանսական կայուն և ճկուն բազայի ապահովում համապատասխան մոտեցումներով (ամրագրվող եկամտի աղբյուրների բազմազանություն, բյուջեի կատարման ընթացքում առաջացած ֆինանսական դժվարությունների հաղթահարման ֆինանսական հնարավորությունների ընձեռում, այնպիսի մուտքերի ամրագրման գերակայություն, որոնք առավել իրական են և կախված չեն տնտեսական գործունեության արդյունքներից, օրինակ՝ գույքահարկը, հողի հարկը), ինչպես նաև ֆինանսական ինքնուրույնության

ապահովում՝ սեփական ֆինանսական միջոցների ձևավորման և ինքնուրույն ֆինանսական քաղաքականության իրականացման հնարավորության ընձեռում:

Պետական բյուջեի և համայնքների բյուջեների փոխհարաբերությունների կարգավորման խնդիրները, դրանց մուտքերի ձևավորման շրջանակներում, առնչվում են՝

ա) պետության կողմից ՏԻՄ-երին տրված պարտադիր և պատվիրակված լիազորությունների ֆինանսական ապահովմանը,

բ) կամավոր լիազորությունների իրականացման ուղղությամբ համայնքների ֆինանսական հիմքերի ապահովմանը,

գ) համայնքների ներդաշնակ զարգացման ֆինանսական հնարավորությունների առկա տարբերությունների նվազեցմանը,

դ) անհրաժեշտության դեպքերում պետական բյուջեից համայնքներին փոխառու միջոցների տրամադրմանը:

Պետության կողմից ՏԻՄ-երին տրված պարտադիր և պատվիրակված լիազորությունները, օրենսդրությամբ սահմանված կարգով, ենթակա են պարտադիր ֆինանսավորման և անընդմեջ կատարման: Այս պահանջի իրագործումը պետական բյուջեի և համայնքների բյուջեների փոխհարաբերությունների շրջանակներում կարգավորվում է տարբեր մոտեցումներով: Պարտադիր լիազորությունները պարտադիր ֆինանսավորվում են համայնքների բյուջեներին ամբողջական կամ մասհանումային տարբերակով ամրագրված հարկերից, տուրքերից, այլ եկամուտներից, ինչպես նաև պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհների հաշվին, իսկ պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին՝ օրենքով կամ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն:

Ինչ վերաբերում է համայնքների կողմից կամավոր լիազորությունների կատարմանը, ապա դրանք իրականացվում են ըստ հնարավորությունների՝ համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան՝ ավագանու որոշմամբ սահմանված կարգով:

Պետության և համայնքների բյուջետային հարաբերությունների մեջ առանցքային նշանակություն ունի համայնքներին պաշտոնական դրամաշնորհներ հատկացնելու խնդիրը: Բավական է նշել, որ ՀՀ ոչ քիչ համայնքներում պաշտոնական դրամաշնորհների չափաբաժինը հասնում է բյուջետային եկամուտների 50-80%-ի,

իսկ ՀՀ-ում միջին հաշվով այն կազմում է մոտ 50% (2007թ.՝ 47,1%, 2008թ.՝ 49,6%, 2009թ.՝ 56,8%): Պետության առջև կանգնած կարևորագույն հարցերից է պարզել իր նպատակներն այս ուղղությամբ և այնուհետև սահմանել, թե ի՞նչ տիպի պաշտոնական դրամաշնորհներ է հատկացնելու համայնքներին, ի՞նչ սկզբունքներով, ի՞նչ խնդիրների լուծման համար և ի՞նչ ծավալով:

Պետական բյուջեում առանձին հոդվածներով պլանավորվում և համայնքների բյուջեներին ամեն տարի տրամադրվում են երկու տեսակի պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիաների և սուբվենցիաների տեսքով: Դրանցից առաջինը՝ դոտացիան, որպես անհատույց հատկացում «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի համաձայն, տրվում է համայնքներին՝ նպատակ ունենալով կանխել դրանց զարգացման աստիճանների բևեռացումը, ապահովել դրանց ներդաշնակ զարգացումը: Ընդ որում, դոտացիաների ծախսման ուղղությունները սահմանում են ՏԻՄ-երը: Երկրորդը՝ սուբվենցիան, իրենից ներկայացնում է պետական բյուջեից համայնքների ընթացիկ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային անհատույց հատկացումներ, որոնք ՏԻՄ-երի կողմից ըստ նպատակի չիրացվելու դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

Դոտացիաների գումարները յուրաքանչյուր համայնքի հատկացվում են ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան գանձապետական ստորաբաժանումներում յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշիվների միջոցով՝ ըստ ամսական կամ եռամսյակային հատկացման ժամանակացույցի: Ինչ վերաբերում է սուբվենցիաներին, ապա ամեն տարի ՀՀ կառավարությունը որոշում է սուբվենցիաների տրամադրման չափանիշները և նախատեսված միջոցների բաշխումը՝ քննության առնելով համայնքների կողմից սուբվենցիա ստանալու նպատակով ներկայացված ներդրումային ծրագրերը (հայտերը):

Այս հատկացումների՝ դոտացիաների և սուբվենցիաների սահմաններում ՀՀ կառավարությունը պատասխանատվություն է կրում համայնքների առջև, իրենց հերթին համայնքները ևս պատասխանատվություն են կրում ՀՀ կառավարության առջև՝ ստացած հատկացումների արդյունավետ օգտագործման համար:

Բյուջետային վարկերը, փոխատվությունները և երաշխիքները

Պետական բյուջեից համայնքները կարող են ստանալ բյուջետային վարկեր և փոխատվություններ: ՀՀ կառավարությունը համայնքին կարող է տրամադրել նաև բյուջե-

տային երաշխավորագրեր: Բյուջետային վարկերի, փոխատվությունների և երաշխավորագրերի տրամադրման կարգերը սահմանում է ՀՀ կառավարությունը՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Բյուջետային վարկերը վերադարձելիության, ժամկետայնության, արժեքավորման ու վճարովիության սկզբունքով պետական բյուջեից համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին դրամական տեսքով տրվող միջոցներն են: Բյուջետային վարկեր են համարվում նաև՝

- կառավարության կողմից հաստատված որևէ ծրագրի շրջանակներում մի քանի իրավաբանական անձանց փոխադարձ պարտավորությունների կարգավորման հետևանքով պետական բյուջեի նկատմամբ որևէ իրավաբանական անձի՝ հարկային չհանդիսացող պարտավորությունները այլ իրավաբանական անձի վրա վերածնակերպման (պարտքի փոխանցման) գծով գործառնությունը,
- բյուջետային երաշխիքի վճարմամբ ծագող հետադարձ պահանջները,
- վարկառուի կողմից ըստ վարկային պայմանագրի դրամական տեսքով մարվող պետության կողմից ապրանքային տեսքով տրվող վարկերը (դրամական տեսքով մարվող գումարի չափով):

Բյուջետային փոխատվությունները վերադարձելիության, արժեքավորման և ժամկետայնության սկզբունքով առանց վճարովիության սկզբունքի պետական բյուջեից և համայնքների բյուջեներից համայնքներին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով դրամական տեսքով տրվող միջոցներն են: Համայնքներին բյուջետային փոխատվությունները տրվում են վեց ամսից ոչ ավելի տևողությամբ և փոխառուների կողմից ենթակա են վերադարձման նույն բյուջետային տարում:

Բյուջետային երաշխավորագիրը պարտավորություն է, որով երաշխավորվում է բյուջետային երաշխավորագիր ստացող անձի նկատմամբ համայնքի, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետության, միջազգային կազմակերպության պարտքային պարտավորությունների պատշաճ կատարումը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Երաշխավորված պարտքային պարտավորությունների չկատարմամբ պայմանավորված գումարները վճարվում են պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցների հաշվին և արտացոլվում են առանձին տողով:

Բյուջետային երաշխավորագիրը (երաշխիքը) կազմվում է առանձին փաստաթղթի ձևով և ստորագրվում է միայն պետական ֆինանսների կառավարման լիազոր պետական մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի կողմից: Այլ գրավոր գործարքներում նախատեսված երաշխավորության մասին դրույթներն իրավական ուժ չունեն, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դրույթների:

Բյուջետային երաշխավորագրերի (երաշխիքների) տրամադրման դիմաց պետական բյուջեի օգտին կարող է գանձվել վճար:

Տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ ՀՀ անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը:

Երաշխիքների վճարմամբ պետության մոտ ծագում է հետադարձ պահանջի իրավունք:

Բյուջեների դեֆիցիտը (պակասուրդը) և հավելուրդը

Բյուջետային հարաբերությունների կարգավորման գործընթացը սերտորեն առնչվում է բյուջեների հավասարակշռման խնդրին, այսինքն բյուջեներով նախատեսված հաշվարկային դրամական ելքերը չեն կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեներով նախատեսված հաշվարկային դրամական մուտքերը:

Բյուջեների ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը կազմում է բյուջեների հավելուրդը, իսկ եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը կազմում է բյուջեների դեֆիցիտը (պակասուրդը):

Պետական բյուջեի պակասուրդի կամ հավելուրդի չափը սահմանվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով, իսկ համայնքի բյուջեի պակասուրդի կամ հավելուրդի չափը՝ համայնքի տվյալ տարվա բյուջեի մասին համայնքի ավագանու որոշմամբ:

ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի ավագանուն ներկայացվող համայնքի առաջիկա տարվա բյուջեի մասին համայնքի ավագանու որոշման նախագծում համայնքի բյուջեի՝

ա) վարչական մասի ֆինանսավորման աղբյուրներով ապահովված պակասուրդի գումարը չի կարող գերազանցել առաջիկա տարվան նախորդող (եզ-

րափակված) բյուջետային տարում վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ծախսերի գծով առկա պարտավորությունների ֆինանսավորմանն ուղղվող առաջիկա տարվա համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների գումարի, ինչպես նաև առաջիկա տարվան նախորդող տարիներին համայնքի բյուջեի վարչական մասից տրամադրված փոխատվությունների միջոցների վերադարձից առաջիկա տարում ստացվելիք և առաջիկա տարվան նախորդող տարիներին ստացված փոխատվության գծով բյուջեի վարչական մասից այդ տարում մարվելիք գումարների տարբերության հանրագումարը.

բ) ֆոնդային մասի պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրավվող փոխառու միջոցների (ներառյալ՝ համայնքային արժեթղթերի թողարկումից) զուտ (ստացված և մարված փոխառու միջոցների դրական տարբերության չափով) մուտքերի գումարը չի կարող գերազանցել այդ տարվան նախորդող երկրորդ եւ երրորդ բյուջետային տարիների համայնքի բյուջեի ֆոնդային մասում փաստացի ստացված եկամուտների (առանց պաշտոնական դրամաշնորհների գումարների և համայնքի բյուջեի վարչական մասով նախատեսված պահուստային ֆոնդից ֆոնդային մաս փոխանցված միջոցների) միջին տարեկանի 30 տոկոսը:

Ընդ որում, համայնքի վարչական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներից են՝ պետական բյուջեից և (կամ) այլ համայնքների բյուջեներից տրամադրվող բյուջետային փոխատվությունները, նույն բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, համայնքի բյուջեից տրամադրված բյուջետային փոխատվությունների վերադարձից ստացվող միջոցները, ինչպես նաև բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածում, վարչական բյուջեում առաջացող պակասուրդի ֆինանսավորման համար, ավագանու որոշմամբ, ՀՀ կառավարության որոշմամբ և սահմանած կարգով, տվյալ բյուջետային տարում ֆոնդային բյուջե վերադարձնելու պայմանով, համայնքի ֆոնդային բյուջեից ներգրավվող ժամանակավոր ազատ միջոցները:

Իսկ ֆոնդային բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներից են՝ պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ստացված վարկերը, ՏԻՄ-երի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից

և օտարումից ստացված միջոցների 30 տոկոսի չափով մուտքերը և նույն բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը:

Բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը

Տվյալ տարվա բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը նախորդ տարվա բյուջեի կատարման ընթացքում իրականացված ելքերի նկատմամբ մուտքերի գերազանցումն է: Բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը տվյալ տարվա համապատասխան բյուջեների մուտքն է:

Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը համայնքի ավագանու որոշմամբ կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեով նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման կամ չկանխատեսված ելքերի ֆինանսավորման նպատակով:

Բյուջեների միջոցների հաշվին կատարվող կապիտալ ծախսերը

Բյուջեների միջոցների հաշվին կապիտալ ծախսերի իրականացման կարգը սահմանում է կառավարությունը: Բյուջեների միջոցների հաշվին կապիտալ ծախսերի իրականացման կարգով սահմանվում են՝

- ա) ծախսերի կատարման իրավական հիմքը՝ պետական կապիտալ ներդրումների ծրագրի, նպատակային ծրագրերի, գործադիր իշխանության կամ ՏԻՄ-երի որոշումների առկայությունը,
- բ) ծախսերի կատարման հիմնավորման տեխնիկատնտեսական չափանիշները, նախագծանախահաշվային փաստաթղթերը,
- գ) ծախսերի կատարման փուլերը և ժամկետները,
- դ) օբյեկտների ցանկի ներկայացման, քննարկման և հաստատման կարգը,
- ե) բյուջեների նախագծերում և բյուջեների կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության մեջ ծախսերի կատարման արտացոլման ձևը,
- զ) բյուջեների միջոցների հաշվին կապիտալ ծախսերի կատարման այլ դրույթներ:

Բյուջեների կապիտալ ծախսերն իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում կարող են ներդրումներ պարունակել, որոնք այդ իրավաբանական անձանց բաժնետոմսերի (բաժնեմասերի) նկատմամբ առաջացնում են պետության կամ համայնքների սեփականության իրավունք:

Պետական կապիտալ ծախսերի հաշվին ստեղծված՝ պետական սեփականություն համարվող գույքը հանձնվում է պետական համապատասխան մարմնի կառավարմանը կամ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի տնօրինմանը:

Պետական և համայնքային սեփականություն համարվող գույքի շահագործումից, կապիտալ ծախսերի հաշվին ստեղծված գույքի օտարումից կամ վարձակալությունից ստացված միջոցները փոխանցվում են համապատասխան բյուջեներ:

«Ք բյուջետային դասակարգումը

ՀՀ բյուջետային հարաբերությունների հստակ կարգավորումը պահանջում է ունենալ միասնական բյուջետային դասակարգում:

Բյուջետային դասակարգումը բյուջեների կազմման և կատարման համար կիրառվող բյուջեների մուտքերի և ելքերի խմբավորումն է՝ ըստ տեսակների և ուղղությունների, որով ապահովվում է բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեների ցուցանիշների համադրելիությունը:

ՀՀ բյուջետային դասակարգման տեսակները և կառուցվածքը սահմանված են «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և դրանց կիրառումը բյուջետային գործառնությունների պլանավորման ու կատարման բնագավառում պարտադիր է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար:

ՀՀ բյուջետային դասակարգումն ունի հետևյալ կառուցվածքը՝

- ա) բյուջեների եկամուտներ,
- բ) բյուջեների ծախսեր և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ,
- գ) բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներ,
- դ) բյուջեների պարտքեր:

Բյուջետային դասակարգմամբ բյուջետային եկամուտները համակարգվում են՝ ըստ դրանց գոյացման աղբյուրների և վճարողների, ինչը հնարավորություն է տալիս որոշել այդ եկամուտների տնտեսագիտական էությունը:

Բյուջեների եկամուտները դասակարգվում են՝

- ա) հարկային եկամուտներ և տուրքեր,
- բ) պարտադիր սոցիալական ապահովության վճարներ,
- գ) պաշտոնական դրամաշնորհներ,
- դ) այլ եկամուտներ:

Բյուջետային ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների դասակարգումը թույլ է տալիս իրականացնել վերլուծություններ՝ միավորելով դրանք ըստ իրենց ուղղությունների, ինչպես նաև ապահովել պատշաճ հսկողություն բյուջետային միջոցների ծախսման նկատմամբ: Բյուջեների ծախսերը և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները դասակարգվում են ըստ՝

- ա) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործառնության,
- բ) գերատեսչական բաշխվածության,
- գ) ծախսերի տնտեսագիտական բովանդակության,
- դ) տարածքային բաշխվածության:

Բյուջեների պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների դասակարգումը այդ նպատակով ներգրավված զուտ միջոցների (ներառյալ՝ փոխառու միջոցների և ֆինանսական ակտիվների) խմբավորումն է: Բյուջեների պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ներքին և արտաքին աղբյուրների:

Բյուջեների պարտքերի դասակարգումը ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտքային պարտավորությունների խմբավորումն է՝ ըստ դրանց տեսակների: Բյուջեների պարտքերը դասակարգվում են՝ ներքին և արտաքին պարտք:

Բյուջետային ներկայացված դասակարգման առավել մանրամասնումը՝ ըստ յուրաքանչյուր հոդվածի, ինչպես նաև դրանց կիրառման կարգը սահմանում է ՀՀ պետական լիազորված մարմինը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Բյուջետային դասակարգումն ունի նաև կազմակերպական մեծ նշանակություն, քանի որ հնարավորություն է ընձեռում ցանկացած բյուջե ներկայացնել տեսանելի ձևով, պայմաններ է ստեղծում ինչպես տարբեր բյուջետային հիմնարկների և ծրագրերի նախահաշիվների, այնպես էլ բյուջեների համախմբման համար, հեշտացնում է դրանց քննարկումն ու տնտեսագիտական վերլուծությունը, պարզեցնում հսկողության իրականացումը բյուջեների կատարման, բյուջեներում միջոցների ժամանակին և լիակատար չափով կուտակման, դրանց նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ: Դասակարգումը հնարավորություն է ընձեռում բյուջետային մուտքերի ու ելքերի սինթետիկ և անալիտիկ հաշվառման համար: Բյուջետային դասակարգմամբ կազմվում են բյուջեների կատարման հաշվետվությունները:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համայնքի բյուջեի ձևավորման հիմնական սկզբունքները

Համայնքի բյուջեի ձևավորման հիմնական սկզբունքներն են՝

ա) համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու կողմից ընդունված համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ **ֆինանսական միջոցների պլանավորումը,**

բ) **պահուստային ֆոնդի ստեղծումը՝** որպես տվյալ տարվա համայնքի բյուջեում չնախատեսված, ինչպես նաև վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ելքերի աղբյուրի և կապիտալ ելքերի ֆինանսավորման հիմնական երաշխիք,

գ) համայնքի բյուջեի **հաշվեկշռվածությունը՝** յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեի յուրաքանչյուր բաղկացուցիչ մասում նախատեսված հաշվարկային-դրամարկղային ելքերի հանրագումարը չպետք է գերազանցի բյուջեի համապատասխան մասում տվյալ տարում նախատեսված հաշվարկային-դրամարկղային մուտքերի հանրագումարին,

դ) **խնայողականությունը,** երբ կատարված ծախսին համապատասխանում է դրան համարժեք նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում,

ե) **արդյունավետությունը,** երբ ապահովվում է կատարված ծախսի և համայնքի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը,

զ) **հավաստիությունը և հստակությունը,** որը հնարավորություն է ընձեռում ապահովել բյուջեի կատարման և բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հոդվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով,


է) **հրապարակայնությունը,** որն ապահովում է համայնքի բյուջեի ձևավորման և կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը

ՏԻՄ-երի ընթացիկ գործունեության երաշխիքը ընթացիկ ծախսերն են: Մյուս կողմից, առանց կապիտալ ծախսերի ևս չի կարող լինել զարգացող համայնք, սպասարկումների, ծառայությունների որակական մակարդակի բարձրացում: Ընթացիկ ծախսերի կազմը և կառուցվածքը, կապիտալ ծախսերի հետ նրանց հարաբերակցությունը արտացոլում են համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, հնարավորությունները, զարգացման ուղղությունները, գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման ձևերն ու մեթոդները և, ընդհանրապես, ֆինանսական քաղաքականության բնույթը: Այս առումով, համայնքների բյուջեներում ընթացիկ և կապիտալ ծախսերի արդյունավետ հարաբերակցություն ապահովելու նպատակով, համայնքների բյուջեները՝ ելնելով ՏԻՄ-երի կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն (հոդված 28), բաժանվում են երկու բաղկացուցիչ մասերի (տե՛ս գծապատկեր 2)՝

- համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե),
- համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):

Գծապատկեր 2. Համայնքի բյուջեի կառուցվածքը



Նույն օրենքով սահմանված է նաև, որ որոշակի սկզբունքներով ամրագրված մուտքերով և համապատասխան բնույթի ելքերով առանձնացված համայնքի բյուջեի այս երկու մասերից յուրաքանչյուրը պետք է լինի հավասարակշռված: Ընդ որում, համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցները չեն կարող փոխանցվել համայնքի բյուջեի վարչական մաս, բացառությամբ օրենքի 28.1-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետով սահմանված դեպքի³:

Համայնքի բյուջեի մուտքերի կառուցվածքն ըստ վարչական և ֆոնդային բյուջեների

Մուտքերի գծով համայնքի բյուջեն ներառում է՝

- համայնքի բյուջեին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները,
- դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցները:

Եկամուտների սահմանման սկզբունքները

ՏԻՄ-երի կողմից օրենքով դրանց վերապահված լիազորությունների կատարումն առաջին հերթին պայմանավորված է նրանով, թե օրենքով եկամտի ի՞նչ աղբյուրներ են ամրագրվում համայնքների բյուջեներին: ՀՀ համայնքների բյուջեների եկամուտները սահմանելիս հիմք են ընդունվել հետևյալ սկզբունքները՝

- **Ինքնուրույնություն:** Տեղական ինքնակառավարում իրականացնելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցների սեփական աղբյուրներ: Համայնքների բյուջեներին պետք է ամրագրվեն այնպիսի եկամուտներ, որոնք ապահովեն համայնքների ինքնուրույնությունը, այսինքն հնարավորություն տան նրանց մշակելու և իրականացնելու ինքնուրույն քաղաքականություն՝ համայնքային նշանակության որոշակի հարցեր լուծելու համար:

- **Կանխատեսման ճշգրտություն ունեցող հարկերի գերակայություն:** Համայնքների բյուջեների հարկային եկամուտներ են սահմանվել այնպիսի հարկատեսակներ, որոնց ծավալների կանխատեսումն առավել իրական է: Հողի հարկի և գույքահարկի դեպքում հարկման է ենթարկվում իրական օբյեկտը (հողակտոր, գույք), և հարկի չափը նախապես հայտնի է:

³ Այդ դեպքն առավել մանրամասն ներկայացված է սույն ձեռնարկի 4-րդ գլխում՝ համայնքի բյուջեի մուտքերի նկարագրության մեջ (էջ 52), ինչպես նաև գծապատկեր 4-ում:

- **Պետական տուրքերի ու հարկերի և տեղական տուրքերի ու վճարների զուգակցում:** Եթե պետական տուրքերի ու հարկերի չափերն ամբողջ հանրապետության տարածքում միասնական են, ապա համայնքներին հնարավորություն է տրվում ինքնուրույն որոշել, օրենքով սահմանված որոշակի շրջանակներում, տեղական տուրքերի ու վճարների չափերը: Դա թույլ է տալիս բարձրացնել համայնքների ինքնուրույնության աստիճանը: ՏԻՄ-երին է նաև վերապահված բնակչությանը տեղական հարկերի և տուրքերի գծով, օրենքով սահմանված սահմաններում, արտոնություններ տալու իրավունքը:

- **Ֆինանսական համահարթեցում:** Պետությունը պարտավորվում է օժանդակություն ցույց տալ համայնքներին: Ընդ որում, դա կարող է արվել տարբերակված ձևով՝ ավելի մեծ օժանդակություն ցույց տալ ֆինանսապես առավել թույլ համայնքներին՝ թույլ չտալով համայնքների ֆինանսական հնարավորությունների խիստ բևեռացում: Ներկայումս քննարկման փուլում է ֆինանսական համահարթեցման նոր մեխանիզմը, որը հնարավորություն կտա վերացնել ներկայումս գործող կարգի շատ թերություններ:

- **Համամասնականություն:** Անհրաժեշտ է տարբերակել երկու խումբ համամասնություններ: Առաջին խումբն ընդգրկում է ՀՀ բյուջետային համակարգի երկու բաղկացուցիչ մասերի՝ պետական և համայնքների բյուջեների եկամուտների միջև համամասնությունները, և երկրորդ խումբը՝ համայնքների բյուջեների եկամուտների տեսակների միջև համամասնությունները: Դրանց ձևավորումը և պահպանումը մեծ նշանակություն ունի համայնքների կայուն զարգացումն ապահովելու գործում:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Հայաստանում համայնքների բյուջեներին ամրագրվող եկամուտների տեսակներին վերաբերող օրենսդրական դաշտը դեռևս կատարյալ չէ և կարիք է զգում կատարելագործման:

Համայնքների բյուջեների մուտքերի դասակարգումը

Արդյունավետ բյուջետավարում իրականացնելու և բյուջետային գործընթացը կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունի համայնքների բյուջեների մուտքերի դասակարգումը: Այն օգնում է պլանավորել, կազմակերպել, իրականացնել և գնահատել բյուջետային խնդիրները և գործընթացները:

Համայնքների բյուջեների մուտքերի շրջանակը բավական լայն է: Այն ընդգրկում է տեղական հարկատեսակներ, պետական տուրքի որոշ տեսակներ, տեղական տուրքեր և վճարներ, պաշտոնական դրամաշնորհներ, այլ եկամուտներ, ոչ

Ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքեր, ինչպես նաև փոխառու միջոցներ:

Համայնքի բյուջեի մուտքերը կարելի է խմբավորել ըստ տարբեր չափանիշների.

Ըստ ստացման հաճախականության`

- ընթացիկ եկամուտներ.
- ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքեր.
- ֆոնդային բյուջեին միանվագ հատկացվող այլ մուտքեր:

Ընթացիկ եկամուտները մշտական, որոշակի պարբերականությամբ ստացվող` բյուջետային մուտքերն են, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերը` միանվագ ստացվող:

Ըստ ֆինանսական ինքնուրույնության ապահովման (տե՛ս գծապատկեր 3)`

- սեփական մուտքեր (այդ թվում` ընթացիկ եկամուտները, ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերը, ֆոնդային բյուջե միանվագ մուտքագրվող այլ մուտքերը).
- պաշտոնական դրամաշնորհներ.
- պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ:

Ըստ տեսակների`

- հարկային եկամուտներ.
 - տուրքեր.
 - պաշտոնական դրամաշնորհներ.
 - այլ եկամուտներ.
 - ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքեր.
 - պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ:
- Վարչական բյուջեի մուտքերի մեջ ներառվել են`
1. օրենքով համայնքների բյուջեներին ամրագրված հարկային եկամուտները, այդ հարկերի գծով հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքներն ու տույժերը,
 2. տուրքերը (տեղական և օրենքով համայնքների բյուջեներին ամրագրված պետական տուրքերը),
 3. պաշտոնական դրամաշնորհները` պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների, այլ դոտացիաների, ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացվող սուբվենցիաների և այլ աղբյուրներից ստացվող դրամաշնորհների տեսքով,

4. այլ եկամուտները՝ հողերի և գույքի վարձակալությունից, վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից, մատուցվող համայնքային ծառայությունների դիմաց գանձվող վճարներից, տեղական վճարներից և այլն,
5. պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները՝ պետական բյուջեից և (կամ) այլ համայնքների բյուջեներից տրամադրվող բյուջետային փոխատվությունները, դրանց վերադարձից ստացվող միջոցները, վարչական բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը և այլն:

Ֆոնդային բյուջեի մուտքերի մեջ ներառվել են՝

1. պաշտոնական դրամաշնորհները՝ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները, կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար այլ աղբյուրներից ստացվող նպատակային հատկացումները,
2. այլ եկամուտները՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները և այլն,
3. ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերը,
4. պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները՝ պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ստացված վարկերը, ՏԻՄ-երի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները, ֆոնդային բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը և այլն:


Համայնքի բյուջեի ելքերն ըստ վարչական և ֆոնդային բյուջեների

Օրենքով սահմանված կարգով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման բյուջետային ելքերն ըստ վարչական և ֆոնդային բյուջեների խիստ տարբերվում են:

Համայնքի բյուջեի վարչական մասի ելքերը ներառում են՝

1. օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման ընթացիկ ծախսերը համայնքի գործունեության բոլոր ոլորտներում,
2. բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում առաջացող վարչական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման համար ներգրավված բյուջետային փոխատվությունների մարումները, ինչպես նաև վարչական բյուջեից բյուջետային փոխատվությունների տրամադրումը:

Գծապատկեր 3. Համայնքի բյուջեի մուտքերի դասակարգումն ըստ ֆինանսական ինքնուրույնության ապահովման (ֆինանսավորման աղբյուրների)



Ելքերի գծով համայնքի բյուջեի ֆոնդային մասը ներառում է՝

1. օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման կապիտալ ծախսերը համայնքի գործունեության բոլոր ոլորտներում,
2. ֆոնդային բյուջեի պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրավված վարկերի և ՏԻՄ-երի թողարկած պարտատոմսերի մարումները և բյուջետային փոխատվությունների տրամադրումը.
3. վարչական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման նպատակով՝ ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների հատկացումները:

Համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի տարանջատման հետ մեկտեղ, օրենքը նախատեսում է դրանց վերահավասարակշռման, վերանայման տարբեր կառուցակարգեր: Դրանցից հիմնականը վարչական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցով իրականացվող հավասարակշռման կառուցակարգն է, որը, մի կողմից, կարող է ապահովել ֆոնդային բյուջեի եկամուտ, մյուս կողմից, չնախատեսված և լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման աղբյուր է:

Ֆոնդային և վարչական բյուջեների փոխկապակցվածությունը առավել ցայտուն է դրսևորվում դինամիկայում: ՏԻՄ-երը պետք է հաշվի առնեն, որ իրականացվող ներդրումային ծրագրերը շատ հաճախ առաջացնում են լրացուցիչ ֆունկցիոնալ ծախսեր՝ պահանջելով նոր աշխատատեղեր և դրանց համապատասխան լրացուցիչ ընթացիկ ծախսեր՝ կապված աշխատանքի վարձատրության, գույքի ձեռքբերման, ընթացիկ նորոգման և այլնի հետ: Մյուս կողմից, կապիտալ ծախսերը դրական ազդեցություն են թողնում վարչական բյուջեի վրա՝ կրճատելով որոշակի ընթացիկ ծախսեր՝ կապված համայնքային ենթակառուցվածքների ընթացիկ վերանորոգումների հետ:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՒՏՔԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Համայնքի վարչական բյուջեի մուտքերի ընդհանուր բնութագիրն ու այն կարգավորող օրենսդրական դաշտը

Հարկային եկամուտներ

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով համայնքների վարչական բյուջեներին ամրագրվել են հետևյալ հարկային եկամուտները (տես գծապատկեր 4)՝

ա) տեղական հարկերը՝

- հողի հարկը՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի համար,
- գույքահարկը՝ համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար,
- հյուրանոցային հարկը⁴,
- տրանսպորտային միջոցների կայանատեղի հարկը⁴,

բ) օրենքով պետական բյուջեին ամրագրվող հարկատեսակներից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները (յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով),

գ) հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժերը և տուգանքները:

Տեղական հարկեր


2005թ. նոյեմբերի 27-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում տեղական ինքնակառավարման համակարգում սահմանադրորեն ամրագրվեց «տեղական հարկեր» նոր հասկացությունը, որն ուղղակիորեն բխում է «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի» 9-րդ հոդվածի (տեղական իշխանության ֆինանսական ռեսուրսները) 3-րդ կետի պահանջից (տեղական հարկերի և վճարների մասին):

⁴ Հյուրանոցային հարկը և տրանսպորտային միջոցների կայանատեղի հարկը, որպես տեղական հարկեր, սահմանվել են 2010թ. ապրիլի 27-ին ընդունված «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-51-Ն ՀՀ օրենքի համաձայն:

«Հարկերի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 27 ապրիլի 2010թ. ՀՕ-51-Ն ՀՀ օրենքով սահմանվել են «տեղական հարկեր» հասկացությունը և հետևյալ հիմնարար սկզբունքներն ու դրանցից բխող ՏԻՄ-երի գործառույթները, որոնցով կարգավորվում է տեղական հարկերի համակարգը՝

- Տեղական հարկերի առանձնահատկությունները սահմանվում են յուրաքանչյուր հարկատեսակի մասին օրենքով: Տեղական հարկերը, որպես եկամուտ, ամբողջությամբ ամրագրվում են այն համայնքի բյուջե, որի վարչական տարածքում դրանք ձևավորվում են:
- Տեղական հարկերից հողի հարկի և գույքահարկի կիրառումը յուրաքանչյուր համայնքում պարտադիր է: Յուրաքանչյուր համայնքում մյուս տեղական հարկերի կիրառումը և դրույքաչափերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:
- Տեղական հարկատեսակների մասին (բացառությամբ հողի հարկի և գույքահարկի) օրենքներով սահմանվում են տեղական հարկերի դրույքաչափերի նվազագույն և առավելագույն սահմանները: Համայնքի ավագանին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, օրենքով սահմանված կարգով, հաստատում է տեղական հարկերի դրույքաչափերը:
- Տեղական հարկատեսակների և դրույքաչափերի սահմանումը, ՏԻՄ-երի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը ՏԻՄ-երի պարտադիր լիազորություններն են:
- ՏԻՄ-երը կարող են օրենքով սահմանված կարգով զնահատել և վերագնահատել անշարժ գույք հանդիսացող հարկվող օբյեկտի հարկման ենթակա բազան, իսկ անհամապատասխանության դեպքում արդյունքները ներկայացնել զնահատում և վերագնահատում իրականացնող լիազոր մարմնի կամ վիճարկել դատական կարգով:
- Տեղական հարկեր վճարողների իրավունքները, պարտավորություններն ու պատասխանատվությունը սահմանվում են վերոհիշյալ օրենքով, իսկ դրանց առանձնահատկությունները՝ յուրաքանչյուր հարկատեսակի մասին օրենքով: Հարկային օրենսդրության խախտումներից բխող վեճերը լուծվում են դատական կարգով:
- ՏԻՄ-երը կարող են կիրարկել տեղական հարկի յուրաքանչյուր տեսակ այդ հարկի մասին օրենքի ընդունումից հետո՝ հաջորդ տարվա սկզբից:

Գծապատկեր 4. Համայնքի վարչական բյուջեի մուտքերի կառուցվածքը



Հողի հարկ. Այս հարկատեսակի հաշվարկման և վճարման կարգը, ինչպես նաև հարկ վճարողների արտոնությունները սահմանված են «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով⁵: Համաձայն այս օրենքի, համայնքի բյուջե հարկ վճարողներ են հանդիսանում համայնքի վարչական տարածքում գտնվող հողի բոլոր սեփականատերերը: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ հողի կադաստրային գնահատման արժեքը:

Հողի հարկը սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի (հեկտարի) համար հաստատագրված վճարի ձևով, վճարվում է տարվա համար և նրա չափը կապված է վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Ֆիզիկական անձ հանդիսացող հարկատուները հողի հարկի տարեկան գումարը համայնքի բյուջե են վճարում տարեկան երկու անգամ հավասար մասերով (մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը ներառյալ և հաջորդ տարվա ապրիլի 15-ը ներառյալ), որը հանգեցնում է (հատկապես գյուղական համայնքների համար) տվյալ տարվա տարբեր ժամանակահատվածներում բյուջեի եկամուտների անհավասարաչափ մուտքերի: Կազմակերպությունները օրենքի համաձայն հաշվարկված հողի հարկի տարեկան գումարները (եռամսյակային կտրվածքով) համայնքի բյուջե են վճարում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Համայնքի բյուջեում հողի հարկի մուտքերը պլանավորելիս, պետք է հաշվի առնել ինչպես ընթացիկ տարվա հաշվարկային եկամուտների մեծությունը, այնպես էլ նախորդ տարիներից կուտակված ապառքները:

Գույքահարկ. Այն հարկատուներին սեփականության իրավունքով պատկանող, օրենքով սահմանված որոշակի գույքի համար օրենքով սահմանված չափով վճարվող ուղղակի հարկ է, որը կախված է հարկատուների տնտեսական գործունեության արդյունքներից: Այս հարկի գծով համայնքներում հարկատու են համարվում ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց համայնքի

⁵ Հողի հարկ վճարողների այլ արտոնություններ կարող են սահմանվել նաև ՀՀ այլ օրենքներով:

վարչական տարածքում պատկանում է օրենքով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ ՀՀ պետական մարմինների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

Գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում՝

1. շենքերն ու շինությունները (օրենքում թվարկված է դրանց ցանկը),
2. փոխադրամիջոցները, այդ թվում՝
 - ա) ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, բ) ջրային փոխադրամիջոցը, գ) մոտոցիկլետը:

Շինությունների հարկման բազան դրանց կադաստրային արժեքն է, որի հաշվարկման և գնահատման կարգը սահմանված է օրենքով: Փոխադրամիջոցների հարկման բազան՝ փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունն է (ձիաուժ կամ կիլովատ): Գույքահարկի դրույքաչափերը, հաշվարկման, վճարման և արտոնությունների տրամադրման կարգը սահմանված են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով:

Կազմակերպությունները հաշվարկված գույքահարկի գումարները համայնքի բյուջե են վճարում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ: Ֆիզիկական անձինք շենքերի և շինությունների համար հաշվարկված գույքահարկի տարեկան գումարը համայնքի բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցների՝ տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը: Վերը նշված ժամկետներում գույքահարկի գումարները չվճարելու դեպքում, հարկային օրենսդրության խախտումների համար, հաշվարկվում են հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ:

Համայնքի բյուջեում գույքահարկի պլանավորման ժամանակ, ինչպես հողի հարկի դեպքում, անհրաժեշտ է հաշվի առնել ընթացիկ տարվա հաշվարկային մեծությունները և նախկին տարիներին գոյացած ապառքները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողի հարկը և գույքահարկը համայնքի բյուջեի սեփական եկամուտների հիմնական աղբյուրն են և դժվար հավաքագրվող հարկատեսակներ են (առանձնապես՝ ֆիզիկական անձանց պատկանող հողերի, շենքերի ու շինությունների գծով), անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել հողի հարկի և գույքահարկի տվյալների բազաների (չտեսարանների) ճշտման, թարմացման, հաշվառման, վերահսկման և գնահատման աշխատանքների վրա:

Տուրքեր

Պետական տուրքեր. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով պետական տուրքերից, որպես պարտադիր գանձույթ, համայնքի բյուջե մուտքագրվում են՝

ա) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար գանձվող պետական տուրքը,

բ) նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար գանձվող պետական տուրքը:

Պետական տուրքի տեսակների և արտոնությունների տրամադրման ու վճարված գումարների վերադարձման կարգը սահմանված է «Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենքով: Պետական տուրքերի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի (1000 դրամ) նկատմամբ:

Պետական տուրքերի գծով համայնքի բյուջեի եկամուտները պլանավորելիս պետք է հաշվի առնել այն, որ պետական տուրքի վերոհիշյալ տեսակներից գանձվող գումարները վճարվում են այն համայնքի բյուջե, որի տարածքում գտնվում (տեղադրված) է պետական տուրք գանձող մարմինը՝ նոտարական գրասենյակը կամ քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինը: Եթե նկատի ունենանք, որ դրանք տեղաբաշխված են քաղաքներում և նախկին շրջկենտրոններում, ուրեմն գյուղական համայնքներն, ըստ էության, զրկված են այդ եկամուտներից:

Տեղական տուրքեր. «Տեղական տուրքերի և վճարների» մասին ՀՀ օրենքի համաձայն, տեղական տուրքը ՏԻՄ-երի՝ օրենքով սահմանված լիազորությունների դիմաց օրենքով սահմանված կարգով ու չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Օրենքով սահմանված առանձին դեպքերում տեղական տուրքը կարող է գանձվել պարբերաբար:

Օրենքը սահմանում է տեղական տուրքերի տեսակները և գանձվող գումարների դրույքաչափերի տիրույթները (նվազագույն և առավելագույն դրույքաչափերը): Տեղական տուրքերի դրույքաչափերը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում է համայնքի ավագանին՝ տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: Դրանք համայնքի տարածքում միասնական են և անփոփոխ՝ ընթացիկ տարվա համար:

Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի եկամուտների հաշվարկման համար շատ կարևոր է այդ եկամտատեսակների բազայի ճշտումը, իսկ ավագանու կողմից դրանց դրույքաչափերի հաստատումից հետո, աշխատանքը կհանգի միայն տեղական տուրք վճարողների թվի գնահատմանը և սահմանված դրույքաչափերով վճարման ենթակա գումարների հաշվարկմանը:

Համայնքի ավագանին կարող է սահմանել նաև տեղական տուրքի արտոնություն՝ տեղական տուրք վճարողի փոխարեն վճարումը կատարելով բյուջեից: Արտոնությունների նման կառուցակարգը առավել հրապարակային է դարձնում ավագանու գործունեությունը և ապահովում է բյուջեի ծախսերի պլանավորման ճշտությունը:

Պաշտոնական դրամաշնորհներ

Համայնքի վարչական բյուջեին տրամադրվող պաշտոնական դրամաշնորհներն են՝

- ա) պետական բյուջեից ***ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները***.
- բ) պետական բյուջեից տրամադրվող ***այլ դոտացիաները***.
- գ) պետական բյուջեից ***ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները***.
- դ) ***այլ աղբյուրներից*** (հանրապետության այլ համայնքներ, միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա պետությունների ՏԻՄ-եր) ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող ***պաշտոնական դրամաշնորհները***:

Ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ

Ֆինանսական համահարթեցումը պետության բյուջետային քաղաքականության կարևորագույն գործառույթներից մեկն է, որի նպատակը տարբեր ֆինանսական կարողություններ ունեցող համայնքների միջև առկա բևեռացման մեղմումն է, ինչպես նաև՝ համայնքների ֆինանսական կարողությունների ամրապնդումն ու զարգացումը: Պետությունը, օրենքով սահմանված կարգով, ֆինանսական թույլ կարողություններ ունեցող համայնքներին տրամադրում է որոշ դրամական միջոցներ, որոնք համայնքը ծախսում է օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար:

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով, պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ: Ընդ որում, համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը:

Ֆինանսական համահարթեցման գործող կարգը

Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափը սահմանված է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» (հոդված 20) և «Տեղական ինքնակառավարման մասին» (հոդված 58) ՀՀ օրենքներով, ըստ որոնց՝ այդ գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն, պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների 4%-ից: Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարի բաշխումն առանձին համայնքների միջև հաշվարկվում է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և հաստատվում այդ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով:

Ներկայումս գործող կարգի համաձայն, դոտացիաների ընդհանուր գումարի բաշխումն առանձին համայնքների միջև իրականացվում է հետևյալ մեխանիզմով՝

- ***Եկամուտների համահարթեցում.***

Հաշվի է առնվում բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակները: Դոտացիա տրամադրվում է միջին հանրապետական մակարդակից ցածր ցուցանիշ ունեցող, 300-ից ավել բնակիչ ունեցող համայնքներին (օրենքի «ա» գործոն):

- ***Ֆինանսական ուղղակի համալրում.***

Հաշվի է առնվում համայնքի բնակչության ընդհանուր թիվը: Դոտացիա տրամադրվում է 300-ից ավել բնակիչ ունեցող բոլոր համայնքներին՝ ըստ բնակչության ընդհանուր թվի (օրենքի «բ» գործոն):

- ***Հաստատագրված ֆինանսական համալրում.***

Դոտացիա տրամադրվում է 300-ից պակաս բնակչություն ունեցող բոլոր համայնքներին հավասար՝ տվյալ տարվա պետական բյուջեով սահմանված չափով:

Այս մեխանիզմով դոտացիաների գումարի բաշխման հիմնական առավելությունը կայանում է բաշխման որոշակիության և թափանցիկության ապահովումը: Սակայն այս մեխանիզմով հաշվի չեն առնվում և չեն գնահատվում համայնքների իրական կարիքները և պահանջները:

Անհրաժեշտ է նշել, որ ֆինանսական համահարթեցման գործող կարգը ՀՀ-ում գործում է 1999 թվականից ի վեր և տարիներ շարունակ կարգավորել է տեղական ինքնակառավարման համակարգի կարևորագույն ոլորտներից մեկը: Սակայն, համակարգի վերջին զարգացումներն ի հայտ են բերել նոր խնդիրներ, որոնք պահանջում են ֆինանսական համահարթեցման նոր մոտեցումներ ու լուծումներ:

Ֆինանսական համահարթեցման միջազգային փորձը

Կայացած տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող երկրներն ունեն ֆինանսական համահարթեցման մեխանիզմների կիրառման հարուստ և բազմազան փորձ: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Եվրոպական զարգացած երկրների փորձն ու կիրառվող մեխանիզմները, որոնք համապատասխանեցված են «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի» պահանջներին:

Եվրոպական երկրների մեծ մասը՝

- համահարթեցնում է ոչ միայն եկամուտները, այլ նաև հաշվի է առնում համայնքների ծախսային առանձնահատկությունները,
- համահարթեցման դոտացիաները տրամադրում է ինչպես բոլոր համայնքներին, այնպես էլ միայն միջինից (կամ ինչ-որ մակարդակից) ցածր ֆինանսական ներուժ ունեցողներին,
- ձգտում է ֆինանսական համահարթեցումն իրականացնել հնարավորինս պարզ բանաձևի միջոցով, որը ցանկացած համայնքին հնարավորություն կտա ինքնուրույն հաշվարկել իրեն տրամադրվող դոտացիայի չափը:
 Եվրոպական երկրներում ֆինանսական համահարթեցման դոտացիաները հիմնականում հատկացվում են պետական բյուջեի միջոցներից, սակայն կան երկրներ, որտեղ այդ միջոցները համալրվում են նաև առավել հարուստ համայնքների բյուջեների եկամուտներից (բացասական դոտացիա):
 Այն երկրներում, որտեղ համայնքների գերակշռող մասի բյուջեներին ամրագրված սեփական եկամուտները չեն բավարարում ՏԻՄ-երի պարտադիր լիազորություններին ուղղված ծախսերի ֆինանսավորմանը, համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի մի մասը հատկացվում է համայնքներին ֆինանսական ուղղակի համալրման սկզբունքով՝ համամասնային չափով:

Ֆինանսական համահարթեցման նոր համակարգը

Ներկայումս ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է գտնվում «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքի նոր նախագիծը, որն արդեն քննարկվել և ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Հաշվի առնելով ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի առանձնահատկությունները և ֆինանսական համահարթեցման նախորդ տարիների փորձը՝ ֆինանսական համահարթեցման նոր համակարգը կառուցվել է հետևյալ հիմնարար սկզբունքների և գործառույթների հիման վրա⁶

- ֆինանսական համահարթեցման համար համայնքներին տրամադրվող դոտացիաները հատկացվում են պետական բյուջեի միջոցներից՝ բացառելով համայնքներից այդ նպատակի համար միջոցների գանձումը,

⁶ Վ. Մովսիսյան «Ֆինանսական համահարթեցման մեխանիզմի զարգացումը Հայաստանում», OSI/FDI, ՀՖՄ, Նոյյան տապան, Երևան, 2007

- պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները չեն կարող լինել նպատակային,
- ապահովվում է համայնքների լիազորությունների իրականացման և ֆինանսական միջոցների տնօրինման ազատությունն ու ինքնուրույնությունը,
- պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափը սահմանվում է օրենքով,
- ըստ առանձին համայնքների՝ հատկացվող դոտացիաների չափը հաստատվում է տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով,
- համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող դոտացիաների հաշվարկման համար հիմք է ընդունվում համայնքի բյուջետային ապահովության գործակիցը, որն իրենից ներկայացնում է համայնքի եկամտային ունակության և պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսային կարիքի հարաբերությունը.
 - ✓ եկամտային ունակության հաշվարկման համար հիմք է հանդիսանում համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակը, համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող մասհանվող եկամուտների (եկամտահարկ, շահութահարկ) և պետական տուրքի փաստացի մակարդակը,
 - ✓ ծախսային կարիքի հաշվարկման համար հիմք են ընդունվում այն գործոնները, որոնք էականորեն ազդում են ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի վրա, իսկ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը չափելի է, մատչելի և հավաստի,
 - ✓ ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ծախսային գործակիցների ցուցանիշները և ընդհանուրի մեջ տվյալ գործակցի տեսակարար կշիռը,
 - ✓ որպես ծախսային գործակիցներ, առաջարկվող մոդելում օգտագործվում են մասշտաբի գործակիցը, տրանսպորտային մատչելիության գործակիցը, համայնքի ծառայությունների որակի գործակիցը, համայնքի բարձրադիմության գործակիցը, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցը և բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցը,

- քանի որ ՀՀ-ում կան փոքրաթիվ բնակչությամբ շատ համայնքներ, որոնք, նույնիսկ մեկ շնչին ընկնող բյուջետային ապահովության բարձր մակարդակի պայմաններում, չեն կարող ունենալ բավարար ֆինանսական միջոցներ պարտադիր լիազորությունների իրականացման համար, այդ համայնքներին համահարթեցման դոտացիաների կազմում նախատեսվում է ֆինանսական ուղղակի համալրման միջոցներ,
- համայնքներին հասանելիք համահարթեցման միջոցները համայնքների բյուջեներին հատկացվում են ամիսը մեկ անգամ, հավասար չափաբաժիններով:

Օրենքի նոր նախագծում օգտագործված է նոր հասկացություն՝ «համահարթեցման սահմանային մակարդակ», որը որոշիչ դեր է կատարում համայնքներին համահարթեցման դոտացիաներ հաշվարկելու ժամանակ: Դա արտահայտվում է նրանով, որ համահարթեցման դոտացիաներ ստանում են այն համայնքները, որոնք բյուջետային ապահովվածության գործակիցը համահարթեցման սահմանային մակարդակի արժեքից ցածր է:

Համահարթեցման սահմանային մակարդակի փոփոխության հնարավորությունը պետության համար լուրջ գործիք կարող է հանդիսանալ համայնքների որոշ խմբերի (աղքատ, հեռավոր, բարձրադիր, մի քանի բնակավայրերից բաղկացած և այլն) նկատմամբ ֆինանսական արդյունավետ քաղաքականություն իրականացնելու գործում:

Ֆինանսական համահարթեցման նոր մոդելը գործում խթան կարող է հանդիսանալ՝ համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման գործընթացների արդյունավետ իրականացման համար, ինչպես նաև կարող է զգալիորեն նպաստել ՀՀ կառավարության որդեգրած՝ տարածքների համաչափ զարգացման քաղաքականության իրականացմանը:

Պետական բյուջեի ծախսերում կարող են նաև նախատեսվել համայնքների բյուջեներին հատկացվող՝

- այլ դոտացիաներ՝ համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված, անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ,
- սուբվենցիաներ՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ:

ՀՀ կառավարությունն իրավասու է հետ պահանջել պետական բյուջեից համայնքին հատկացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված գումարները: Սուբվենցիաների տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Այլ եկամուտներ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտների մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն այլ եկամուտները: Դրանք են՝

ա) համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները. Համայնքներն այսօր օգտագործում են ինչպես սեփականության իրավունքով իրենց տրված, այնպես էլ իրենց վարչական տարածքում գտնվող պետական պահուստային հողերը, որոնց վարձակալությունից ստացված միջոցները մուտքագրվում են համապատասխան համայնքի վարչական բյուջե: ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն, հողերը պետք է տրամադրվեն մրցույթով, իսկ դրանց վարձակալական վճարները չպետք է ցածր լինեն հողի հարկի մեծությունից:

բ) համայնքային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտները. Փորձը ցույց է տալիս, որ ՏԻՄ-երին ենթակա բյուջետային հիմնարկների գույքի վարձակալությունից ստացվող մուտքերը մեծ չեն, քանի որ համայնքի բյուջետային հիմնարկների գույքը վարձակալության հանձնելու հնարավորությունները համայնքների մեծ մասում առայժմ փոքր են:

գ) վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները.

դ) համայնքի սեփականություն համարվող կազմակերպությունների տրամադրության տակ մնացած շահույթից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումները. Համայնքի բյուջեում այս գծով դժվար է լուրջ մուտքեր ակնկալել, քանի որ համայնքները հիմնականում չունեն շահութաբեր կազմակերպություններ:

ե) տեղական վճարները. Տեղական վճարների տեսակները, չափի սահմանման, հաշվարկման և գանձման կարգը սահմանված է «Տեղական տուրքերի և

վճարների մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի՝ տեղական վճարը ՏԻՄ-երի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար, օրենքով սահմանված կարգով և չափով, համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Տեղական վճարների դրույքաչափերը յուրաքանչյուր տարի սահմանվում են համայնքի ավագանու կողմից, մինչև բյուջեի հաստատումը, տվյալ գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով, որոնք համայնքի տարածքում միասնական են և անփոփոխ տվյալ տարվա համար: Համայնքի ավագանին, օրենքով սահմանված կարգով, կարող է սահմանել նաև տեղական վճարների արտոնություններ՝ վճարողի փոխարեն վճարը կատարելով համայնքի բյուջեից:

զ) համայնքային հիմնարկների կողմից առանց տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարները. Այս տեսակի եկամուտներ են համարվում, մասնավորապես, կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում համայնքի բյուջետային հիմնարկների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող ծնողական վճարները, որոնց դրույքաչափերը սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

է) պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման համար տրվող միջոցները. Համայնքների բյուջեներից պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին: Պատվիրակված լիազորությունները (այդ թվում՝ դրանց իրականացման ծախսերի ֆինանսավորումը) իրականացվում են օրենքով կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ը) օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրվող այլ եկամուտները:

Դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները

Համայնքի վարչական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներն են՝

ա) բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում առաջացող պակասուրդի ֆինանսավորման համար համայնքի բյուջեին պետական բյուջեից

և (կամ) այլ համայնքների բյուջեներից տրամադրվող բյուջետային փոխատվությունները. Համայնքը, վարչական բյուջեով նախատեսված ծախսերը ժամանակին կատարելու նպատակով, ավագանու որոշմամբ և պետական լիազորված մարմնի համաձայնությամբ, կարող է ստանալ բյուջետային փոխատվություններ՝ ինչպես պետական բյուջեից, այնպես էլ այլ համայնքների բյուջեներից: Այլ համայնքի բյուջեից փոխատվություն ստանալու համար պահանջվում է նաև փոխատվություն տրամադրող համայնքի ավագանու համաձայնությունը: Ընդ որում, համայնքը նոր փոխատվություն կարող է ստանալ նախկինում ստացված փոխատվության գծով պարտքն ամբողջությամբ մարելուց հետո:

բ) վարչական բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը. Համայնքի վարչական բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդն ուղղվում է՝
ա) նախորդ (եզրափակված) բյուջետային տարում վարչական բյուջեից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերի գծով՝ առկա պարտավորությունների կատարմանը,

բ) սույն մասի «ա» կետում նշված պարտավորությունները կատարելուց հետո առաջացած միջոցների մնացորդն ուղղվում է համայնքի ֆոնդային մաս՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ծախսերի ֆինանսավորման համար:

գ) համայնքի բյուջեից տրամադրված բյուջետային փոխատվությունների վերադարձից ստացվող միջոցները.

դ) բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածում վարչական բյուջեում առաջացող դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման համար, ավագանու առաջարկությամբ, « կառավարության որոշմամբ և սահմանած կարգով, տվյալ բյուջետային տարում ֆոնդային բյուջե վերադարձնելու պայմանով, համայնքի ֆոնդային բյուջեից ներգրավվող ժամանակավոր ազատ միջոցները. Ընդ որում, այդ միջոցների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել համայնքի տվյալ տարվա բյուջեի վարչական մասի եկամուտների գծով հաստատված տարեկան ընդհանուր գումարի և ֆոնդային մասից միջոցների ներգրավման ամսվա 1-ի դրությամբ համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների փաստացի մուտքերի ընդհանուր գումարի տարբերության 1/2-ը:

Համայնքի ֆոնդային բյուջեի մուտքերի ընդհանուր բնութագիրն ու այն կարգավորող օրենսդրական դաշտը

Համայնքի ֆոնդային բյուջեն մուտքերի գծով ներառում է (տե՛ս գծապատկեր 5)՝

Պաշտոնական դրամաշնորհներ

- ա) պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման *նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները,*
- բ) կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար *այլ աղբյուրներից* (հանրապետության այլ համայնքներից, միջազգային կազմակերպություններից, օտարերկրյա պետությունների ՏԻՄ-երից) ստացվող *նպատակային դրամաշնորհները:*

Այլ եկամուտներ

- ա) համայնքի սեփականությունը համարվող, ինչպես նաև տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ֆիզիկական և իրավաբանական անձանցից նվիրատվության կարգով համայնքին որպես սեփականություն անցած *գույքի օտարումից եկամուտները,*
- բ) տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ պետության, հանրապետության այլ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների ՏԻՄ -երի) նվիրատվության կարգով համայնքին որպես սեփականություն անցած *դրամական միջոցները,*
- գ) *վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները,*
- դ) «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքում՝ *բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարները:*

Պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ

Համայնքի ֆոնդային բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներն են՝

ա) պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ստացված վարկերը.

Համայնքի ղեկավարը, ավագանու որոշմամբ, համապատասխան պետական լիազորված մարմնի համաձայնությամբ, համայնքի սոցիալական ենթակառուցվածքը զարգացնելու նպատակով ներդրումներ կատարելու համար կարող է վարկ ստանալու պայմանագիր կնքել կամ թողարկել համայնքային արժեթղթեր՝ օրենքով սահմանված կարգով: Համայնքը, պետական լիազորված մարմնի համաձայնությամբ, կարող է վարկային պայմանագիր կնքել կամ արժեթղթեր թողարկել այն պայմանով, որ յուրաքանչյուր բյուջետային տարում վարկի և արժեթղթերի մարման ծրագրով նախատեսված տարեկան գումարը՝ մայր գումարի և տոկոսավճարների հանրագումարը, չի գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան տարվա ֆոնդային մասի եկամուտների 20 տոկոսը: Համայնքը նոր վարկ կարող է վերցնել նախորդ վարկային պարտքն ամբողջությամբ մարելուց հետո: Տվյալ վարկային միջոցները (ներառյալ՝ արժեթղթերի թողարկումից ստացվող միջոցները) պարտադիր ուղղվում են համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Վարկային պայմանագրի գրավ կարող են լինել միայն համայնքի բյուջեի եկամուտները և ՀՀ կառավարության երաշխիքները:

Համայնքի բյուջեի միջոցների հաշվին վարկեր և փոխատվություններ չեն տրվում (բացառությամբ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի) և արժեթղթեր չեն գնվում (բացառությամբ համայնքի կողմից ստեղծվող կամ ստեղծված բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի գնման դեպքերի):

բ) ՏԻՄ - երի թողարկված պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները.


ՏԻՄ-երի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կարգը սահմանում է կառավարությունը: Համապատասխան ինստիտուցիոնալ և իրավական բնույթի հարցերի կարգավորման դեպքում ՀՀ համայնքները կարող են ներգրավել էական ֆինանսական միջոցներ՝ ի հաշիվ համայնքային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման:

- գ) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից և օտարումից ստացվող միջոցները, որոնք ուղղվում են՝*
- Երևան քաղաքի համաքաղաքային կապիտալ բնույթի ծախսերի ֆինանսավորմանը՝ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից ստացվող մուտքերի 30 տոկոսի չափով,
 - ՀՀ մարզերում գտնվող համապատասխան համայնքի ֆոնդային բյուջե՝ ՏԻՄ-երին օրենքով վերապահված պարտադիր լիազորությունների ֆինանսավորմանը՝ այդ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության մասնավորեցումից ստացվող մուտքերի 30 տոկոսի չափով:
- Ընդ որում, համապատասխան ՏԻՄ-երը նշված միջոցները կարող են ուղղել բացառապես ՀՀ կառավարության սահմանած կարգով՝ նրա հետ համաձայնեցված ծրագրերի ֆինանսավորմանը:
- դ) ֆոնդային բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը:*

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցներ

- ա) համայնքային սեփականություն համարվող հիմնական միջոցների (հիմնական ֆոնդների) օտարումից մուտքերը* (այդ թվում՝ համայնքի սեփականություն հանդիսացող լուծարված կազմակերպությունների մնացորդային գույքի օտարումից ստացվող),
- բ) համայնքի սեփականություն համարվող բարձրարժեք ակտիվների օտարումից մուտքերը,*
- գ) համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը,*
- դ) համայնքի սեփականություն համարվող չարտադրված ակտիվների՝ հողի և ոչ նյութական չարտադրված ակտիվների օտարումից մուտքերը:*

Գծապատկեր 5. Համայնքի ֆոնդային բյուջեի մուտքերի կառուցվածքը



Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումը

ՀՀ համայնքների զարգացման ընթացքի կայունությունը ներկայումս և ապագայում կախված է լինելու համայնքների ֆինանսական հնարավորություններից՝ պայմանավորված բյուջետային մուտքերով: Կանխատեսել բյուջեի մուտքերը, նշանակում է՝ կազմել մի նախագիծ (նախահաշիվ), որտեղ արտացոլված է ՏԻՄ-երի կողմից հաջորդ ֆինանսական տարում ակնկալվող բոլոր մուտքերի գումարները և դրանց ստացման ժամանակահատվածը:

Նման կանխատեսումը շատ կարևոր է համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների պլանավորման գործընթացի համար: Ներկայումս ՀՀ համայնքների բյուջեների մուտքերը սահմանափակ են, ըստ այդմ, բնականաբար, բնակչությանը մատուցվող ծառայությունների ցանկը մեծ չէ և իրականացվում է փոքր ծավալներով: Այս պայմաններում բյուջեի մուտքերի կանխատեսումը տեղական իշխանություններին թույլ է տալիս ոչ միայն ավելի լավ հասկանալ, թե ի՞նչ ծառայություններ կարող են մատուցել բնակչությանը, այլև փնտրել եկամուտների նոր աղբյուրներ:

Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումը ընդգրկում է նրանց աղբյուրների տեսակների և այլընտրանքների կանխատեսումը:

Հիմք ընդունելով ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համայնքներին տրվող, համայնքի բյուջեի կազմման համար պարտադիր և խորհրդատվական բնույթ կրող մեթոդական ցուցումները՝ մուտքերի կանխատեսումն առաջարկվում է իրականացնել երկու մասով՝

- վարչական բյուջեի մուտքերի կանխատեսում,
- ֆոնդային բյուջեի մուտքերի կանխատեսում:

Վարչական բյուջեի մուտքերի կանխատեսումն ընդգրկում է մուտքերի հետևյալ տեսակները՝

- հարկային եկամուտներ,
- տուրքեր,
- պաշտոնական դրամաշնորհներ,
- այլ եկամուտներ,
- պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ:

Ֆոնդային բյուջեի մուտքերի կանխատեսումը ներառում է մուտքերի հետևյալ տեսակները՝

- պաշտոնական դրամաշնորհներ,
- այլ եկամուտներ,
- պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ,
- ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցներ:

Մուտքերի տարբեր տեսակները բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցության նկատմամբ կարող են լինել զգայուն և ոչ զգայուն: Այդ իսկ պատճառով, մուտքերի կանխատեսումը նախատեսում է մուտքերի խմբավորում՝ ըստ արտաքին և ներքին փոփոխականների նկատմամբ դրանց դիմադրողականության: Առավել կայուն մուտքերի տեսակներին կարելի է դասել բյուջեի հարկային եկամուտները (հողի հարկը և գույքահարկը): Մուտքերի մնացած բոլոր տեսակները կախված են բազմաթիվ արտաքին և ներքին փոփոխականների ազդեցությունից: Մուտքերի փոփոխման միտումները կանխատեսելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները՝

- քաղաքական և ֆինանսատնտեսական կայունության աստիճանը,
- օրենքի փոփոխությունները,
- ձեռներեցության (գործարարության) զարգացման միտումները,
- զնաճը,
- բնակչության վճարունակության աճը կամ նվազումը,
- մուտքային բազայի ընդլայնումը կամ սահմանափակումը,
- փոփոխությունները բանկային համակարգում,
- մուտքերի հավաքագրման աշխատանքների կազմակերպչական փոփոխությունները,
- ժողովրդագրական փոփոխությունները,
- մուտքերի ավանդական կամ ոչ ավանդական բնույթը և այլն:

Թվարկված գործոնների ազդեցության կարևորությունը տարբեր է՝ կախված նրանից, թե ո՞ր ժամանակահատվածի համար է արվում մուտքերի կանխատեսումը: Այսպես, օրինակ՝ եթե առաջիկա ֆինանսական տարվա բյուջեի մուտքերի կանխատեսումը կատարվում է ոչ կայուն ֆինանսատնտեսական իրավիճակի պայմաններում, երևի թե այս գործոնի ազդեցության նշանակությունը կարևոր է և նշանակալից: Առավել ևս, եթե կատարվում է մուտքերի ավելի երկարաժամկետ (երեք տա-

րի և ավելի) կանխատեսում, ապա ֆինանսատեսական իրավիճակի վատթարացման կամ բարելավման գործոնի հաշվի առնումը ավելի շատ է կարևորվում:

Կիրառվում են բյուջեի մուտքերի կանխատեսման տարբեր մեթոդներ՝ կախված նրանից, թե ի՞նչ աստիճանի ճշտությամբ է անհրաժեշտ անել կանխատեսումը, տեղեկատվության ի՞նչ ծավալ կա տրամադրության տակ, ի՞նչ մեծության համայնք է դիտարկվում, ո՞րն է այդ համայնքի ֆինանսական կառավարման խնդիրների բարդության աստիճանը: Կարող են կիրառվել մեթոդներ, որոնք պահանջում են ավելի քիչ ժամանակ և տեղեկատվություն, ինչպես նաև կանխատեսումը կատարող մասնագետների ավելի քիչ փորձառություն: Բարդ կանխատեսման մեթոդներն ավելի ծախսատար են, պահանջում են ավելի շատ ժամանակ և տեղեկատվություն: Բացի այդ, քանի որ առկա են մուտքերի վրա ազդեցություն գործող բազմաթիվ գործոններ, բարդ մեթոդներն ավելի հակված են համակարգային վերլուծությունների:

Թվարկենք բյուջեի մուտքերի կանխատեսման մի քանի մեթոդներ՝

Փորձագիտական կանխատեսումների դեպքում կարելի է նշել մուտքերի փոփոխման բազմաթիվ ուղղություններ: Նման կանխատեսման ժամանակ շատ դժվար է ասել, թե ո՞ր ուղղությունն է ամենաճիշտը: Փորձագիտական կանխատեսման ժամանակ մեծ դեր է հատկացվում փորձագետի ընտրությանը: Շատ կարևոր է, որ ընտրված փորձագետն ունենա գործնական մեծ փորձ, տիրապետի ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությանը: Միայն այդպիսի փորձագետը կարող է անել «լավագույն» ենթադրությունը համայնքի հաջորդ տարվա բյուջեի մուտքերի վերաբերյալ: Այս մեթոդի առավելությունն այն է, որ քիչ ծախս է պահանջում, սակայն այն ունի նաև որոշ բացասական կողմեր՝

- անհնար է գնահատական տալ, թե ինչո՞ւ է տվյալ կանխատեսումը ճիշտ կամ սխալ,
- փորձագետի՝ աշխատանքից հեռանալուց հետո, նրա կողմից կիրառված կանխատեսման մեթոդը կորչում է,
- մեթոդը ցանկալի չէ կիրառել այն դեպքում, երբ բյուջեի մուտքերը գտնվում են բազմաթիվ ներքին և արտաքին գործոնների ազդեցության տակ:

Միտումային կանխատեսումները թույլ են տալիս կատարել մուտքերի բավականին ճիշտ կանխատեսումներ՝ հիմնվելով մոտ անցյալի (վերջին 4-5 տարիների) բյուջետային տվյալների վրա: Այս մեթոդը կարելի է կիրառել այն դեպքերում, երբ կանխատեսվող մուտքի մեծությունը կամ չի փոփոխվելու կանխատեսվող ժամա-

նակահատվածի ընթացքում, կամ նրա աճի միտումը զգալի շեղումների չի ենթարկվելու՝ նախորդ տարիների համեմատությամբ: Այս մեթոդը կիրառելիս շատ օգտակար է գրաֆիկական վերլուծությունը, որը թույլ է տալիս նկատել միտումների զարգացման ուղղությունը:

Ղետերմինացիոն կանխատեսումները նախատեսում են կանխատեսման ընթացքում ղետերմինանտի կամ որոշիչի առկայությունը: Այս մեթոդը կիրառվում է այն դեպքերում, երբ առկա են նախապես հաստատված բանաձևեր կամ որոշ ենթադրություններ, որոնք պետք է քննության առնվեն մեթոդը կիրառելուց առաջ:

Էկոնոմետրիկ կանխատեսումները հիմնված են տնտեսագիտության մեջ կիրառվող վիճակագրական մեթոդների (օրինակ, գծային ռեգրեսիոն վերլուծության մեթոդի) վրա: Կանխատեսումների այս մեթոդը պահանջում է համապատասխան տեղեկատվության հավաքագրում՝ կանխատեսողների և քաղաքականություն մշակողների համար: Մեթոդը կանխատեսողին հնարավորություն է տալիս՝ վերլուծել մի շարք գործոնների զուգահեռ ազդեցությունը մուտքերի վրա և գնահատել, թե ինչպե՞ս է կախյալ փոփոխականը հարաբերակցվում մի քանի անկախ փոփոխականների հետ՝ օգտագործելով նախորդ ժամանակահատվածների ընթացքում դրանց հարաբերակցության տատանումները: Այս մեթոդը կիրառողները պետք է ուսումնասիրեն համայնքի նախկին տարիների բյուջեների մուտքերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները՝ փաստացի կատարողական տվյալներն օգտագործելու նպատակով, ինչպես նաև անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

Համայնքի բյուջեի մուտքերի կառավարումը

Համայնքի բյուջեի մուտքերի կառավարումը ՏԻՄ-երի նպատակաուղղված գործողություններն են՝ ուղղված համապատասխան կառավարչական որոշումների ընդունմանն ու կատարմանը: Դա ՏԻՄ-երից պահանջում է հետևողական աշխատանք և ամենօրյա հոգածություն: Համայնքի բյուջեի մուտքերի կառավարման էությունը բացահայտվում է համընդհանուր ճանաչում գտած կառավարման հիմնական գործառույթների միջոցով՝ պլանավորում, կազմակերպում, մոտիվացիա և վերահսկում:

ՏԻՄ-երը *պլանավորման* միջոցով պարզում են համայնքի բյուջեի մուտքերի շրջանակը, հստակեցնում են մուտքերի այն տեսակների բազաները, որոնց գանձման իրավասություններն օրենքով տրված են իրենց, կանխատեսում են մուտքերը հաջորդ տարվա և, անհրաժեշտության դեպքում, ավելի երկար ժամանակահատվածի համար: Մասնավորապես, համայնքի ավագանին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, հետո նոր՝ հաստատում համայնքի տարեկան բյուջեն:

Կազմակերպումն, առաջին հերթին, նշանակում է՝ համայնքի բյուջեի մուտքերն ապահովող կառուցվածքների ստեղծում, համապատասխան կադրերի հավաքագրում և տեխնիկական միջոցների ներգրավում: Կազմակերպումը նաև ենթադրում է *կարգավորում, կորորդինացում և համաձայնեցում՝* առաջադրված նպատակներին հասնելու գործընթացում:

Մոտիվացիան դիտարկվում է երկու ուղղություններով: Մի դեպքում, դա հարկատուների պահանջների և շահերի հաշվառումն է և դրանց հնարավորինս բավարարումը: Այլ խոսքերով՝ մոտիվացիան ՏԻՄ-երի կողմից հարկատուների շահագրգռումն է, որպեսզի նրանք բարեխղճորեն վճարեն իրենց հարկերը, տուրքերը և վճարները: Դա կատարվում է, մասնավորապես, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի ճիշտ սահմանմամբ, համայնքի բյուջեն արդյունավետ օգտագործելու միջոցով: Մյուս դեպքում, մոտիվացիան բյուջեի մուտքերն ապահովող աշխատողների շահագրգռումն է՝ հասնելու մուտքերի հավաքագրման բարձր արդյունքների՝ աշխատավարձերի ու հավելավճարների արդյունավետ համակարգերի, նյութական և բարոյական խթանման ձևերի սահմանման և կիրառման միջոցով:

Վերահսկման գործընթացը ենթադրում է մուտքերի հստակ հաշվառում և հավաքագրում, կանխատեսված պլաններից շեղումների պարզաբանում և ճշգրտում, ստացված արդյունքների գնահատում և շտկող գործողությունների կատարում:

Համայնքի բյուջեի մուտքերի կառավարումն իրականացնելիս, կառավարման սուբյեկտներից յուրաքանչյուրը (համայնքի ավագանին և համայնքի ղեկավարն իր աշխատակազմով և ենթակա կազմակերպություններով) ունեն օրենքով սահմանված իրենց իրավասությունների շրջանակը, իրականացնում են կառավարման ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրահատուկ գործառնություններ:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԼՔԵՐՈՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բյուջետային ելքերի դասակարգումը

Համայնքի բյուջեի ելքերի շրջանակը բավականին լայն է: Այն արտացոլում է ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման ուղղությունները գործառական, գերատեսչական, տնտեսագիտական, տարածքային առումներով: Դրանից ելնելով՝ համայնքային ծախսերի արդյունավետ կառավարման համար կարևոր նշանակություն ունի դրանց այնպիսի դասակարգումը, որը թույլ է տալիս ապահովել բյուջետային ցուցանիշների համադրելիությունը, համեմատությունը, ծախսերի արդյունավետ վերլուծությունը, վերահսկողությունը և այլն: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքների բյուջեների ծախսերը դասակարգվում են ըստ՝


- ՏԻՄ-երի գործառույթների,
- գերատեսչական բաշխվածության,
- տնտեսագիտական բովանդակության,
- տարածքային բաշխվածության:

Բյուջեների ծախսերի **գործառական (ֆունկցիոնալ) դասակարգումը** ՏԻՄ-երի հիմնական գործառույթների իրականացման ֆինանսավորման հիմնական ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է: Գործնականում ծախսերի գործառական դասակարգումը կատարվում է ըստ հիմնական բաժինների, խմբերի, դասերի, ծրագրերի և ենթածրագրերի, որտեղ հիմնական բաժինները, խմբերը և դասերը արտահայտում են համայնքի ընդհանուր խնդիրները, իսկ ծրագրերում և ենթածրագրերում արտացոլվում են դրանց իրականացման միջոցները: ՀՀ համայնքների, ինչպես վարչական, այնպես էլ ֆոնդային բյուջեների կտրվածքով, հիմնական գործառույթների իրականացման ֆինանսավորման ծախսային բեռը կրող կարևորագույն ուղղությունները բերված են գծապատկեր 6 – ում :

Համայնքների բյուջեների ծախսերի **տնտեսագիտական դասակարգումը** ծախսերի խմբավորումն է՝ դրանց տնտեսագիտական բովանդակությամբ համապատասխան: Այն ունի հետևյալ կառուցվածքը (տես գծապատկեր 7)՝

- ընթացիկ ծախսեր,
- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր:

Գծապատկեր 6. Համայնքի բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառական դասակարգման



Գծապատկեր 7. Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

/հազ. դրամ/

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Հոդվածի կոդը	Ընդամենը	Այդ թվում	
			Վարչական մաս	Ֆոնդային մաս
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)	X			
Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝	X			
1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ սոցիալական ապահովության վճարներ	X			X
2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՌՔԵՐՈՒՄ	X			X
3. ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	X			X
4. ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	X			X
5. ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ	X			X
6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	X			X
7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ պահուստային միջոցներ	X			
Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ՝	X		X	
1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	X		X	
2. ՊԱՇՏՆԵՐ	X		X	
3. ԲԱՐՉՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ	X		X	
4. ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ	X		X	

Համայնքների բյուջեների ծախսերի գերատեսչական դասակարգումը ծախսերի խմբավորումն է՝ ըստ բյուջետային միջոցների անմիջական ստացողների՝ ՏԻՄ-երի գերատեսչական կառուցվածքների, օրինակ՝ կրթական, մշակութային, մարզական հաստատությունների և այլն:

Այսպիսով, ընդհանրացրած տեսքով, ելքերի գծով համայնքի բյուջեն իր մեջ ներառում է՝

- օրենքով սահմանված կարգով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման ընթացիկ և կապիտալ ծախսերը,

- վարչական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման համար պետական բյուջեից և (կամ) այլ համայնքների բյուջեներից ներգրավված բյուջետային փոխատվությունների մարումները, ինչպես նաև վարչական բյուջեից բյուջետային փոխատվությունների տրամադրումը,
- ֆոնդային բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով ներգրավված վարկերի և ՏԻՄ-երի թողարկած պարտատոմսերի մարումները և բյուջետային փոխատվությունների տրամադրումը,
- վարչական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով՝ ֆոնդային բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների հատկացումները:

Ֆոնդային բյուջեի ելքերը՝ այն բոլոր կապիտալ ծախսերն են, որոնք իրենց մեջ ընդգրկում են ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակներում կատարվող գործառույթների բոլոր կապիտալ ներդրումների և կապիտալ վերանորոգումների ծախսերը, ինչպես նաև ներգրավված վարկերի և ՏԻՄ -երի թողարկած պարտատոմսերի մարումները:

Կապիտալ ծախսերը ներառում են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը: Կապիտալ ծախսերը կատարվում են ՏԻՄ-երի ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր լիազորությունների իրականացման շրջանակներում: Դրանք ներառում են բոլոր այն ծախսերը, որոնք վերաբերում են կապիտալ ներդրումներին (այդ թվում՝ կապիտալ շինարարությանը, հիմնական ֆոնդերի ձեռքբերմանը և այլն), կապիտալ նորոգմանը, պահուստների ձևավորմանը և այլն:

Կապիտալ ներդրումների ծախսերի կատարման համար պահանջվում է երկար ժամանակ, որպես կանոն՝ մեկ տարուց ավելի: Այդ առումով, կապիտալ ներդրումների նախագծերը պետք է մաս կազմեն համայնքի զարգացման քառամյա ծրագրին և համապատասխան չափով արտացոլվեն տվյալ տարվա բյուջեում:

Ընդհանրապես, որևէ նախագիծ, ծրագիր կամ ենթածրագիր, որպեսզի ֆինանսավորվի ֆոնդային բյուջեից, պետք է բավարարի որոշակի չափանիշների: Չափանիշներ կարող են հանդիսանալ ֆինանսավորվող նախագծի գումարի մեծությունը, ֆինանսավորման ժամկետը և այլն:

Համայնքի վարչական և ֆոնդային բյուջեները փոխկապակցված են և ազդում են միմյանց վրա: Իրականացվող ներդրումային ծրագրերը շատ հաճախ գոյացնում են լրացուցիչ ֆունկցիոնալ ծախսեր՝ պահանջելով նոր աշխատողներ և դրանց համապատասխան վարձատրություն, գույքի ընթացիկ ձեռքբերում, ընթացիկ նորոգման ծախսեր և այլն: Կապիտալ ծախսերն, այլ դեպքերում, դրական ազդեցություն են թողնում վարչական բյուջեի վրա: Տարատեսակ ենթակառուցվածքների՝ մանկապարտեզների, մասնագիտացված դպրոցների, կենսապահովման ենթակառուցվածքների, փողոցների և այլնի բարելավումը կնվազեցնի դրանց վրա, հաջորդ մի քանի տարիներին, վերանորոգման գծով կատարվող ընթացիկ ծախսերը:

Ընթացիկ ծախսերի կազմը և կառուցվածքը, կապիտալ ծախսերի հարաբերակցության հետ մեկտեղ, արտացոլում են համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, հնարավորությունները, զարգացման նախապատվելի ուղղությունները, առաջադրված հիմնախնդիրների լուծման ձևերն ու մեթոդները, ընդհանրապես՝ համայնքի ֆինանսական քաղաքականության բնույթը: Այստեղ, ինչպես հայելու մեջ, արտացոլվում են համայնքի տնտեսական և սոցիալական քաղաքականությունը, հանրային գործընթացների կառավարման մեթոդները:

Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը

Համայնքների բյուջեներին պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվող հատկացումների հաշվին:

Պատվիրակված լիազորությունները (այդ թվում՝ դրանց իրականացման ծախսերի ֆինանսավորումը) իրականացվում են ՀՀ օրենքով կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդը

Համայնքի բյուջեի ծախսերի գործառական դասակարգման մեջ յուրահատուկ նշանակություն ունի պահուստային ֆոնդը, որը կարող է օգտագործվել տվյալ

տարվա բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման համար: Մյուս կողմից, պահուստային ֆոնդը համայնքի կողմից վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ստանձնած պարտքային պարտավորությունների կատարման ապահովման ֆինանսական աղբյուր է:

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կարող է նախատեսվել համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների 5-ից 20 տոկոսի չափով:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասում կարող է ձևավորվել պահուստային ֆոնդ, որը չի կարող գերազանցել համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 30 տոկոսը:

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կարող են ֆինանսական միջոցներ ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի պահուստային ֆոնդերը կարող են օգտագործվել միայն համայնքի ավագանու որոշմամբ:

Ծախսերի զանազան տեսակներ

Ըստ կատարման անհրաժեշտության, բյուջետային ծախսերը բաժանվում են երկու մասի՝ պարտադիր և ոչ պարտադիր ծախսերի: *Պարտադիր ծախսերն* այն ծախսերն են, որոնք բյուջետային տարվա որոշակի ժամանակահատվածներում ենթակա են առաջնահերթ և պարտադիր կատարման: Դրանք են՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերի և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները, վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների օգտագործման գծով ծախսերը և այլն: *Ոչ պարտադիր ծախսերն* այն ծախսերն են, որոնց կատարումը ժամանակի առումով ֆիքսված չէ և կախված է դրամական մուտքերի հոսքից, օրինակ՝ նյութերի ձեռքբերման, վերանորոգման, բարեկարգման ծախսերը և այլն:

Պարտադիր և ոչ պարտադիր ծախսերի պլանավորման և կատարման ժամանակ կարգավորիչ դեր կարող է խաղալ բյուջեի պահուստային ֆոնդը:

Ծախսերի հոսքի պլանավորման ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև որոշ *ծախսերի սեզոնային բնույթը*: Օրինակ՝ փողոցների վերանորոգման, շինարարության, կանաչապատման աշխատանքներն անհնար է իրականացնել

տարվա ցուրտ ամիսներին, մյուս կողմից՝ այդ ամիսներին անհրաժեշտ է կատարել ջեռուցման, փողոցները ձյան և սառույցի ծածկույթից մաքրելու ծախսերը:

Բյուջեի ծախսերի պլանավորման, ինչպես նաև ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության գնահատման տեսանկյունից ելնելով՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև *կայուն և փոփոխական ծախսերի* հարաբերակցությունը ընդհանուր ծախսերում: Կայուն ծախսերն այն ծախսերն են, որոնք անմիջական կախվածություն չունեն ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների ծավալից և տարեցտարի չնչին փոփոխություններով ներգրավվում են բյուջետային ծախսերի մեջ: Օրինակ՝ այդպիսի ծախսեր են համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերը, ընթացիկ վերանորոգման ծախսերը և այլն, որոնք համարյա չեն փոփոխվում մատուցվող ծառայությունների ծավալների մեծացման կամ փոքրացման հետ:

Փոփոխական ծախսերն այն ծախսերն են, որոնք կատարվում են իրականացվող աշխատանքի (մատուցվող ծառայության) միավորի վրա և անմիջականորեն կախված են դրա ծավալներից: Դրանց թվին են դասվում մատուցվող ծառայության համար անհրաժեշտ հիմնական և օժանդակ նյութերի, կիսաֆաբրիկատների, գործիքների, վառելիքի արժեքը, բանվորների աշխատավարձը և այլն, այսինքն՝ այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են տվյալ ծառայության կամ աշխատանքի տեխնոլոգիական ցիկլի կատարման համար: Օրինակ՝ համայնքի մեկ հեկտար տարածքի կանաչապատման և խնամքի համար անհրաժեշտ տնկիների, ջրող մեքենաների վառելիքի և քսայուղերի, թունաքիմիկատների, ոռոգման ջրի, գործիքների, խնամող բանվորների աշխատավարձի և այլ ծախսեր: Կատարվող աշխատանքի (մատուցվող ծառայության) ծավալների մեծացման կամ փոքրացման հետ, այդ ծախսերն ուղղակիորեն մեծանում կամ փոքրանում են:

Փոփոխական ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում արտահայտում է ՏԻՄ-երի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների ծավալները և մակարդակը:

6. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունները հաստատելու ուղղությամբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

Առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսվում է դրա մասին ՀՀ վարչապետի որոշման ընդունման օրը և ավարտվում՝ տվյալ բյուջետային տարվա բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը: ՀՀ-ում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին: Բյուջետային տարվան հաջորդող տարվա առաջին ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ կարող է շարունակվել նախորդ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը (եզրափակիչ շրջանառություն), եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան չի նախատեսվել:

ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետներում պետական լիազորված մարմինը (ՀՀ ֆինանսների նախարարությունը) մշակում և մարզպետարանների միջոցով ՏԻՄ-երին է տրամադրում վերջիններիս համար պարտադիր և խորհրդատվական բնույթ կրող մեթոդական ցուցումներ, որոնք բյուջետային գործող օրենսդրության շրջանակներում կանոնակարգում են համայնքի տվյալ տարվա բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր տարի կոնկրետացնելով համայնքի բյուջեի կազմման հիմքում դրվող՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով և նպատակային դրամաշնորհների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային տվյալների ներկայացման կարգը և ժամկետները, պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման և նպատակային հատկացումներ ստանալու նպատակով ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները, բյուջետային ծախսերի նախահաշիվների ձևերը, բյուջետային միասնական ձևերը, և այլ ցուցումներ ու դրույթներ:

ՀՀ համայնքներում բյուջետային գործընթացն իրականացվում է՝ ելնելով ՏԻՄ-երի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի դրույթներից և

պահանջներից: ՀՀ սահմանադրությունը, դրանում ամրագրված հիմնադրույթները զարգացնող «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները սահմանում են բյուջետային գործընթացի մասնակիցների կազմը, այդ ոլորտում վերջիններին վերապահված իրավասությունները, նրանց փոխհարաբերությունները, իրավասությունների իրականացման եղանակները և ժամկետները: «Հարկերի մասին», «Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին», «Պետական տուրքի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին», «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող` ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին», ինչպես նաև ամեն տարի ընդունվող «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքները և դրանց կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը կարգավորում են համայնքների բյուջեների եկամտային մասի ձևավորման հարցերը: Օրենքով և այլ իրավական ակտերով կանոնակարգվում են համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (ներառյալ հողը), ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստի հողերի վարձակալության տրամադրելու ընթացակարգերը, ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին վարկերի, ՀՀ պետական բյուջեից և համայնքների բյուջեներից այլ համայնքների բյուջեներին փոխատվությունների հատկացման և ՀՀ պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգերը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով կանոնակարգվում է նաև համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, նրա աշխատակազմի թվաքանակը և վարձատրության չափերը: Պարբերաբար, օրենքով սահմանվում է նաև ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի չափը: Ընդունվել են նաև վերը նշված օրենքների և ՀՀ կառավարության որոշումների կիրարկումն ապահովող զանազան գերատեսչական իրավական նորմատիվ ակտեր:

Համայնքի բյուջետային գործընթացը կազմակերպվում և իրականացվում է երեք հիմնական փուլերով`

- բյուջեի նախագծի կազմում և հաստատում,
- բյուջեի կատարում և վերահսկում,
- բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում:

Բյուջետային գործընթացի առաջին փուլն սկսվում է կանխատեսվող տարվան նախորդող տարվա սկզբին և տևում է շուրջ մեկ տարի: Համայնքի բյուջեի

նախագիծը կազմելու նպատակով՝ համայնքի ղեկավարը մշակում և իր որոշմամբ (կարգադրությամբ) ընդունում է բյուջեի նախագծի կազմման օրացույց (բյուջետային օրացույց), որի պայմանական ձևը բերված է գծապատկեր 8-ում:

Երկրորդ փուլի տևողությունը կազմում է ուղիղ մեկ տարի, ընդ որում այդ փուլը սկսվելու և ավարտվելու ժամկետները ամբողջապես համընկնում են կանխատեսվող բյուջետային տարվա ժամկետների հետ (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը):

Երրորդ փուլն սկսվում է բյուջետային տարվա ավարտին հաջորդող օրվանից: Ըստ օրենքի, բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացնում է ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը, իսկ ավագանին, աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ, այն քննարկում և հաստատում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 20-ը:

Տվյալ տարվա բյուջետային գործընթացի ընդհանուր տևողությունը համայնքներում, որպես կանոն, գերազանցում է երկու տարին: Բյուջետային գործընթացն ենթադրում է՝

- բյուջետային գործընթացում շահագրգիռ բոլոր կողմերի ակտիվ ներգրավում,
- ֆինանսական միջոցների պլանավորում համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիման վրա,
- բյուջեների մշակում, հաստատում և կատարում ՀՀ օրենքով ու նորմատիվային ակտերով սահմանված կարգով ու ժամկետներում,
- բյուջետային գործընթացի թափանցիկության, հրապարակայնության ապահովում:


Գծապատկեր 8. Բյուջետային օրացույցի ձև

(ՀՀ պայմանական համայնքի համար, պայմանական ժամկետներով)


Ժամկետը	Աշխատանքները	Պատասխանատու կատարող
մինչև մայիսի 1	Համայնքում բյուջետային գործընթացի կազմակերպման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշման ընդունում, բյուջետային օրացույցի մշակում և հաստատում, նախապատրաստական աշխատանքների կատարում	համայնքի ղեկավար, նրա աշխատակազմ
մինչև հունիսի 1	Համայնքի գալիք տարվա բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանում	համայնքի ղեկավար և ավագանի
հունիսի 1-30	Մեթոդական ցուցումների, եկամուտների ու ծախսերի հաշվարկման սահմանված ձևերի տրամադրում բաժինների, բյուջետային հիմն-երին և ձեռնարկություններին	ֆին. բաժին, ծրագրերի բաժին
հուլիսի 1-15	Եկամուտների նախահաշիվների կազմում և ծախսերի հիմնական ուղղությունների որոշում	ֆին. բաժին
հուլիսի 16 - օգոստոսի 15	Բաժինների, բյուջետային հիմնարկների, համայնքային ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից ծախսային հայտերի, ծրագրերի և դրանց հիմնավորումների կազմում և ներկայացում համայնքի ղեկավարին	բաժիններ, բյուջետ. հիմնարկներ, համայնք. ձեռն-եր և կազմակերպ-եր
օգոստոսի 16-31	Ներկայացված հայտերի, ծրագրերի նախնական քննարկում ներկայացնողների մասնակցությամբ	համ. ղեկ., ֆին. բաժին, ծրագր. բաժին
սեպտեմբերի 1-25	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի կազմում	ֆին. բաժին
սեպտեմբերի 26 - հոկտեմբերի 3	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում	համայնքի ղեկավար
հոկտեմբերի 4-10	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի մեջ առաջարկված փոփոխությունների կատարում	ֆին. բաժին
հոկտեմբերի 11-20	Փոփոխությունների կատարում բյուջետային հատկացումների մեջ՝ հաշվի առնելով պետական բյուջեից համայնքի բյուջեին տրվող հատկացումների չափը	ֆին. բաժին
հոկտեմբերի 21-25	Բյուջեի նախագծի վերջնական տարբերակի քննարկում ֆինանսական բաժնում	ֆին. բաժին
հոկտեմբերի 26-31	Բյուջեի նախագծի քննարկում համայնքի ղեկավարի մոտ	համայնքի ղեկ.
նոյեմբերի 1-20	Բյուջեի նախագծի հանրային քննարկումներ	համայնքի ղեկ.
նոյեմբերի 20-30	Քննարկումների արդյունքներով բյուջեի նախագծում փոփոխությունների և լրացումների կատարում	ֆին. բաժին
դեկտեմբերի 1-10	Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի կազմում և ներկայացում ավագանու անդամներին	համայնքի ղեկավար
դեկտեմբեր 11-25	Բյուջեի քննարկում և հաստատում ավագանու կողմից	համայնքի ավագանի
հունվարի 1	Ֆինանսական տարվա սկիզբ	

Այսպիսով, համայնքի բյուջետային գործընթացը (տե՛ս գծապատկերներ 9, 10) պետք է լինի ծրագրավորված և կանոնակարգված, ինչը պահանջում է գործընթացի կազմակերպման նախապատրաստում (համայնքի ղեկավարի որոշումը (կարգադրությունը) բյուջետային գործընթացը սկսելու նսաին, բյուջետային օրացույցի կազմում, բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների որոշում, մեթոդական ցուցումների և բյուջետային ձևերի մշակում), ակնկալվող եկամուտների աղբյուրների և ծավալների որոշում, նախատեսվող ծախսերի հիմնական ուղղությունների ձևավորում, բյուջեի ֆինանսական հնարավորությունների և հայտերի համատեղելիության ստուգում, բյուջեի նախնական նախագծի կազմում, բյուջեի հանրային քննարկումների կազմակերպում և հրապարակայնության ապահովում, բյուջեի վերջնական նախագծի կազմում և համայնքի ավագանուն ներկայացում, բյուջեի հաստատում, կատարում, վերահսկում և զնահատում, բյուջեի կատարման հաշվետվությունների կազմում և հաստատում:

Գծապատկեր 9. Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպումը



Գծապատկեր 10. Համայնքի բյուջեի կազմման գործընթացը և մասնակիցները
Մասնակիցներ



7. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԻՏԱԼ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄԸ

Առանձնացված կապիտալ բյուջետավարում⁷

Կապիտալ (ֆոնդային) և վարչական բյուջեների մշակման առանձնացումը կարևոր նշանակություն ունի մի քանի պատճառներով: Նախ՝ կապիտալ ծախսերը հաճախ կատարվում են մեկանգամյա, նախանշված աղբյուրներից, ինչպես օրինակ՝ ներգրավված փոխառու միջոցներից կամ կապիտալ դրամաշնորհներից: Բյուջեում կապիտալ ծախսերի առանձնացումն օգնում է ներդրումների հստակ կատարմանը նախատեսված նպատակներով:

Կապիտալ և վարչական բյուջեների մշակման առանձնացման **երկրորդ** պատճառը որոշումներ ընդունելու գործընթացների տարբերությունն է: Կապիտալ բյուջեն կազմելու ժամանակ դրա մեջ ներառվում է կապիտալ ծրագրերի ցանկը, այնուհետև որոշվում է դրանց առաջնահերթությունը՝ համեմատելով միմյանց հետ: Այդ ծրագրերի ֆինանսավորմանն ու իրականացմանը զուգընթաց, ցանկի մեջ կարող են ներառվել նոր ծրագրեր, և այս գործընթացը տարեցտարի շարունակում է կրկնվել: Հակառակ սրա, վարչական բյուջեով նախատեսված ընթացիկ ծախսերի մեծ մասը կրկնվում է հաջորդ տարի, և այդ ծախսերը միմյանց հետ համեմատելու, ըստ կարևորության դասակարգելու և դրանց առաջնահերթությունը որոշելու կարիքն առանձնապես չկա:

Կապիտալ բյուջեն առանձին կազմելու գործընթացի **երրորդ** պատճառն այն է, որ կապիտալ ծրագրերի իրականացման ժամանակահատվածը մեծամասամբ տարբերվում է ընթացիկ ծախսերի կատարման ժամանակահատվածից: Վարչական բյուջեում նախանշված բոլոր ծախսերը նախատեսվում և իրականացվում են տվյալ ֆինանսական տարվա ընթացքում: Հակառակ դրա, կապիտալ ծրագրերի մշակումն ու իրականացումը կարող է տարիներ տևել: Այստեղ լայնամասշտաբ պլանավորման և վերանայման անհրաժեշտություն կա մի քանի պատճառ-

⁷ Սույն գլխում ներկայացվում է առանձնացված կապիտալ բյուջետավարման ընդհանուր նկարագրությունը՝ հիմնվելով ամերիկյան փորձի վրա, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ և ԱՄՆ տեղական ինքնակառավարման համակարգերն ու դրանք կարգավորող օրենսդրական դաշտերն էականորեն տարբերվում են միմյանցից:

ներով: Նախ՝ կապիտալ ծրագրում թույլ տրված որևէ սխալի ուղղումը կարելի է անել միայն որոշակի լրացուցիչ ծախսեր կատարելու միջոցով, իսկ վարչական բյուջեում թույլ տրված սխալը կարելի է վերանայել հաջորդ տարի կամ նույնիսկ ընթացիկ տարում: Երկրորդ՝ կապիտալ ծրագրերը, հատկապես՝ ենթակառուցվածքային ծրագրերը, միմյանց հետ կապակցվածություն ունեն, և անհրաժեշտ է մեծ խնամքով վերաբերվել դրանց իրականացման հաջորդականությանը: Օրինակ՝ ջրագծերի և կոյուղագծերի փոխարինման ծրագիրը պետք է նախորդի փողոցների ասֆալտապատման ծրագրին:

Բյուջեի երկու մասերի ծախսերի կատարման համար նախատեսվող ժամանակահատվածները նաև տարբեր են, քանի որ կապիտալ ծախսերի չափերը սովորաբար տարբեր են, կապիտալ ծրագրերը թանկ են լինում և հաճախ համատեղվում են, մինչդեռ ընթացիկ ծախսերը սովորաբար սահուն են ընթանում և դրանց համար ավելի շատ բնորոշ է աստիճանական և կայուն աճը, քան կտրուկ տատանումները: Կապիտալ բյուջեի ՏԻՄ-երին ծախսերը վաղօրոք պլանավորելու շատ ավելի մեծ հնարավորություն է տալիս, քան՝ վարչական բյուջեի, դրանով իսկ հնարավոր դարձնելով միջոցների խնայումը մեծ ծրագրերի համար կամ ծախսերի առավել հավասարաչափ բաշխումը մի քանի տարվա ժամանակահատվածի վրա:

Եվ ի վերջո, կապիտալ ծրագրերը, որոնց իրականացմանը հաճախ խանգարում են ի հայտ եկող փոփոխություններն ու գերածախսերը, ավելի մանրակրկիտ վերահսկում են պահանջում, քան շարունակական ծախսերը: Առանձնացված կապիտալ բյուջետավարումը ենթադրում է՝ առավել խնամքով կատարել կապիտալ ծրագրերի իրականացման վերահսկում, ավելին, այն թույլ է տալիս վարել կապիտալ ծրագրերի իրականացման առանձին հաշվապահություն՝ նպաստելով ծախսերի արդյունավետ վերահսկողությանը:

Առանձնացված կապիտալ բյուջետավարումը հնարավորություն է տալիս վերլուծել և գնահատել համայնքի հնարավորությունները՝ իրենց կապիտալ արժեքների պահպանման, վերարտադրման և ընդլայնման ուղղությամբ: Գաղտնիք չէ, որ Հայաստանի համայնքների գերակշիռ մասում դեռևս չկան բավարար կապիտալ միջոցներ՝ ոչ միայն նոր կապիտալ արժեքներ ստեղծելու, այլև առկա կապիտալ արժեքները զոնե պահպանելու համար: Իրադարձությունների նման ընթացքը տանում է դեպի համայնքների՝ առկա կապիտալ արժեքների անվերականգնելի մաշման և աստիճանաբար վերացման, քանի որ ՀՀ համայնքների մեծ

մասը, ներկայիս իրենց ֆինանսական սուղ ներուժով, անգամ լավագույն ցանկությունների դեպքում, անկարող է ինքնուրույն փոխել այս իրավիճակը:

Կապիտալ բյուջետավարման համայնքային դերակատարները

Շատ կարևոր է, թե ո՞վքեր են կապիտալ բյուջետավարման գործընթացի համայնքային դերակատարները: ՀՀ համայնքներում կապիտալ բյուջեի կազմման գործընթացը տանում են համայնքների ղեկավարների աշխատակազմերի այն նույն ստորաբաժանումները, որոնք զբաղվում են նաև վարչական բյուջեի կազմմամբ: Եվ ՀՀ նույնիսկ համեմատաբար մեծ ու հարուստ համայնքներն ի գործու չեն իրենց թույլ տալ այնպիսի շքեղություն, ինչպիսին է կապիտալ բյուջետավարման համար առանձին ստորաբաժանում պահելը: Այդուհանդերձ, օգտակար է ծանոթանալ, թե, օրինակ՝ ԱՄՆ համայնքներում, կառավարման ի՞նչ օղակներում է կազմակերպվում առանձնացված կապիտալ բյուջետավարման գործընթացը:

Խնդրո առարկա գրականության մեջ չի առաջարկվում կապիտալ բյուջեի կազմման հանձնարարումը ՏԻՄ-երի կառավարման օղակներից կոնկրետ որևէ մեկին: Սակայն, առավել տրամաբանական է, որ այդ օղակը **կարող է լինել** համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական կամ բյուջետային բաժինը, քանի որ կապիտալ բյուջե կազմելու համար անհրաժեշտ հմտությունները պահանջվում են նաև վարչական բյուջեն կազմելու համար: Ինչպես և վարչական բյուջեն, կապիտալ բյուջեն ևս պահանջում է ժամանակացույցեր, ձևեր, ուղեկցող փաստաթղթեր, բյուջետային լսումների կամ հանրային քննարկումների կազմակերպում և վերջնական նախագծի պատրաստում: Միաժամանակ, եթե կապիտալ բյուջեն կազմվում է այլ ստորաբաժանումում, ապա դրա ազդեցությունը վարչական բյուջեի վրա (ինչպես և հակառակը) լիարժեք չի արտահայտվում և ապահովվում:

Կապիտալ բյուջեի կառավարման օղակի **մեկ այլ** հնարավոր **տարբերակ** է աշխատակազմի ծրագրերի կամ պլանավորման բաժինը, որը մշտապես զբաղվում է միջնաժամկետ և հեռանկարային պլանավորման աշխատանքներով: Բացի այդ, եթե գոյություն ունի համայնքի զարգացման ռազմավարական ծրագիր (պլան), ապա կապիտալ բյուջեի կազմումը ծրագրերի բաժնին հանձնարարելը նպաստում է նախատեսված ծրագրերի իրականացմանը: Երբ կապիտալ բյուջեի կազմման պարտականությունները դրվում են ծրագրերի բաժնի վրա, ապա

գլխավոր շեշտը դրվում է համայնքում ծառայությունների մակարդակը բարձրացնելու և ծրագրեր հայթայթելու վրա: Այս մոտեցումը ավելի շատ հաշվի է առնում ակնկալվող կարիքները, քան անմիջական պահանջները, և այդ պատճառով կարող է ավելի ծախսատար լինել, քան՝ անմիջական պահանջի վրա հիմնված համակարգի դեպքում: Այն նաև կարող է առաջ բերել մի շարք սոցիալական և քաղաքական հիմնախնդիրներ: Նախ, համայնքի բնակիչները կարող են առարկել՝ համարելով, որ այդպիսի ծախսեր կատարելը դեռևս անհրաժեշտ չեն, մասնավորապես, եթե այդ ծախսերը պահանջում են լրացուցիչ վճարումներ բնակիչների կողմից: Երկրորդ, այնպիսի գործընթացի ժամանակ, որի մեջ պլանավորումը գերակայում է, առավել կարիքավոր թաղամասերը ավելի մեծ թվով ծրագրերից են օգտվում՝ անկախ համայնքային խորհրդի (ավագանու) անդամների կարծիքից: Եվ վերջապես, կապիտալ բյուջեի կազմումը ծրագրերի բաժնին հանձնելը կարող է հակամարտություն առաջ բերել աշխատակազմի տարբեր բաժինների պետերի միջև, ովքեր կարող են մտածել, որ կապիտալ ծրագրեր հայթայթելու իրենց դերը կարող է նսեմացվել ռազմավարական պլանով թելադրված կարիքների պատճառով:

Երրորդ տարբերակը կապիտալ պլանավորման և բյուջետավարման գործընթացի պատասխանատվությունը առանձին բաժնի վրա դնելն է: Կազմակերպական այսպիսի կարգն ունի երկու սկզբունքային թերություն: Նախ՝ աշխատակազմի այլ բաժիններին կարող է դուր չգալ այն փաստը, որ իրենց կապիտալ պահանջները տնօրինի մեկ այլ բաժին: Երկրորդ, կապիտալ և վարչական ծախսերի փոխկախվածությունը կարող է լիովին չապահովվել:

Եթե արտակարգ ոչինչ տեղի չի ունենում, ապա լավագույն լուծումը կլինի կապիտալ բյուջեի կազմման գործառնության հանձնումը ֆինանսական կամ բյուջետային բաժնին: Իսկ եթե կապիտալ պլանավորումն ու բյուջետավարումը համայնքում տարիներ շարունակ այս կամ այն պատճառով անտեսվել են և ենթակառուցվածքները վատ վիճակում են, ապա կարելի է ավելի մեծ դեր հատկացնել աշխատակազմի ծրագրերի կամ պլանավորման բաժնին: Կապիտալ բյուջե կազմելու գործառնությամբ ֆինանսական բաժնից դուրս իրականացնելը, մի կողմից, որոշ առավելություններ ունի, բայց, մյուս կողմից, այն կարող է ստեղծել որոշ հիմնախնդիրներ, որոնք որոշակի ուշադրություն են պահանջում: Հետաքրքիր է, որ նույնիսկ ԱՄՆ-ի պես հարուստ երկրի համայնքներում ևս հաճախ իրադրությունն ստիպում է վարվել ոչ այն կերպ, ինչպես որ ցանկալի կլիներ:

Ժամկետները

Ներկայացնենք կապիտալ բյուջետավարման գործընթացի կազմակերպման՝ ԱՄՆ-ում կիրառվող փորձի որոշ ուշագրավ առանձնահատկություններ: **Առաջին հերթին**, խոսքը վերաբերում է կապիտալ բյուջետավարման գործընթացի ժամկետների որոշմանը: Այս հարցում գոյություն ունի երկու տեսակետ: Առաջին տեսակետի կողմնակիցները պնդում են, որ վարչական և կապիտալ բյուջեների զուգահեռաբար կազմելն ունի մի շարք առավելություններ: Նախ՝ համայնքի ղեկավարի, նրա աշխատակազմի և ավագանու ուշադրությունը բյուջեի հարցերի վրա է կենտրոնանում միաժամանակ: Երկրորդ՝ ավելի հստակ են երևում բյուջեի երկու մասերի փոխադարձ կապն ու նրանց հնարավոր փոխադարձ ազդեցությունները: Հայաստանում բյուջետավարման գործընթացի կազմակերպումը տարվում է հենց այս տարբերակով:

Սյուս տեսակետի կողմնակիցների կարծիքով, եթե կապիտալ բյուջեի կազմման ժամանակաշրջանը չի համընկնում վարչական բյուջեի կազմման ժամանակաշրջանի հետ, այսինքն կազմվում է համեմատաբար չժանրաբեռնված շրջանում, ապա առավել արդյունավետ է օգտագործվում աշխատակազմի ժամանակը՝ աշխատանքի ծանրաբեռնվածության ավելի հավասարաչափ բաշխման շնորհիվ: Անշուշտ, դա կարող է դրականորեն ազդել կազմվող բյուջեների որակի վրա: Սակայն, բոլոր դեպքերում, անհրաժեշտ է ապահովել համայնքի բյուջեի երկու բաղկացուցիչ մասերի կազմման գործընթացների համադրումը:

Առաջնահերթությունների սահմանումը

Կապիտալ բյուջետավարման գործընթացի ժամանակ պլանավորման արդյունքներն զգալիորեն կախված են այն բանից, թե ո՞վքեր են այդ գործընթացի մասնակիցները:

Պլանավորման կողմնորոշում ունեցող կապիտալ բյուջետավարման գործընթացում առաջնահերթությունները որոշվում են՝ ելնելով կարիքներից կամ առաջնորդվելով որոշակի տեխնիկական չափորոշիչներով: Այս տարբերակում բնակիչների և ավագանու ազդեցությունն առաջնահերթությունների սահմանման վրա փոքր է լինում: Իսկ երբ գործընթացը **պլանավորման կողմնորոշում չունի** կամ

այն անընչան է, ապա մեծանում է բնակիչների և ավագանու անդամների ներգրավվածությունն այդ գործընթացում: Կա նաև երրորդ տարբերակը՝ առաջնահերթությունների որոշումը հանձնարարել մի **հանձնաժողովի**, որի մեջ կմտնեն ինչպես ընտրված պաշտոնյաներ, այնպես էլ աշխատակազմի ներկայացուցիչներ (ճարտարագետներ, ճարտարապետներ և այլն):

Գոյություն ունի ևս մի մոտեցում՝ **միջգերատեսչական հանձնաժողովի** ստեղծում, որը քննարկում է ներկայացված ծրագրային հայտերը և որոշում դրանց առաջնահերթությունները՝ Կապիտալ զարգացման ծրագրի (ԿԶԾ) կամ կապիտալ բյուջեի մեջ ներառելու նպատակով: Հանձնաժողովի անդամներ են դառնում համայնքների ղեկավարների տեղակալները, խորհրդակալները, աշխատակազմի քաղաքաշինության, ֆինանսական, ծրագրերի, բնակարանային-կոմունալ տնտեսության, կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության և այլ բաժինների պատասխանատուները: Հանձնաժողովը քննարկում է բոլոր հայտերն ու որոշում դրանց առաջնահերթությունները՝ կիրառելով միևնույն չափանիշները բոլոր հայտերի նկատմամբ: Հանձնաժողովի անդամները հետագայում նաև պարբերաբար այցելում են առաջարկված հայտերի տեղամասեր, կատարում են իրականացվող ծրագրերի մոնիտորինգ և ժամանակ առ ժամանակ հավաքում են ծրագրային նոր հայտեր՝ հետագա քննարկումների համար: Որոշ համայնքներում ստեղծվում է նաև **կապիտալ բյուջետավարման աշխատանքային խումբ**, որն առաջարկություններ է ներկայացնում այդ հանձնաժողովին:

ԱՄՆ քաղաքներից մեկում կիրառվում է նաև այսպիսի մեթոդ՝ քաղաքացիները կապիտալ բյուջետավարման գործընթացում ընդգրկվում են 250 անդամանոց **պարտատոմսային հանձնաժողովի** միջոցով, որը բաժանված է մինչև 15 անդամ ունեցող ենթահանձնաժողովների և ունի գործադիր հանձնաժողով՝ բաղկացած ենթահանձնաժողովների նախագահներից և քաղաքացիների տարբեր խմբերը ներկայացնող անձանցից: Ենթահանձնաժողովներից յուրաքանչյուրը քննության է առնում որևէ բնագավառին վերաբերող և քաղաքապետի կողմից մակագրված ծրագրային հայտերը: Յուրաքանչյուր ենթահանձնաժողով առաջարկում է որոշակի ծրագրերի ընդգրկումը պարտատոմսերի փաթեթի մեջ և ներկայացնում է գործադիր հանձնաժողովի քննարկմանը: Այնուհետև, գործադիր հանձնաժողովը քննարկում է բոլոր ենթահանձնաժողովների առաջարկած ծրագրերը և պարտատոմսերի փաթեթի մեջ ընդգրկման ենթակա ծրագրերը ներկայացնում քաղաքա-

յին խորհրդի քննարկմանը: Պարտատոմսերի փաթեթը քվեարկությամբ հաստատվում է խորհրդի կողմից, որից հետո գործադիր հանձնաժողովն սկսում է գործել որպես պարտատոմսային խորհրդատվական հանձնաժողով:

Կապիտալ բյուջետավարման տարբեր մակարդակներ

Ստորև բերվում է ԱՄՆ համայնքներում լայն կիրառություն ստացած՝ կապիտալ բյուջետավարման երեք մակարդակների նկարագրությունը: Ընդ որում, հնարավոր է, որ ներկայացվող միջազգային փորձում իրավիճակը և պայմանները որոշակիորեն տարբերվեն Հայաստանի պայմաններից (օրինակ՝ օրենսդրական դաշտի առանձնահատկությունները, կառավարման տարբեր մակարդակների առկայությունը և այլն), սակայն դա, ուսումնասիրության և վերլուծության տեսանկյունից, այնքան էլ էական չէ: Այդ մակարդակները բնութագրվում են ըստ հետևյալ չափանիշների՝

- արդյո՞ք կատարվել են բազմամյա կապիտալ պլանավորում և ֆինանսական կանխատեսումներ իրավական համակարգի շրջանակում,
- արդյո՞ք տարեկան բյուջեի շրջանակում օգտագործվել են կապիտալ բյուջետավարման հատուկ ընթացակարգեր և ձևաչափեր՝ կապիտալ արժեքների ստեղծման կամ ձեռքբերման անհրաժեշտությունը քննելու և ներկայացնելու նպատակով,
- որքանո՞վ են կապիտալ ֆինանսավորման տարբեր աղբյուրները մատչելի և որքանո՞վ են դրանք օգտագործվում,
- արդյո՞ք օգտագործվում են կապիտալ ծրագրերի **հատուկ ֆոնդեր** կամ **առանձին հաշիվներ**՝ կապիտալ ծախսեր կատարելու համար,
- արդյո՞ք հիմնական կապիտալ ծրագրերի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների համար համայնքի տարեկան բյուջեից հատկացումները կատարվում են բազմամյա զարգացման ծրագրին համապատասխան:

Նկարագրենք կապիտալ բյուջետավարման երեք մակարդակներն առանձին-առանձին՝ թվարկված չափանիշների կիրառման տեսանկյունից:

Մակարդակ 1

Կապիտալ բյուջետավարման առաջին մակարդակը հանդիպում է ԱՄՆ բազմաթիվ փոքր ու միջին քաղաքներում, գյուղերում, ավաններում և ենթանահանգներում, որտեղ կապիտալ արժեքներ ունենալու կարիքները համեստ են և խոշոր կապիտալ ծրագրերի անհրաժեշտությունը ոչ հաճախ է ծագում՝ մի քանի տարին մեկ: Նման իրավիճակը կարող է բնորոշ լինել զարգացման ցածր տեմպեր ունեցող տարածաշրջաններում գտնվող համայնքների համար, որոնց ՏԻՄ-երը փոքրաթիվ աշխատակազմեր ունեն և հնարավոր է, որ դրանք ոչ միայն չունենան առանձին ֆինանսական կամ բյուջետային բաժին, այլև դրա փոխարեն ունենան ընդամենը մեկ ֆինանսիստ: Այդ պատճառով հաճախ հանդիպում են նաև պարտականությունների համատեղման դեպքեր:

Առաջին մակարդակում կապիտալ բյուջետավարումը գլխավորապես կատարվում է տարեկան բյուջեի շրջանակում և ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- Միջոցների բազմամյա պլանավորում կամ կանխատեսումներ չեն կատարվում: Մեծամասշտաբ ծրագրերի դեպքում, դրանց պլանավորումը կատարվում է առանձին՝ ելնելով կոնկրետ ծրագրի առանձնահատկություններից:
- Առանձնացված կապիտալ բյուջետավարման գործընթաց չի կազմակերպվում: Սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ դրանք նորերով փոխարինելու նպատակով հայտեր ներկայացնելու կամ դրանք քննության առնելու համար տարեկան բյուջեի շրջանակում օգտագործվում են հիմնականում նույն ընթացակարգերն ու ձևաչափերը, որոնք օգտագործվում են վարչական բյուջեի ծախսերը ներկայացնելու և քննության առնելու դեպքում: Կապիտալ ծախսերի մեծ մասը, բացառությամբ առանձին խոշոր ծրագրերի, բյուջեի մեջ ներառվում և հաշվառվում է որպես **ընդհանուր կապիտալ ֆոնդ**: Երբ որևէ խոշոր կապիտալ ծրագիր է ձեռնարկվում, դրա համար ստեղծվում է **կապիտալ ծրագրի առանձին ֆոնդ**:
- Կապիտալ արժեքների ձեռքբերման ծախսերը հիմնականում ֆինանսավորվում են ընդհանուր կապիտալ ֆոնդից, ինչպես նաև վարչական բյուջեի ավելցուկներից: Իսկ եզակի խոշոր ծրագրերի ֆինանսավորումը կարող է կատարվել կապիտալ դրամաշնորհներից կամ փոխառու միջոցներից (պարտքից):

- Կապիտալ ծախսերի համար հատկացումները սովորաբար նախատեսվում են տարեկան բյուջեով: Կապիտալ ծրագրերի կառավարում կամ գոյություն չունի, կամ, եթե գոյություն ունի, կիրառվում է միայն եզակի խոշոր ծրագրերի իրականացման դեպքում:

Մակարդակ 2

Այս մակարդակում կապիտալ բյուջետավարման գործընթացն զգալիորեն ավելի լավ է մշակված, քան մակարդակ 1-ում: Մակարդակ 2-ն ավելի հաճախ հանդիպում է այն համայնքներում, որոնք ունեն զգալի առաջընթաց, անհրաժեշտ ենթակառուցվածքներ և փոխարինման կամ պահպանման ենթակա գույք: Այդ իսկ պատճառներով, նրանց անհրաժեշտ են լինում նոր կապիտալ ծրագրեր և սարքավորումներ, ինչպես նաև սարքավորումների փոխարինման, շենքային և այլ պայմանների, ենթակառուցվածքների բարելավման կամ վերականգնման միջոցներ: Սակայն ՏԻՄ-երից շատերը չունեն կապիտալ բյուջետավարման գծով առանձին պատասխանատուներ կամ աշխատակազմ: Պլանավորման ու բյուջետավարման պարտականություններն ընկնում են համայնքի ղեկավարի կամ ֆինանսական բաժնի պետի վրա, որոնք երկուսն էլ, իրենց մշտական զբաղվածության պատճառով, բավականաչափ ժամանակ չեն կարողանում տրամադրել կապիտալ պլանավորման և բյուջետավարման գործընթացի կազմակերպման համար:

Այս մակարդակում կապիտալ բյուջետավարումն ունի հետևյալ հատկանիշները՝

- Որոշակի բազմամյա կապիտալ պլանավորում կատարվում է, սակայն դա սովորաբար վերաբերում է որևէ կոնկրետ գործառնական ոլորտի, հաճախ՝ կոմունալ տնտեսությանը, կամ կոնկրետ սարքավորումների վերազինմանը, կամ էլ կոնկրետ ենթակառուցվածքի (ինչպես օրինակ, ներհամայնքային փողոցների) վերանորոգմանը: Համայնքի մասշտաբով պաշտոնական բազմամյա կապիտալ պլանավորում և ֆինանսական կանխատեսումներ չեն կատարվում: Կամ, եթե նման աշխատանքներ կատարվում են, ապա դրանց արդյունքները պաշտոնապես չեն ներառվում տարեկան բյուջետային այն փաստաթղթի մեջ, որը ներկայացվում է ավագանու քննարկմանը և հաստատմանը:
- Խոշոր կապիտալ ծրագրերի և գնումների համար հայտեր ներկայացնելու և քննարկելու համար նախատեսված հատուկ ձևաչափերն ու ընթացակար-

գերն օգտագործվում են տարեկան բյուջետային գործընթացի համատեքստում: Տարեկան բյուջետային փաստաթուղթը սովորաբար ունենում է կապիտալ առանձին մաս, որը ներկայացնում է տվյալ տարում ֆինանսավորման ենթակա խոշոր կապիտալ ծրագրերն ու գնումները:

- Սարքավորումների փոխարինման, շինությունների ու ենթակառուցվածքների վերանորոգման կամ վերականգնման կապիտալ ծախսերը կարող են բյուջե ներառվել և հաշվառվել ինչպես ընդհանուր կապիտալ ֆոնդի, այնպես էլ այլ ֆոնդերի շրջանակներում: Խոշոր կապիտալ ծրագրերի, օրինակ՝ նոր շենքի կառուցման, ծախսերը բյուջե են մտնում և հաշվառվում են մեկ կամ ավելի կապիտալ ծրագրերի ֆոնդերի շրջանակներում:
- Սարքավորումների փոխարինման և ենթակառուցվածքների վերականգնման ֆինանսավորումը կատարվում է ընդհանուր կապիտալ ֆոնդից, ինչպես նաև կապիտալ ծախսերի համար նախատեսված հատուկ մուտքերից: Խոշոր կապիտալ ծրագրերն ու գնումները ֆինանսավորվում են կապիտալ դրամաշնորհներից, ինչպես նաև պարտքային եղանակով, ինչպես օրինակ, պետական ընդհանուր ծրագրերի դեպքում՝ ընդհանուր պարտատոմսերից:
- Վերականգնման կամ փոխարինման համար կապիտալ միջոցների նախատեսումն ու հատկացումը կատարվում է տարեկան բյուջեի համար նախատեսված ընդհանուր կարգի համաձայն: Խոշոր ծրագրերի համար միջոցների հատկացումը կատարվում է այդպիսի ծրագրերի համար նախատեսված հատուկ կարգի համաձայն, եթե գոյություն ունի այդ կարգը վերահսկող մարմին, այլ դեպքերում՝ այն կատարվում է տարեկան բյուջեի գործող կարգի համաձայն:

Մակարդակ 3

Կապիտալ բյուջետավարման երրորդ մակարդակը, որը նման է ամբողջական մոդելին, բնորոշ է այն համայնքներին, որոնք էական առաջընթաց են արձանագրում առկա ենթակառուցվածքների, շինությունների և սարքավորումների փոխարինման կամ վերականգնման գործում: Առավել հավանականությամբ, դրանք մեծ կամ միջին քաղաքներն են, որոնք, բացի երկրորդ մակարդակում նշված վարչական և մարդկային ռեսուրսներից, ունեն նաև պլանավորման և բյուջետավարման գծով մասնագիտական աշխատակազմ, որը կազմում է ոչ միայն տարե-

կան բյուջեն, այլև բազմամյա կապիտալ զարգացման ծրագիրը (ԿԶԾ), և կատարում է բազմամյա ֆինանսական կանխատեսումները: Ֆինանսական բաժնի պետը կամ ֆինանսիստը ՏԻՄ-երի պարտավորությունների ֆինանսավորման գծով մեծ փորձ ունեցող մասնագետ է և կարողանում է օգտագործել ֆինանսավորման բազմազան աղբյուրներ՝ դրանք հարմարեցնելով կոնկրետ ծրագրերին:

Երրորդ մակարդակում կապիտալ բյուջետավարումն ունի հետևյալ հատկանիշները՝

- Համայնքի մասշտաբով իրականացվում է բազմամյա կապիտալ ներդրումների պլանավորում, որը սովորաբար ուղեկցվում է բազմամյա ֆինանսական կանխատեսումներով: Փոքր համայնքներում այդ բազմամյա պլանները կարող են կազմվել մինչև երեք-չորս տարի ժամկետով: Միջին ու մեծ համայնքներում դրանց ժամկետը կարող է ձգվել մինչև հինգ-վեց տարի, իսկ երբեմն էլ՝ մինչև տասը տարի: Բազմամյա պլանները պաշտոնական բնույթ ունեն՝ դրանք ներառվում են առանձին փաստաթղթի մեջ և ներկայացվում ավագանու քննարկմանը և հաստատմանը: Բացի համայնքի մասշտաբով իրականացվող կապիտալ նորոգման ծախսերից, կատարվում են նաև կապիտալ ներդրումների՝ շինարարության, ձեռքբերման, առանձին սարքավորումների փոխարինման և շինությունների ու ենթակառուցվածքների վերականգնման կարիքների երկարաժամկետ գնահատումներ: Կատարվում են նաև համայնքի հնարավորությունների և ռեսուրսների ուսումնասիրություններ՝ ճարտարագետների, ճարտարապետների և աշխատակազմի այլ մասնագետների խորհրդատվությամբ:
- Յուրաքանչյուր տարվա համար առաջարկվող կապիտալ բյուջեն հիմնվում է ավագանու կողմից ամեն տարի վերանայվող և հաստատվող ԿԶԾ-ի վրա և իրագործում է ԿԶԾ-ի առաջին տարում պլանավորված կապիտալ ծրագրերը: Այդ դեպքում, առավել հավանական է, որ կապիտալ բյուջեում կրճատվեն առավել մեծամասշտաբ, համայնքի համար առաջնահերթ կապիտալ ծրագրերը և գնումները:
- Սարքավորումների փոխարինման, շինությունների ու ենթակառուցվածքների վերականգնման, ինչպես նաև խոշոր ծրագրերի համար նախատեսվող կապիտալ ծախսերը սովորաբար ներառվում են բյուջե և հաշվառվում են նույն տեսակի ֆոնդերի շրջանակներում, որոնք օգտագործվում են երկրորդ մակարդակի կապիտալ բյուջետավարում իրականացնող ՏԻՄ-երի կողմից:

- Կապիտալ ֆինանսավորման տարբեր աղբյուրներն օգտագործվում են կապիտալ ֆինանսավորման ռազմավարության (քաղաքականության) համաձայն: «Վճարիր եկամուտ ստանալիս» սկզբունքով ֆինանսական (մասնավորապես, հարկման) համակարգի աղբյուրներն ընդգրկում են ոչ միայն ընթացիկ եկամուտները, կապիտալ մուտքերն ու պահուստները, այլև այսպես կոչված **ազդեցության վճարները** (դրանք այն վճարներն են, որոնք գանձվում են, օրինակ, շրջակա միջավայրի վրա ազդեցության համար) կամ կապիտալ ներդրումները՝ նոր զարգացումների, միջհամայնքային համագործակցության, պետական, համայնքային ու մասնավոր հատվածների միջև գործընկերության շնորհիվ (համատեղ իրականացվող ծրագրեր): Պարտավորությունների ֆինանսավորման աղբյուրները ներառում են ոչ միայն պարտքերի այնպիսի հիմնական գործիքներ, ինչպիսիք են՝ օրինակ, վարկերը, ընդհանուր պարտատոմսերը, այլ նաև մասնակցության կամ պարտավորության վկայագրերը, կոնկրետ տեսակի ծրագրերի գծով հատուկ պարտավորագրերը, երաշխավորագրերը և այլն:
- Կապիտալ ծրագրերի համար գումարների հատկացումը հնարավոր է իրականացնել այդ ծրագրերով նախատեսված ֆինանսավորման կարգերի համաձայն՝ ծրագրային աշխատանքներին խստորեն համապատասխան: Յուրաքանչյուր կապիտալ ծրագրի համար առանձին ֆինանսավորման կարգով առաջնորդվելու փոխարեն, ՏԻՄ-երը կարող են օգտվել կապիտալ ծրագրերի իրականացման և ֆինանսավորման մեկ ընդհանրացված կարգից: Նման ընդհանուր կարգով հատկացումներ են արվում այն դեպքում, երբ մեկ տարվա ընթացքում անհրաժեշտ է հաստատել և ֆինանսավորել շատ կապիտալ ծրագրեր ու գնումներ:

ՏԻՄ-երը, կապիտալ բյուջետավարման յուրաքանչյուր մակարդակը ձևավորելիս, առաջնորդվում են պլանավորման, բյուջետավարման, հաշվառման և ֆինանսավորման գոյություն ունեցող ընթացակարգերով: Յուրաքանչյուր մակարդակն արտացոլում է նաև համայնքի կապիտալ կարիքներն ու մարդկային ռեսուրսներն այդ կարիքները պլանավորելու և ֆինանսավորելու համար: Կապիտալ բյուջետավարումը ներկայացված երեք մակարդակներով դասակարգելն օգտակար է, քանի որ այն ընդգծում է, որ տարբեր ՏԻՄ-երի գործելակերպը տարբեր է՝ ըստ բյուջետավարման բարդության և կատարելության աստիճանի, և

ոչ բոլոր ՏԻՄ-երն են օգտվում կապիտալ բյուջետավարման ամբողջական և համապարփակ մոդելից: Գործնականում, նույնիսկ ԱՄՆ-ում, շատ քիչ թվով փոքր ու միջին քաղաքներ ու ենթանահանգներ են օգտագործում համապարփակ մոդելը: Շատ ՏԻՄ-եր հաճախ զուգակցում են այստեղ նկարագրված կապիտալ բյուջետավարման մակարդակներից որևէ երկուսում առաջարկվող ձևաչափերն ու գործելակերպը: Օրինակ, որևէ փոքր համայնք, որն առանձնապես մեծ ծավալի միջոցների կարիք չունի և հետևում է կապիտալ բյուջետավարման երկրորդ մակարդակում ներկայացված գործընթացին, կարող է իրականացնել բազմամյա կապիտալ պլանավորում:

ՀՀ համայնքների մեծ մասում կապիտալ բյուջետավարման գործընթացի կիրառումն ավելի հավանական է թվում առաջին և երկրորդ մակարդակներին համապատասխան, բացառությամբ, թերևս, Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների և այլ մեծ քաղաքային համայնքների, որոնք սկզբունքորեն ունակ են կազմակերպելու իրենց գործունեությունը նաև կապիտալ բյուջետավարման երրորդ մակարդակին համապատասխան:

Ֆինանսական քաղաքականության հարցեր

Կապիտալ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներ գտնելը նշանակում է՝ նախ ի մի բերել տվյալ տարվա բյուջեում առկա մուտքերը: Կապիտալ ծրագրերը կարելի է ֆինանսավորել ինչպես բյուջեի սեփական եկամուտներից և դրամաշնորհներից, այնպես էլ փոխառու միջոցներից: Հնարավոր է նաև ապահովել մասնակցային ներդրումներ տվյալ ծրագրից օգտվելու ակնկալիք ունեցող սուբյեկտների կողմից: Որպես այդպիսի սուբյեկտներ կարող են հանդես գալ այլ համայնքները, պետական կամ մասնավոր կառույցները: Կոմունալ ծառայությունների բարելավման ծրագրերն, օրինակ, կարելի է ֆինանսավորել բյուջեի սեփական եկամուտների, դրամաշնորհների, ծառայությունների դիմաց գանձվող վճարների և եկամտի այլ աղբյուրների հաշվին:

Կապիտալ ծրագրերի ֆինանսավորման համար միջոցների ինչպիսի համակցություն էլ ի վերջո օգտագործվի, դրանց հիմքում ընկած են ծրագրային և ֆինանսական քաղաքականության հարցեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, և դա նախընտրելի է անել՝ հստակ սահմանելով ՏԻՄ-երի քաղաքականությունը սեփական եկամուտների և ներգրավվող միջոցների (պարտքերի) օգտագործման

վերաբերյալ: Այդպիսի հստակ քաղաքականության որդեգրմամբ, հնարավոր է վարչական բյուջեն զերծ պահել պարտքերի սպասարկումով ծանրաբեռնելուց, ինչպես նաև որոշակի սահմանափակումներ դնել փոխառու միջոցների չափի և տեսակների վրա: Քաղաքականության սահմանումը կարող է ներառել հետևյալ հարցերը՝

- **«վճարիր եկամուտ ստանալիս»** (բյուջեի եկամուտներ) և **«վճարիր օգտագործելիս»** (փոխառու միջոցներ) սկզբունքների ինչպիսի՞ համադրություն օգտագործել,
- պարտքերի մարման ի՞նչ տեսակի երաշխիքներ առաջարկել ներդրողներին,
- ի՞նչ չափի գումար թույլատրել՝ որպես փոխառություն վերցնելու համար,
- ինչպե՞ս վարվել, եթե կապիտալ ծրագրի փաստացի ծախսերն ավելի շատ են կամ քիչ, քան նախատեսված է ծրագրով:

Որպես ընդհանուր քաղաքականություն, ՏԻՄ-երը պետք է որոշեն՝ հետևել «վճարիր եկամուտ ստանալի՞ս», թե՞ «վճարիր օգտագործելիս» ռազմավարությանը:

«վճարիր եկամուտ ստանալիս» մոտեցումը հիմնված է դեպի կապիտալ ներդրումներն ուղղվող բյուջեի եկամուտների վրա, իսկ «վճարիր օգտագործելիս» մոտեցումը՝ կապիտալ ծախսերի համար ներգրավվող պարտքի վրա: Այն ՏԻՄ-ը, որը նախընտրում է պարտքեր չանել, պետք է ճիշտ որոշում կայացնի, թե ե՞րբ սկսի ծրագիրը, եթե եկամուտների հոսքի ավելացում չի սպասվելու:

«վճարիր եկամուտ ստանալիս» տեսակի ֆինանսավորման դեպքում ֆինանսական բեռն ընկնում է ներկա հարկատուների վրա: Եթե պարտքի մարման ժամանակահատվածը չի գերազանցում տվյալ ենթակառուցվածքի շահագործման ժամկետը, ապա կարող է ավելի նպատակահարմար լինել կիրառելու «վճարիր օգտագործելիս» ռազմավարությունը, քան «վճարիր եկամուտ ստանալիս» ռազմավարությունը: Սակայն, կապիտալ ծրագրերի ֆինանսավորումը պարտքերի միջոցով ունի որոշ թերություններ: Փոխառություն վերցնելն ընդհանրապես ավելի թանկ արժե, քան բյուջեի եկամուտների հաշվին ծրագրերի կամ սարքավորումների համար վճարելը (պատրաստվում են փաստաթղթեր, վճարվում են ֆինանսական և իրավաբանական խորհրդատվական ծառայություններ, ինչպես նաև տոկոսավճարներ՝ պարտքի դիմաց): Հաճախ գոյություն ունեն նաև փոխառու միջոցների ներգրավման օրենսդրական, վարչական և այլ սահմանափա-

կումներ ու դժվարություններ: Օրինակ, պարտատոմսեր թողարկելու համար, համայնքի բնակիչների համաձայնությունն ստանալու նպատակով, կարող է պահանջվել անցկացնելու տեղական հանրաքվե: ԱՄՆ որոշ նահանգներում պարտատոմսերի շուկա մտնելու համար ՏԻՄ-երը պարտավոր են ստանալ նաև նահանգային իշխանությունների համաձայնությունը:

Փոխառու միջոցներ (պարտք)

Չնայած վերը նշված դժվարություններին, համայնքներն երբեմն ընտրում են պարտքի մարումն ամբողջությամբ իրենց վրա վերցնելու ճանապարհը, հատկապես այն համայնքներում, որտեղ բնակչության արագ աճ է արձանագրվում, և հանրային օգտագործման վայրերի բարեկարգման անհրաժեշտությունը գերազանցում է ծրագրերի ֆինանսավորման համար առկա հնարավորությունները: Նման դեպքերում, համայնքները կարող են վարկեր վերցնել և դրանք մարել ծրագրի իրականացման ընթացքում: Կապիտալ ծրագրերը պարտքով ֆինանսավորման դեպքում, համայնքը պետք է տեղյակ լինի, որ պարտքի սպասարկման տարեկան պարտավորությունները (մայր գումարի և տոկոսավճարների վճարումը) պետք է կատարվեն բոլոր մնացած պարտավորություններից առաջ: Ժամանակին պարտքի չմարման դեպքում կորչում է ներդրողների վստահությունը և այդ համայնքի համար ապագայում կդժվարանա նոր պարտք վերցնելը: Համայնքների կողմից պարտքի սպասարկման նկատմամբ բանկերի վստահությունը մեծացնելու նպատակով, համայնքներն իրենց բյուջեներում ստեղծում են **պարտքի սպասարկման ֆոնդեր**, որոնք օգտագործվում են պարտքի մայր գումարն ու տոկոսավճարները ժամանակին վճարելու համար: Ինքնըստինքյան հասկանալի է, որ համայնքը պետք է բավականաչափ միջոցներ առանձնացնի պարտքի սպասարկման ֆոնդի համար, որպեսզի կարողանա կատարել տվյալ տարվա համար նախատեսված պարտավորությունները:

Երկարաժամկետ պարտքը պետք է օգտագործել միայն երկարաժամկետ գույք ձեռք բերելու կամ ենթակառուցվածքը վերականգնելու նպատակով և ոչ թե՛ ընթացիկ ծախսերի համար: Կոպիտ հաշվարկով, երկարաժամկետ պարտքը պետք է օգտագործել միայն առնվազն երկու տարուց ավելի շահագործման օգտակար կյանք ունեցող գույք գնելու համար, իսկ պարտքի մարման ժամանակահատվածը ցանկալի չէ, որ ավելի երկար լինի այդ գույքի շահագործման կյան-

քից: Օրինակ, եթե ասֆալտե շերտը փոխելով՝ փողոցն ունենալու է տասը տարվա կյանք, ապա այդ ծրագրի ֆինանսավորման համար օգտագործված պարտքը պետք է մարվի մինչև տասը տարի ժամկետում:

Ընդհանուր և եկամտային պարտատոմսեր

Պետք է ասել, որ համայնքների կողմից թողարկվող պարտատոմսերը կարևոր նշանակություն և մեծ տարածում ունեն տնտեսապես զարգացած երկրներում: Այդ երկրներից շատերում, համայնքների կողմից կատարվող կապիտալ ներդրումների ծավալները և ցանկը անհամեմատելի են ՀՀ համայնքների ունեցած սահմանափակ հնարավորությունների հետ, սակայն նրանց մոտ կիրառվող մեթոդների ուսումնասիրումը օգտակար կլինի նաև ՀՀ համայնքների համար: Օրինակ, ԱՄՆ-ում կիրառվում են համայնքների կողմից թողարկվող պարտատոմսերի մի քանի տեսակներ, դիտարկենք դրանցից երկուսը՝ **ընդհանուր և եկամտային պարտատոմսերը**:

Եթե որևէ համայնքի ծրագրերի ֆինանսավորման մեջ պարտատոմսերը զգալի դեր են խաղում, ապա ՏԻՄ-երը պետք է որոշեն՝ ե՞րբ օգտագործել ընդհանուր պարտատոմսեր, որոնք հիմնվում են տեղական իշխանության հարկման իրավունքի վրա (երբեմն դրանք կոչվում են նաև **լիարժեք վստահության փոխառություններ**), և ե՞րբ օգտագործել եկամտային պարտատոմսեր: Ընդհանուր պարտատոմսերը սովորաբար օգտագործվում են հանրային օգտագործման այնպիսի օբյեկտների կառուցման կամ սարքավորումների ձեռքբերման ֆինանսավորման համար, որոնցից օգտվում են բոլորը և որոնք եկամտաբեր չեն, ինչպես օրինակ՝ փողոցները, մայթերը, դպրոցական շենքերը, ՏԻՄ-երի նստավայրը և այլն:

Եկամտային պարտատոմսերը կարելի է օգտագործել միայն եկամուտ բերող ծրագրերը ֆինանսավորելու համար, ինչպես օրինակ, համայնքային բնակարանային համալիրների, վճարովի հիվանդանոցների, ավտոճանապարհների, ավտոկայանատեղերի, ջրամատակարարման և ջրահեռացման նոր համակարգի շինարարությունը և այլն: Ծրագրերից ստացված եկամուտներն օգտագործվում են նոր շինությունների կառուցման համար թողարկված պարտատոմսերը մարելու համար:

Թեև եկամտային պարտատոմսերը սովորաբար հիմնվում են կոնկրետ ծրագրերի՝ եկամուտ բերելու կարողության վրա, դրանք թողարկող ՏԻՄ-երն, այնուամենայնիվ, ունեն քաղաքականության որոշակի տարբերակներ: Օրինակ, որևէ ՏԻՄ, եկամտային պարտատոմսերի մարման համար, կարող է որպես երաշխիք օգտագործել իր «լիարժեք վստահության փոխառությունները»: Դա նշանակում է, որ այն դեպքում, երբ ծրագրից ստացված եկամուտները չբավարարեն պարտքի սպասարկման տարեկան պարտավորությունները կատարելու համար, ՏԻՄ-ն այլ աղբյուրներից գումար կտրամադրի պարտքի սպասարկման պարտավորությունը մարելու համար: Համայնքի «լիարժեք վստահություն» ու վարկային միջոցներն որևէ ծրագրի ապահովմանն ուղղելը կարող է ռիսկային լինել, բայց դա ծրագիրն ավելի ապահով է դարձնում ներդրողների համար՝ չբարձրացնելով փոխառության չափը: Քաղաքականության մեկ այլ տարբերակ է բյուջեի սեփական եկամուտների օգտագործումը եկամտային պարտատոմսերով ֆինանսավորվող ծրագրի սուբսիդավորման համար:

Քանի որ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի հիմքում նույնպես ընկած է ամերիկյան մոդելը, իսկ պարտատոմսերի կիրառումը սկզբունքորեն համադրելի է արժեթղթերի կիրառման հետ, ապա, կարծում ենք, համայնքային պարտատոմսերի թողարկումը ևս կարելի է կանոնակարգել այդ օրենքի հիման վրա և առանց մեծ բարդությունների ինտեգրել ՀՀ ֆինանսական շուկային՝ անպայմանորեն հաշվի առնելով դրա տեղային առանձնահատկությունները:

Պարտքի չափը

Կապիտալ ծրագրերի ֆինանսավորման հետ կապված կարևոր հարց է պարտքի առավելագույն թույլատրելի չափը: Մոտավոր հաշվարկներով, **ընդհանուր պարտատոմսերի** պարտքի (մայր գումարի և տոկոսավճարի) սպասարկման տարեկան չափը չպետք է գերազանցի վարչական բյուջեի եկամուտների 20 տոկոսը՝ ուղենիշ, որն օգտագործվում է փոխառությունների չափի գնահատման աշխատանքներում (ամենայն հավանականությամբ, այս չափը ստացվել է՝ ելնելով փորձից): Սակայն, տարբեր իրադրություններում, հնարավոր է նաև այդ չափից բարձր կամ ցածր ցուցանիշի ընտրություն (օրինակ՝ բնակչության արագ կամ դանդաղ աճի դեպքերում):

Պարտքերի սպասարկման հարցն ավելի բարդ է **եկամտային պարտատոմսերի** դեպքում՝ կախված յուրաքանչյուր ծրագրի եկամուտ բերելու կարողություններից: Պարզ է, որ պարտքի տարեկան սպասարկումը չպետք է գերազանցի այն գումարը, որը կազմում է տվյալ ծրագրի բերած եկամտի և կատարած ընթացիկ ծախսերի տարբերությունը: Այնպիսի ծառայությունների համար, ինչպիսիք են, օրինակ, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները, վարձավճարների չափերը կարելի է սահմանել այն հաշվով, որպեսզի փոխհատուցվեն ընթացիկ ծախսերը (մաքրում, պոմպով մղում, աշխատուժ, պահպանում և այլն)՝ գումարած պարտքի սպասարկումը: Այլ դեպքերում, օրինակ՝ ավտոկայանատեղերի կառուցումը, այդ մեթոդը կարող է չաշխատել, քանի որ տվյալ օբյեկտը կարող է գտնվել մրցակցային դաշտում, որի պատճառով հնարավոր չլինի դրանց վարձավճարները բարձրացնել որոշակի մակարդակից վեր: Որպեսզի ՏԻՄ-ը պարզի ակնկալվող եկամուտների սահմանները, որից էլ որոշվում է նաև պարտքի սպասարկման առավելագույն չափը, նա պետք է մանրամասն ուսումնասիրություն կատարի:

Տեղին օգտագործելու դեպքում, պարտքը կարող է լինել կապիտալ ներդրումների ապահովման արդյունավետ միջոց: Պարտքը կառավարելիության սահմանների մեջ պահելու և իր պարտավորությունների նկատմամբ մշտապես վստահություն ներշնչելու համար, ՏԻՄ-երին խորհուրդ է տրվում ընդունել և իրականացնել ֆինանսական քաղաքականություն՝ սահմանելով պարտքի նպատակը, ժամկետները և առավելագույն չափը:

Կապիտալ ծրագրերի արժեքի սխալ գնահատում

Եթե պատահում է այնպես, որ կապիտալ ծրագրերի արժեքը թերագնահատվում կամ գերագնահատվում է, և դրա արդյունքում համայնքը փոխառում է ավելին կամ պակաս, քան իրեն անհրաժեշտ է կոնկրետ կապիտալ ծրագրի իրականացման համար, ապա կապիտալ ծրագրերի ֆինանսավորման քաղաքականություն մշակող տեղական պաշտոնյաները պետք է որոշեն, թե ինչպե՞ս պետք է օգտագործվի հավելյալ գումարը կամ որտեղի՞ց պետք է հայթայթել պակասորդ գումարը: Արդյո՞ք հավելուրդը պետք է օգտագործվի այլ ծրագրերի պարտքի սպասարկման համար: Պարտքային պլանում (պաշտոնական այն փաստաթուղ-

թը, որը վարկատուներին ցույց է տալիս, թե իրենց տրամադրած գումարն ինչպե՞ս է օգտագործվելու) ինչպե՞ս է ձևակերպվելու պարտքի սպասարկումը: Եթե համայնքի ղեկավարությունը հայտարարի, թե ինքը հավելյալ գումարն օգտագործելու է իր հայեցողությամբ, ապա վարկատուները կարող են պարզապես չհամաձայնել այդ անորոշությանը:

Եթե բյուջեի սեփական եկամուտները կամ ստացված դրամաշնորհները տվյալ տարում ամբողջությամբ չեն ծախսվում, ապա դրանք սովորաբար մնում են որպես տարեվերջի մնացորդ: Այդ մնացորդը կարող է ծախսվել հաջորդ տարի՝ համանման հողվածների կամ ծրագրերի շրջանակներում:

Իսկ եթե կապիտալ ծրագիրը պակասուրդ է ունենում, որն առաջանում է գերածախսի պատճառով, ապա համայնքը ստիպված է այն լրացնել բյուջեի եկամուտներից կամ նոր փոխառություն վերցնել՝ հաջորդ ֆինանսական տարվա բյուջեի եկամուտների հաշվին: Օրինակ, համայնքը, կապիտալ ծրագիրն ավարտելու նպատակով, կարող է անհրաժեշտ գումարը փոխառել որևէ աղբյուրից, այնուհետև հաջորդ տարի, բյուջեի եկամուտների հաշվին, մարել նշված պարտքը:

Եթե համայնքը կապիտալ ներդրումների նպատակով նախատեսել է եկամուտներ, իսկ տվյալ տարվա կապիտալ ծրագրերն ու գնումները նախատեսվածից քիչ են, ապա ՏԻՄ-երը կարող են եկամուտների հավելուրդն օգտագործել այլ նպատակներով՝ կախված այն բանից, թե ինչպե՞ս է կապիտալ ծրագրերի ֆինանսավորման ֆոնդը ձևավորվել: Եթե այն որևէ սահմանափակում չունի, ապա ՏԻՄ-երը կարող են, ընթացիկ հաշվին փոխանցելու փոխարեն, նախընտրել՝ գումարը պահել կապիտալ հաշվում:

Կապիտալ բյուջետավարման գործընթացը

ԿԶԾ-ն կազմվում է երեք և ավելի տարի ժամկետով, իսկ այդ ծրագրի առաջին տարում նախատեսված կապիտալ ծրագրերը ներառվում են բյուջեի կապիտալ մաս:

Կապիտալ (ֆոնդային) բյուջեում թվարկվում են միայն տվյալ տարվա ընթացքում իրականացման ենթակա ծրագրերն ու ձեռքբերվելիք սարքավորումները, ինչպես նաև՝ դրանց ֆինանսավորման աղբյուրները: Կապիտալ բյուջեում սովորաբար չեն նշվում այն ծրագրերը, որոնց մեկնարկը պլանավորված է ավելի քան մեկ տարի հետո:

Կապիտալ բյուջեն ապահովում է մանրամասն տեղեկատվություն գալիք տարվա համար նախատեսված կապիտալ ծրագրերի և աշխատանքների նախագծերի, արժեքների, ժամկետների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ:

ԿԶԾ-ն ամեն տարի թարմացնելու և տվյալ տարվա կապիտալ բյուջեն կազմելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1. Կազմել կապիտալ բյուջեի կազմման՝ հրահանգներ ու ձևեր և բյուջետային օրացույց պարունակող ուղեցույց,
2. Հնարավորինս ճշգրիտ որոշել յուրաքանչյուր ծրագրի արժեքը,
3. Կատարել գալիք բյուջետային տարվա սպասվելիք մուտքերի մանրամասն կանխատեսում՝ ինչպես պարբերաբար կրկնվող, այնպես էլ փոխառու միջոցներից կամ այլ աղբյուրներից ստացվող,
4. Պարզել փոխառու միջոցների ներգրավման անհրաժեշտությունը, չափը (պարտքի կարիքները) և, եթե պահանջվի, ձեռք բերել համայնքի բնակչության հավանությունը (այն դեպքերի համար, երբ օրենքը նախատեսում է տեղական հանրաքվե),
5. Կազմել կապիտալ բյուջեի նախագիծը,
6. Կապիտալ բյուջեի առաջարկվող նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ կամ լսումներ,
7. Կապիտալ բյուջեի վերջնական նախագիծը ներկայացնել ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Կապիտալ բյուջեի կազմման ուղեցույց

Կապիտալ բյուջեի կազմման ուղեցույցը, ինչպես և վարչական բյուջեինը, համայնքի ղեկավարի աշխատակազմի բաժիններին և ենթակա կազմակերպություններին տրամադրում է կապիտալ ծրագրերի և ծախսերի հայտեր լրացնելու ձևեր և մանրամասն հրահանգներ: Ուղեցույցում զետեղվում է նաև բյուջեի կազմման համար նախատեսվող աշխատանքները, պատասխանատուները և ժամկետները սահմանող բյուջետային օրացույց:

Հայաստանի օրենսդրությունը չի առանձնացնում վարչական և կապիտալ բյուջետավարման գործընթացները, սակայն այլ երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, այդ գործընթացներից յուրաքանչյուրը կարող է առանձին սահմանվել:

Գծապատկեր 11-ում բերված է ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Բրաուարդ ենթանահանգում օգտագործվող ԿԶԾ-ի և կապիտալ բյուջեի կազմման օրացույցը, որտեղ աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են ԱՄՆ-ում ընդունված բյուջետային տարվա (այն սկսվում է տվյալ տարվա հոկտեմբերի 1-ին և ավարտվում՝ հաջորդ տարվա սեպտեմբերի 30-ին) ժամանակացույցին համապատասխան:


Կապիտալ ծրագրերի արժեքի որոշումը

Մինչև կապիտալ բյուջեի մեջ մտցնելը, ԿԶԾ-ով նախատեսվող ծրագրերի ծախսերի հաշվարկները կատարվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի տարբեր բաժիններում և ենթակա կազմակերպություններում: Որքան ավելի է մոտենում ԿԶԾ-ում ընդգրկված ծրագրի ֆինանսավորման հերթը, այնքան ավելի մանրամասն պետք է լինեն ծրագրի արժեքի հաշվարկները: Այս դեպքում հաճախ հարկ է լինում նաև ներգրավել համապատասխան մասնագետների կամ նույնիսկ մասնագիտացված կազմակերպության՝ ծրագրի արժեքի մանրամասն հաշվարկներ կատարելու նպատակով: Օրինակ, եթե ծրագիրը վերաբերում է նոր շենքի կառուցմանը կամ եղածի վերանորոգմանը, ապա այդ ծրագիրը կապիտալ բյուջե ներառելուց առաջ, համայնքին հարկ կլինի վարձել նախագծային որևէ ընկերության՝ շինության կառուցման (վերանորոգման) նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պատրաստելու համար:

Բյուջեն կազմողները պետք է հաշվարկեն ոչ միայն կապիտալ ծրագրի իրականացման **ամբողջ արժեքը** (կամ համախառն ծախսերը), այլ նաև, այսպես կոչված, **զուտ ծախսերը** (դա այն գումարն է, որն ստացվում է, երբ ծրագրի իրականացման անմիջական կապիտալ և ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարից հանում ենք տվյալ ենթակառուցվածքի շահագործման ընթացքում աստիճանաբար կուտակվող եկամուտները): Եթե որևէ սարքավորման շահագործման ծախսերն աստիճանաբար պակասում են, ապա ժամանակի ընթացքում այն ծածկում է իր վրա կատարված ծախսը: Բացի այդ, բյուջեն կազմողները պետք է որոշեն՝ կապիտալ տվյալ ծրագիրը կավելացնի՞, թե՞ կնվազեցնի վարչական բյուջեի ծախսերը, և եթե այո՝ որքանով: Օրինակ, նոր աղբատար մեքենայի շահագործմամբ

Գծապատկեր 11. Կապիտալ բյուջեի օրացույց

Բրաուարդ եմթանահանգ, Ֆլորիդա նահանգ (Ադրյուրը՝ Broward County, Florida. Adopted Capital Program and Budget, Fiskal Year 1997)



կկրճատվի աշխատուժի ծախսը, կամ ինքնահոս ջրագծի կառուցմամբ կտնտեսվի պոմպերի ծախսած էլեկտրաէներգիան: Մյուս կողմից, կապիտալ ծախսերը կարող են ավելացնել ապագա ընթացիկ ծախսերը: Օրինակ, համայնքային տեղեկատվական–վերլուծական նոր կենտրոնի պահպանման համար կպահանջվեն աշխատակազմ, կոմունալ և այլ ծախսեր: Հնարավոր է, որ բյուջեի եկամուտները բավականացնեն կապիտալ շինություն ձեռքբերելու կամ կառուցելու համար, բայց դրանք չբավականացնեն շինության պահպանման համար՝ այն շահագործման հանձնելուց հետո: Կամ, հնարավոր է, որ համայնքն ունենա բավարար միջոցներ լողավազան կառուցելու համար, բայց չունենա միջոցներ նրա հետագա շահագործման և պահպանման համար:

Ապագա ընթացիկ ծախսեր առաջացնելու առումով՝ ծառայությունները տարբերակվում են **կապիտալատարի և աշխատատարի**: Այդ տարբերակման հիմքում ընկած է այն հանգամանքը, թե այդ ծառայությունները որքանով են կապված արտադրական կամ սպասարկման հզորությունների և աշխատատեղերի ավելացման հետ: Օրինակ, նոր ճանապարհի կառուցմամբ՝ մոտակա մի քանի տարիների ընթացքում չեն առաջանում այդ ճանապարհի վրա լրացուցիչ շահագործման ծախսեր կատարելու անհրաժեշտություն, իսկ նոր մանկապարտեզի կառուցմամբ՝ անհրաժեշտություն է առաջանում նախատեսել դրա բնականոն գործունեության ապահովման և պահպանման հետ կապված նոր ընթացիկ ծախսեր:

Կապիտալ ծրագրերի ֆինանսավորման մասին որոշումը

Վարչական բյուջեի եկամուտների կանխատեսումները կապիտալ բյուջեի վրա ազդում են այն չափով, որքանով դրանք օգտագործվում են կապիտալ բյուջեի ծախսերի մի մասը ֆինանսավորելու համար: Այսպիսով, կապիտալ բյուջեն կազմելու փուլում, պետք է կատարել նաև վարչական բյուջեի եկամուտների մանրամասն գնահատումներ: Դրանից հետո միայն ՏԻՄ-երը պետք է որոշեն, թե որքան գումար են պլանավորում ներգրավել որպես փոխառություն՝ առաջիկա տարվա կապիտալ ծրագրերը ֆինանսավորելու համար: Ավելի փոքր համայնքների դեպքում, որոնք հազվադեպ են մտնում փոխառու միջոցների շուկա, փոխառության կարիքների պլանավորումը կարող է ընդգրկել մի քանի տարվա ժամանակահատված:

Երբ համայնքի ղեկավարը կազմում է կապիտալ բյուջեի վերջնական նախագիծը՝ ավագանու քննարկմանը և հաստատմանը ներկայացնելու համար, մեծապես կարևորվում է բյուջեի եկամուտների կանխատեսումների ճշգրտության աստիճանը, քանի որ կապիտալ բյուջեն, ինչպես և վարչական բյուջեն, հիմնվում է եկամուտների որոշակի ծավալի վրա, որի հիման վրա էլ որոշվում է, թե որքա՞ն կապիտալ ծրագրեր կարող են հաստատվել և ներառվել կապիտալ բյուջեում:

Պարտքի կարիքների փաթեթի կազմումը և հանրաքվեի պլանավորումը

Ծրագրերի իրականացման համար սեփական միջոցների անբավարարությունն անհրաժեշտություն է առաջացնում ներգրավել պակասող միջոցները պարտքային սկզբունքով: Պարտատոմսերի թողարկումը թանկ արժեցող գործընթաց է, որովհետև դրա մեջ մտնում են փաստաթղթերի պատրաստումը և ֆինանսական խորհրդատուների ու փաստաբանների ծառայություններից օգտվելը: Եթե կան մի քանի փոքր ծրագրեր, որոնց համար ՏԻՄ-ը պլանավորում է պարտատոմսեր վաճառել, սովորաբար ավելի էժան և արդյունավետ է այդ ծրագրերը ի մի բերել և, դրանց բոլորի ֆինանսավորման նպատակով, թողարկել մեկ պարտատոմս: Մի քանի փոքր պարտատոմսերի վաճառքի ընդհանուր արժեքն անհամեմատ ավելի բարձր է, քան մեկ մեծ պարտատոմսի վաճառքի արժեքը: Իսկ մեծ ծրագրերը կարելի է ֆինանսավորել առանձին-առանձին:

Եթե պարտատոմս թողարկելու համար պահանջվում է հանրաքվեի անցկացում, ապա, քանի դեռ բնակչությունը հավանություն չի տվել պարտատոմսի թողարկմանը, ծրագրի ֆինանսավորումը կմնա առկախ: Սովորաբար, բյուջեն կազմելիս, տվյալ պարտատոմսի առկայությունը հաշվի են առնում՝ ենթադրելով, որ հանրաքվեով այն անցնելու է, բայց ծրագրերը չեն ֆինանսավորվում՝ մինչև բնակչությունը հավանություն չտա դրան: Եթե պարտատոմսի հանրաքվեն ձախողվում է, ապա առաջանում է տվյալ ծրագրի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ գտնելու անհրաժեշտություն: Սակայն, նպատակահարմար տարբերակներ գտնելն, այդ պարագայում, այնքան էլ հեշտ չէ: Նման դեպքերում, ավելի ճիշտ է, լրացուցիչ բացատրական և քարոզչական միջոցառումներով, փորձել կրկին առաջ տանել նախկին ծրագիրը, քան թե շրջանցել հանրաքվեի արդյունքները: Շրջանցելու փորձերը, պարզապես, կտանեն վստահության կորստի: Սակայն, նույնիսկ լավագույն հանգամանքներում, կրկնակի հանրաքվե

անցկացնելու համար լրացուցիչ ժամանակ և ծախսեր են անհրաժեշտ՝ պարտատոմսն իրացնելու համար: Արդյունքում, կարող է ստացվել այնպես, որ պարտատոմսը տվյալ տարում չի հասցնի ֆինանսավորել արդեն բյուջեում ներառված ծրագիրը:

Հանրային լսումների կամ քննարկումների անցկացումը

Կապիտալ բյուջեի վերաբերյալ հանրային լսումների կամ քննարկումների կազմակերպումը և անցկացումը լայնորեն տարածված է և նպատակահարմար՝ անկախ այն բանից, թե դա օրենքի հստակ պահանջ է, թե ոչ: Այս լսումները կամ քննարկումներն երբեմն կարելի է համատեղել ընդհանուր բյուջեի կամ ԿԶԾ-ի վերաբերյալ լսումների և քննարկումների հետ: Դրանք պետք է անցկացվեն այնպիսի ժամանակ, որպեսզի քաղաքացիները հնարավորություն ունենան կարծիքներ հայտնել բյուջեի վերաբերյալ, որոնց հիման վրա բյուջեում կկատարվեն որոշակի փոփոխություններ և լրացումներ: Այլապես, բյուջեի քննարկումներն ավելի մեծ նշանակություն չեն ունենա, քան սովորական հրապարակումը: Բյուջեի վերաբերյալ հանրային քննարկումները հաճախ տեղի են ունենում ավագանու կողմից օրենքով նախատեսված բյուջեի քննարկումից և հաստատումից անմիջապես առաջ, բայց դա չափազանց ուշ է լինում՝ քաղաքացիների մասնակցությունն իմաստալից ու օգտակար դարձնելու առումով:

Կապիտալ բյուջեի ընդունումը

Դիտարկենք կապիտալ բյուջեի ընդունման երեք մեթոդներ (տարբերակներ)՝

- Կապիտալ բյուջեն ընդունվում է որպես տարեկան ընդհանուր բյուջեի մի մաս: Այս մոտեցման դեպքում մի քանի տարվա տևողություն ունեցող ծրագրերը կարող են ֆինանսավորվել տարեկան կտրվածքով, որը ծրագրի իրականացման հարցում կարող է առաջացնել հնարավոր անորոշություն:
- Ավագանին ընդունում է առանձին կապիտալ բյուջե, իսկ ծրագրին հատկացվող գումարը բավականացնում է ծրագրի իրականացումը մինչև վերջ հասցնելու համար:

- Ավագանին հավանություն է տալիս պարտատոմսերի վերաբերյալ հանրաքվեի անցկացմանը և ընդունում է կապիտալ բյուջեն դրա հաշվի առմամբ:

Այս մեթոդներից ՀՀ բյուջետային օրենսդրության շրջանակներում առայժմ կիրառելի է միայն առաջին մեթոդը:

Ընդհանուր առմամբ, համայնքում կապիտալ բյուջետավարում կազմակերպելիս, ցանկալի տարբերակն այն է, երբ կապիտալ բյուջեն կազմելու գործընթացը հիմնվում է համայնքի զարգացման քառամյա ծրագրի շրջանակներում ԿԶԾ մշակման վրա: ԿԶԾ -ի առաջին տարին դառնում է տարեկան կապիտալ բյուջե, այսինքն՝ այն ծրագրերի ֆինանսական պլանը, որոնք իրականացվելու են հաջորդ բյուջետային տարվա ընթացքում: Նպատակահարմար է ամեն տարի վերանայել ու թարմացնել ԿԶԾ-ը՝ ճշգրտելով հաջորդ տարիների բյուջեների կապիտալ եկամուտների և ծախսերի կանխատեսումները, ինչպես նաև ավելացնելով կապիտալ ծրագրերի ցանկ՝ ևս մեկ տարվա համար: Այս՝ շարունակ կրկնվող գործընթացը ստիպում է պաշտոնատար անձանց գնահատել ծրագրերը մեկից ավելի անգամ և որոշել նոր ծրագրերի առաջնահերթությունները՝ համեմատելով դրանք ԿԶԾ-ում արդեն եղած ծրագրերի հետ:

Բացի առաջարկվող ծրագրերի ամենամյա ցանկի ճշտումից, ԿԶԾ-ն որոշում կայացնող պաշտոնատար անձանց տրամադրում է նաև այդ ծրագրերը ֆինանսավորելու պլան: ՏԻՄ-երը կապիտալ ծրագրերը ֆինանսավորելու համար հիմնվում են ինչպես բյուջեի սեփական եկամուտների և պաշտոնական ու ոչ պաշտոնական դրամաշնորհների, այնպես էլ փոխառու միջոցների, այդ թվում՝ մունիցիպալ պարտատոմսերի, վրա: Մունիցիպալ պարտատոմսերի շուկա ձևավորելու համար, ՏԻՄ-երը պետք է հավաստիացնեն ներդրողներին, որ նրանց ներդրումները պաշտպանված կլինեն, և երաշխավորեն՝

- 1) պարտքի ժամանակին մարումը,
- 2) պարտքի սպասարկման առանձին ֆոնդի ստեղծումը, որի հաշվին կվճարվեն ընթացիկ տարվա պարտքի ինչպես մայր գումարը, այնպես էլ տոկոսավճարը,
- 3) երկարաժամկետ պարտքերի չափի սահմանափակումը,
- 4) այնպիսի քաղաքականության ընդունումը, որով հստակորեն կսահմանվեն պարտքի ներգրավման չափորոշիչներն ու ընթացակարգերը:

Քաղաքականությունը պետք է վերաբերի այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ արդյո՞ք ծրագրերը ֆինանսավորվելու են «վճարի եկամուտ ստանալիս», թե՞ «վճարի օգտագործելիս» սկզբունքով, զանազան տեսակի ծրագրերի համար

ի՞նչ վարկային աջակցություն է օգտագործվելու, առաջացող պարտքերի առավելագույն չափը, ինչպե՞ս են տնօրինվելու կապիտալ ծրագրերի ֆինանսավորման պակասուրդները կամ հավելուրդները և այլն:

Երբ որևէ ծրագիր ԿԶԾ-ից տեղափոխվում է կապիտալ բյուջե, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել բոլոր ծախսերը, ճշգրտել ծրագրի եկամտի աղբյուրները և որոշել ներգրավվող փոխառու միջոցների քանակը և տեսակները: Նախքան կիրառության մեջ մտնելը, կապիտալ բյուջեն պետք է անցնի կապիտալ բյուջետավարման գործընթացի վերոնշյալ բոլոր փուլերը և, ի վերջո, հաստատվի ավագանու կողմից:

8. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒՄԸ, ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Համայնքի բյուջեի նախագծի կազմումը և քննարկումը

Համայնքի բյուջեի կազմման, քննարկման և հաստատման կարգը սահմանվում է ՀՀ բյուջետային օրենսդրությամբ: ՀՀ ֆինանսների նախարարությունը և մարզպետարանները մեթոդական և խորհրդատվական օգնություն են ցույց տալիս համայնքի բյուջեի նախագծի մշակման և նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով վերահսկում են բյուջետային գործընթացը:

Բյուջեի նախագիծը կազմվում է համայնքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված, տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

Կապիտալ ներդրումների պլանավորման դեպքում, ֆոնդային բյուջեի նախագիծը հիմնվում է նաև համայնքի ԿԶԾ-ի վրա, որպես այդ ծրագրի՝ առաջին տարվա նախատեսված ծախսերի ֆինանսական պլան:

Համայնքի ՏԻՄ-երին Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար ՏԻՄ-երը պետք է կատարեն մի շարք գործառույթներ, որոնցից կարևորագույններից մեկը համայնքի ֆինանսական միջոցների արդյունավետ պլանավորման և կառավարման գործառույթն է: ՏԻՄ-երի և համայնքային կազմակերպությունների գործունեությունն առավել նպատակային և արդյունավետ կլինի, եթե ՏԻՄ-երը մշակեն և ընդունեն «Համայնքի ֆինանսական կառավարման ռազմավարություն (քաղաքականություն)» փաստաթուղթը, որով կսահմանվեն համայնքի ֆինանսական կառավարման քաղաքականության հիմնական դրույթները զալիք 3-4 տարիների համար և որը կդառնա ՏԻՄ-երի ուղեցույցը համայնքի ֆինանսական կառավարման բնագավառում: Ձեռնարկի **հավելված 1**-ում բերված է այդ փաստաթղթի օրինակելի մի ձև, որտեղ անդրադարձ է կատարվում համայնքի ֆինանսական կառավարման ռազմավարության բաղկացուցիչ մասերը հանդիսացող ընդհանուր, եկամտային, ծախսային, պահուստային, կապիտալ բարեփոխումների (ներդրումների) և փո-

խառու միջոցների (պարտքի) քաղաքականություններին, ձևակերպվում են դրանց հիմնական դրույթները:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու, ինչպես նաև այն համայնքի ավագանուն ու հանրությանը ներկայացնելու իրավասությունն օրենքով վերապահված է համայնքի ղեկավարին: Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է ՀՀ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀՀ կառավարության կամ նրա կողմից լիազորված պետական կառավարման մարմնի կողմից բյուջետային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդատվական բնույթ, բացառությամբ ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից համայնքներին տրամադրվող այլ նպատակային ծրագրերի ֆինանսավորման դեպքերի:

Բյուջետային գործընթացի կազմակերպման առաջին փուլը՝ համայնքի բյուջեի նախագծի մշակումն, իր հերթին, պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝

- բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստում և կազմակերպում,
- բյուջեի նախագծի մշակում և հանրային քննարկումների կազմակերպում:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպում է իր որոշմամբ կամ կարգադրությամբ հաստատված բյուջետային օրացույցին համապատասխան: Բյուջետային օրացույցում պետք է նշվեն բյուջեի նախագծի մշակման հետ կապված բոլոր հանգուցային աշխատանքների՝ բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման ուղղությամբ մեթոդական ցուցումների մշակման և դրանք համայնքի ղեկավարի աշխատակազմի բաժիններին, բյուջետային հիմնարկներին և կազմակերպություններին տրամադրման, բյուջեի մուտքերի ու ելքերի կանխատեսումների և դրանց նախահաշիվների կազմման, բյուջետային ֆինանսավորման հայտերի ստացման, քննարկման, դրանց լրամշակման և ամփոփման, բյուջեի նախագիծը հանրային

քննարկման դնելու և ավագանուն ներկայացնելու ժամկետները և դրանց կատարման համար պատասխանատուները:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքների նախապատրաստման փուլում համայնքի ղեկավարը՝ բյուջետային գործընթացին անհրաժեշտ ուղղվածություն տալու, բյուջեի մշակման աշխատանքների արդյունավետությունն ապահովելու նպատակով, **նախ**՝ իր աշխատակազմի համապատասխան բաժինների, համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների հետ, համայնքի ավագանու անդամների մասնակցությամբ, անցկացնում է քննարկումներ գալիք բյուջետային տարվա բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների շուրջ, **այնուհետև**, հաշվի առնելով համայնքների գալիք տարվա բյուջեների կազմման վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած պարտադիր և խորհրդատվական բնույթ կրող մեթոդական ցուցումները, կանխատեսում է գալիք տարվա բյուջետային մուտքերի ծավալները, ծախսային ուղղությունների ֆինանսավորման նախնական չափաքանակները, **ապա**՝ մշակում ու իր աշխատակազմի բաժիններին, բյուջետային հիմնարկներին և կազմակերպություններին է տրամադրում բյուջեի մուտքերի և ելքերի հաշվարկման, հիմնավորման և համայնքի ղեկավարին ներկայացման հարցերի շուրջ համապատասխան մեթոդական ցուցումներ, հրահանգներ, բյուջետային և ծրագրային հայտերի ձևեր:

Կանխատեսվող բյուջետային տարվա համար մշակվող բյուջետային քաղաքականությունը պետք է արտահայտի համայնքի զարգացման քառամյա ծրագրի և ֆինանսական կառավարման ռազմավարության հիմնադրույթները և սահմանի տվյալ տարվա բյուջետային առանձնահատկությունները, առաջնահերթություններն ու նպատակները: Այն պետք է լինի հնարավորինս իրատեսական, հիմնվի համայնքի կրթա-մշակութային, սոցիալ-տնտեսական, աշխարհագրական, ժողովրդագրական և այլ առկա ներուժի վրա և արտացոլի համայնքի զարգացման ուղիները և եղանակները:

Բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման ուղղությամբ մեթոդական ցուցումները մշակվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից: Մեթոդական ցուցումները մշակելիս, անհրաժեշտ է հաշվի առնել գալիք տարվա բյուջետային քաղաքականության առանձնահատկությունները՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրից և ֆինանսական կառավարման ռազմավարությունից բխող տվյալ տարվա գերակայությունները, միայն

կանխատեսվող բյուջետային տարվան բնորոշ ֆինանսավորման աղբյուրների առկայությունը: Միաժամանակ, պետք է խնդիր դրվի՝ ապահովելու բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման այնպիսի համակարգ, որը հնարավորություն կընձեռի, նախորդ բյուջետային տարիների փաստացի արդյունքների և կանխատեսվող բյուջետային տարվա ցուցանիշների համեմատության և վերլուծության շնորհիվ, ապահովել առավել օպտիմալ և արդյունավետ ծրագրերի և ծախսերի ընտրությունն՝ ըստ բյուջետային քաղաքականության առանձնահատկությունների: Մեթոդական ցուցումները պետք է ներառեն նաև համայնքի բյուջեի համապատասխան ցուցանիշների հաշվարկման ձևերը՝ անհրաժեշտ պարզաբանումներով:

Համայնքի բյուջեի նախագծի մշակման և քննարկման փուլում համայնքի ղեկավարը՝

- ապահովում է համապատասխան բաժինների ու կազմակերպությունների կողմից բյուջեի եկամուտների ու ծախսերի հաշվարկումը, հայտերի կազմումը, դրանց ստուգումը, ամփոփումը և համայնքի բյուջեի նախագծի նախնական տարբերակի հավասարակշռումը,
- կազմակերպում է համայնքի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկումներ իր աշխատակազմի համապատասխան բաժինների, համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների հետ՝ դրանց մասնակից դարձնելով նաև համայնքի ավագանու անդամներին,
- կազմակերպում է համայնքի բյուջեի նախագծի նախնական տարբերակի հանրային քննարկումներ կամ լսումներ՝ համայնքի քաղաքացիների, հասարակական և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, իհարկե, ավագանու անդամների մասնակցությամբ,
- վերոհիշյալ քննարկումների արդյունքներով՝ ապահովում է համայնքի բյուջեի նախագծի վերջնական տարբերակի մշակումը և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի կազմումը:

Համայնքի բյուջեի նախագծի մշակման ընթացքում ՏԻՄ-երին օգտակար է տեղեկանալ համայնքի հանրության կարծիքին՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի կատարման ընթացքի և առկա կարիքների, բնակիչների կողմից համայնքային կառույցների գործունեության գնահատականների և առաջարկությունների մասին: Դա հնարավոր է ապահովել, առանձին հարցերի շուրջ, համայն-

քի ղեկավարի աշխատակազմի, ավագանու անդամների և համայնքի հանրության ներկայացուցիչների մասնակցությամբ, համատեղ քննարկումների կազմակերպման, բնակչության շրջանում սոցիոլոգիական հարցումների անցկացման, տեղական մամուլում բանավեճերի ծավալման, բյուջեի նախագծի կազմման՝ հնարավորինս վաղ փուլերում առկա խնդիրների առաջարկվող լուծումներին համայնքի ավագանու ծանոթացման ճանապարհով:

Հավելված 2-ում բերված է համայնքի բյուջեի հակիրճ նախագծի նմուշը, որը մշակվել է ԱՄՆ ՄՁԳ Տեղական ինքնակառավարման ծրագիր, 3-րդ փուլի կողմից, այն փորձարկվել և օգտագործվել է այդ ծրագրում ընդգրկված ՀՀ 38 քաղաքային համայնքների կողմից՝ 2008-2010թթ. բյուջետային գործընթացների շրջանակներում բյուջեների հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման ժամանակ:

Հիմնվելով համայնքի բյուջեի նախագծի քննարկումների արդյունքների վրա՝ համայնքի ղեկավարն ապահովում է բյուջեի նախագծի վերջնական տարբերակի մշակումը: Համայնքի բյուջեի նախագիծը, համաձայն օրենքի, բաղկացած է երկու հիմնական մասից՝ համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է օրենքով սահմանված բյուջետային համապատասխան տեղեկատվություն (տե՛ս **հավելված 3**-ում բերված՝ համայնքի բյուջեի նախագծի նմուշը):

Համայնքի բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը համայնքի ավագանու կողմից

Համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը ներկայացնելու կարգը նույնպես սահմանվում է ՀՀ բյուջետային օրենսդրությամբ:

Համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծը ավագանու քննարկմանն է ներկայացնում ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում դրա քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ:

Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի նախագծի քննարկման կարգը սահմանվում է օրենքով և համայնքի ավագանու կանոնակարգով:

Համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է բյուջեի նախագիծը, պատասխանում է ավագանու անդամների հարցերին:

Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար, կամ պահանջել հաստատելու բյուջեն:

Նշված ժամկետում համայնքի ղեկավարը հրավիրում է համայնքի ավագանու նիստ և ներկայացնում իր դիրքորոշումը բյուջեի՝ ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը, համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով, քվեարկության է դրվում ամբողջությամբ: Այն չընդունվելու դեպքում, բյուջեի նոր նախագծի կազմման և քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի ավագանին՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը՝ հրավիրելով ավագանու արտահերթ նիստ:

Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին, որի վերաբերյալ ընդունում է համայնքի ղեկավարի ներկայացրած համապատասխան որոշման նախագիծը:

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի ավագանին համայնքի բյուջեն կարող է հաստատել նաև մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի հաստատումը: ՀՀ պետական բյուջեի հաստատումից հետո, համայնքների՝ մինչ այդ հաստատված բյուջեներում երկշաբաթյա ժամկետում կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ և (կամ) լրացումներ:

Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների ընդհանուր թվի ձայների կեսից ավելիով մեծ որոշում չի ընդունում, ապա

համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Համայնքի բյուջեի հաստատման առնչությամբ՝ հրաժարական տալու միջոցով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կամ օրենքով սահմանված կարգով պաշտոնանկ անելու վերաբերյալ համայնքի ավագանու կողմից որոշում ընդունելու դեպքում համապատասխան մարզպետը հարցը ներկայացնում է կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով:

Եթե կառավարությունը դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Կառավարության կողմից համայնքի ղեկավարի՝ հրաժարական տալու միջոցով լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կամ օրենքով սահմանված կարգով պաշտոնանկ անելու դեպքում՝ համայնքի նոր ղեկավարը բյուջեի նախագիծ է ներկայացնում համայնքի ավագանուն 20 օրվա ընթացքում: Այն քննարկվում և հաստատվում է օրենքով նախատեսված կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Համայնքի բյուջեն, ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում, համայնքի ղեկավարը ներկայացնում է համապատասխան մարզպետին: Մարզպետը ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունն օրենքին՝ պահպանելով օրենքով սահմանված բյուջեների ինքնուրույնության սկզբունքը, հաշվարկների համապատասխանությունը սահմանված մեթոդաբանությանը և բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է պետական լիազորված մարմին ներկայացվող՝ մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում: Ամփոփ տեղեկանքի ձևը, նրա կազմման կարգը և ներկայացման ժամկետները սահմանում է պետական լիազորված մարմինը:

Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման առնչությամբ մարզպետի և համայնքի ղեկավարի միջև առաջացած տարաձայնությունները կարգավորվում են օրենքով սահմանված կարգով:

Համայնքի բյուջեին ներկայացվող պահանջները

Բյուջետային տարվա համար համայնքի բյուջեի յուրաքանչյուր (վարչական և ֆոնդային) մասում նախատեսված հաշվարկային-դրամարկղային ելքերը չեն կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի համապատասխան մասում նախատեսված հաշվարկային-դրամարկղային մուտքերին:

Համայնքի բյուջեի պակասուրդը ֆինանսավորվում է օրենքով սահմանված կարգով ներգրավվող փոխառու միջոցների, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օտարումից համայնքի բյուջե մասհանվող միջոցների (օրենքով սահմանված չափերով) և այլ աղբյուրներից միջոցների հաշվին: Համայնքի բյուջեի պակասուրդի գումարը չպետք է գերազանցի պակասուրդի ֆինանսավորման համար օրենքով սահմանված աղբյուրներից ներգրավվող միջոցների ընդհանուր գումարը:

Համայնքի բյուջեի պակասուրդի կամ հավելուրդի չափը սահմանվում է համայնքի ավագանու՝ տվյալ տարվա համայնքի բյուջեի մասին որոշմամբ:

Եթե համայնքի բյուջեն հաստատվում է առանց պակասուրդի, ապա պետական լիազորված մարմինն այդ համայնքի բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացնում է միայն իրավական վերահսկողություն:

Համայնքի բյուջեի պակասուրդային լինելու դեպքում, համայնքի ղեկավարը պետական լիազորված մարմնի հետ համատեղ, վերջինիս սահմանած կարգով, մշակում է բյուջեի պակասուրդը ծածկող պարտքերն աստիճանաբար մարելու ծրագիր: Ծրագրի իրականացման ժամանակահատվածում դա համայնքի բյուջեն կազմելու հիմք է: Այդ դեպքում, պետական լիազորված մարմինը, բացի իրավական վերահսկողությունից, իրականացնում է նաև մշտական վերահսկողություն պարտքի մարման ծրագրի կատարման ընթացքի նկատմամբ:

9. ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՆՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակները և սկզբունքները

Գնումների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, «Գնումների մասին» ՀՀ օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են իրավական ակտերի ընդունման եռաստիճան համակարգի պայմաններում՝ ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով և լիազոր մարմնի հրամաններով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ՀՀ կենտրոնական բանկի, պետական կամ համայնքների ոչ առևտրային և պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

ՀՀ գնումների համակարգը կարելի է ներկայացնել հետևյալ կառուցվածքով՝

- «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանվում են գնումների հետ կապված հարաբերությունների կարգավորման հիմնարար սկզբունքները,
- ՀՀ կառավարության որոշումներով սահմանվում են այդ սկզբունքների իրագործման մեխանիզմները,
- լիազոր մարմնի հրամաններով սահմանվում են այդ մեխանիզմների իրագործման համար պահանջվող գործիքները (միջոցները)՝ փաստաթղթերի նմուշներ և կազմակերպչական բնույթի այլ հարցեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակն է ապահովել՝

- ա) գնման գործընթացի մրցակցային, արդյունավետ, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը.
- բ) գնման գործընթացի միասնական կանոնների սահմանումը և դրանց կիրառման նկատմամբ վերահսկողության իրավական հիմքերի առկայությունը.
- գ) գնման գործընթացի կարգավորումը և համակարգումը.

դ) ցանկացած անձի համար, անկախ նրա՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքի գերակայությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ե) գնման պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը:

Գնման գործընթացի հիմնարար սկզբունքները բխում են հենց այս ընդհանուր նպատակներից և հանդիսանում են գնումների համակարգի հիմքը, դրանք են՝

- թափանցիկություն և հրապարակայնություն
- պատասխանատվություն
- մրցակցություն
- արդարություն
- ազնվություն
- դրամական միջոցների արժեքավորում:

Այս հիմնարար սկզբունքներն ընկած են նաև օրենքով սահմանված կանոնների և ընթացակարգերի հիմքում:

Գնում կատարելու ձևերը և դրանց կիրառման պայմանները

Գնում կատարելու ձևերն են՝

ա) մրցույթը.

բ) սահմանափակ մրցույթը.

գ) գնանշման հարցումը.

դ) մրցակցային բանակցությունները.

ե) մեկ անձից գնումը:

Մրցույթի տեսակներն են՝ *բաց և փակ*: Գնումները կատարվում են բաց մրցույթով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մրցույթը լինում է *նպատակային կամ պարբերական*: Մրցույթը *պարբերական* է, եթե գնման առարկան ունի պարբերական օգտագործման բնույթ և այն ներառված է լիազոր մարմնի հաստատած ցանկում, հակառակ դեպքում մրցույթը *նպատակային* է:

Մրցույթը, օրենքով նախատեսված դեպքերում, կարող է կատարվել երկու փուլով:

Սահմանափակ մրցույթը մրցույթի տարատեսակ է, որը կարող է կիրառվել այն դեպքերում, երբ գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված գնման պայմանագրերում և, գնման առարկայի տեխնիկական հատկանիշների առանձնահատկություններով պայմանավորված, այդ գնումը կարող է կատարվել ոչ ավելի, քան թվով երեք անձից: Սահմանափակ մրցույթի առանձնահատկությունն այն է, որ այս դեպքում, մասնակիցներ ներգրավելու նպատակով, մրցույթի հրավերն ուղարկվում է բոլոր հնարավոր մասնակիցներին:

Գնումը կարող է կատարվել **գնանշման հարցման** ձևով, եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված գնման պայմանագրերում և դրա գինն ապրանքների և ծառայությունների գնման դեպքում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը (5 մլն դրամ), իսկ աշխատանքների դեպքում՝ տասնապատիկը (10 մլն դրամ):

Գնանշման հարցման ընթացակարգի ժամանակ պատվիրատուն պարտավոր է գնանշման հարցում ուղարկել առնվազն երեք անձի և, այդ անձանց որոշելու նպատակով, գնանշման հայտարարությունը հրապարակվում է առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում, բացառությամբ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումների, որոնց դեպքում հայտարարություն չի հրապարակվում:

Մրցակցային բանակցությունների ձևը կարող է կիրառվել, եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով, ծագել է գնման անհետաձգելի պահանջ և մրցույթի ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև, երբ գնման առարկայի գինը չի գերազանցում գնումների բազային միավորը (1 մլն դրամ): Գնման այս ձևը նույնպես մրցույթի տարատեսակ է՝ որոշ առանձնահատկություններով, մասնավորապես, մրցակցային բանակցություններ կատարելու հրավերն ուղարկվում է առնվազն երկու անձի: Այդ անձանց որոշելու նպատակով, մամուլում համապատասխան հայտարարության հրապարակումից հետո, գնման մասնակիցներն իրավունք ունեն պահանջել և ստանալ մրցակցային բանակցությունների հրավերներ և ներկայացնել մրցակցային բանակցություններին մասնակցելու հայտեր: Ըստ ընթացակարգի, ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված մասնակիցների հետ վարվում են միաժամանակ-

յա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման հնարավորության վերաբերյալ:

Գնումը կարող է կատարվել **մեկ անձից**, եթե՝

- ա) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.
- բ) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը, ժամկետի առումով, անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև, եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.
- գ) պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից՝ պայմանով, որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի 20%-ը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

Մեկ անձից գնումներ կատարելու պայմանները կիրառվում են այդ պայմանների հիմնավորման նպատակով լիազոր մարմնի սահմանած փաստաթղթերի և (կամ) հիմքերի առկայության դեպքում:

Մեկ անձից գնումներ կատարելու դեպքում կարող են բանակցություններ վարվել մասնակցի ներկայացրած հայտի ցանկացած դրույթի կապակցությամբ:

Գնումների գործընթացում ներգրավված մարմինները

Գնումների գործընթացում ներգրավված են հետևյալ մարմինները՝

Լիազոր մարմին. «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն լիազոր մարմինը՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող ՀՀ գործադիր իշխանության պետական մարմինն է՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը: Լիազոր մարմինն իրականացնում է գնումների գործընթացի կարգավորման և համակարգման գործառույթներ: Լիազոր մարմինը չի կարող լինել գնման պայմանագրի կողմ, ինքնու-

րույն կատարել գնումներ, բացառությամբ իր գործառույթների կատարման համար իրականացվող գնումների:

Լիազոր մարմնի կազմում ստեղծվում է բողոքների քննարկման և գնումների գործընթացի վերահսկման մշտական հիմունքներով գործող միավոր, որի աշխատանքներին կարող են հասարակական հիմունքներով ներգրավվել պատվիրատու չհանդիսացող շահագրգիռ մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Պատվիրատուներ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն, գնումների պատվիրատու են համարվում՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետության կամ համայնքների հիմնարկները,
- ՀՀ կենտրոնական բանկը,
- պետական կամ համայնքային ոչ առևտրային և պետության կամ համայնքների 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունները:

Գնման որոշ ձևերով գնումների իրականացումը կազմակերպում են պատվիրատուները, առանց Պետական գնումների գործակալության մասնակցության: Գնման այդ ձևերն են՝ փակ մրցույթը, փակ սահմանափակ մրցույթը, փակ գնանշման հարցումը, փակ մրցակցային բանակցությունները, մեկ անձից գնումը:

Մնացած դեպքերում պատվիրատուները՝

- Պետական գնումների գործակալությանն են ներկայացնում գնման առարկայի բնութագրերը,
- Պետական գնումների գործակալության կողմից կնքված պայմանագրերի հիման վրա ստանում են ապրանքներ, աշխատանքներ ու ծառայություններ և վճարում են դրանց դիմաց:

Մրցույթի հանձնաժողով. Մինչև մրցույթի հայտարարության հրապարակումը պատվիրատուն ստեղծում է առնվազն երեք անդամից կազմված մրցույթի կամ առաջարկները գնահատող հանձնաժողով, որը՝

- հաստատում է մրցույթի հայտարարության և մրցույթի հրավերի տեքստերը,
- փոփոխություններ է կատարում մրցույթի հրավերում,
- պարզաբանումներ է ներկայացնում մրցույթի վերաբերյալ,
- բացում և գնահատում է մրցույթի հայտերը,
- որոշում է մրցույթի հաղթողին (հաղթողներին):

Արցույթի հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Պետական գնումների գործակալություն. Եթե գնումը չի պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք, ապա գնումների կատարումը կազմակերպում է Պետական գնումների գործակալությունը գնման հետևյալ ձևերով՝ բաց մրցույթ, սահմանափակ մրցույթ, գնանշման հարցում, մրցակցային բանակցություններ: Այս ձևերով գնում կատարելու դեպքում Պետական գնումների գործակալությունը պատվիրատուի անունից կնքում է գնման պայմանագրերը:

Պետական գնումների գործակալությունն իրականացնում է պարբերական բաց մրցույթների կազմակերպման՝ օրենքով պատվիրատուին վերապահված լիազորությունները: Պետական գնումների գործակալության գործունեության կարգի հետ կապված առանձնահատկությունները սահմանում է ՀՀ կառավարությունը:

Պետական գնումների գործակալության օրենքով նախատեսված լիազորությունները ՀՀ կառավարության կողմից վերապահվել են «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Գնումների գործընթացում ներգրավված այլ մարմիններից է ՀՀ կառավարությունը, որի լիազորությունները գնումների գործընթացում սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքում:

ՏԻՄ-երն ու համայնքային հիմնարկներն իրենց կարիքների համար կատարվող գնումները կազմակերպում են ինքնուրույն և պարտավոր չեն գնումներ կատարել Պետական գնումների գործակալության կազմակերպած պարբերական մրցույթների արդյունքում կնքված գնման պայմանագրերի շրջանակներում: **ՏԻՄ-ի գնումների գործընթացի վերահսկման,** ինչպես նաև գործընթացի հետ կապված բողոքների քննարկման հետ կապված **լիազորություններն իրականացնում է համայնքի ավագանին:**

Համայնքների ոչ առևտրային և համայնքների 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների գնումների կատարման դեպքում՝

- «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված նորմերը չեն գործում, եթե ՀՀ օրենքներով այլ բան է նախատեսված:
- Կազմակերպությունն իր կարիքների համար կատարվող գնումները կազմակերպում է ինքնուրույն և պարտավոր չէ գնումներ կատարել Պետական

գնումների գործակալության կազմակերպած պարբերական մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերի շրջանակներում:

- **Կազմակերպության գնումների գործընթացի վերահսկման և բողոքների քննարկման հետ կապված լիազորություններն իրականացնում է տվյալ կազմակերպության կառավարումն իրականացնող մարմինը:**

Մասնակիցները. Օրենքով սահմանված են մասնակիցների որակավորման տվյալներին ներկայացվող պայմանները: Գնման գործընթացին մասնակցելու համար, գործընթացի ցանկացած փուլում, մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակցի որակավորման հատկանիշները գնահատելու համար հրավերով սահմանվում է այն փաստաթղթերի ցանկը, որոնք կամ որոնց պատճենները մասնակիցը պետք է ներկայացնի որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանությունը հիմնավորելու համար: Չեն կարող սահմանվել մասնակցի այնպիսի որակավորման չափանիշներ, որոնք սահմանված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

Մասնակիցը համարվում է չորակավորված, եթե նրա որակավորման հատկանիշների մասին տվյալները չեն համապատասխանում հրավերով սահմանված չափանիշներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված են գնումների մասնակցության հավասարությունը ապահովող նորմերը:

Գնման գործընթացի հիմնական փուլերը

Համայնքների կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի սկիզբը համարվում է համայնքի ղեկավարի կողմից տվյալ տարվա ընթացքում ՏԻՄ-երի և համայնքային հիմնարկների կողմից իրականացվելիք ծախսերի, ներառյալ արտաբյուջետային միջոցների, նախահաշիվների սահմանված կարգով հաստատման օրը: Նախահաշիվի հետ մեկտեղ հաստատվում է նաև դրա շրջանակներում գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկը:

Նախահաշիվը հաստատվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում համայնքի ղեկավարը գրավոր սահմանում է պատասխանատու այն ստորաբաժանումը կամ հանձնաժողովը, որի անդամները պետք է ունենան

զնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն: Նախահաշիվը հաստատվելու օրվանից հաշված, 15 աշխատանքային օրվա ընթացքում, այդ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում՝

- ա) զնման առարկայի տեխնիկական բնութագիրը (տե՛ս ստորև բերված ներդիրը),
- բ) զնման և վճարման ժամանակացույցերը,
- գ) գնում կատարելու ձևի առաջարկը,
- դ) այն անձանց (թեկնածուների) ցուցակը, որոնք առաջադրվում են մրցույթի կամ առաջարկները գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով:
Մասնավորապես, շինարարական աշխատանքների զնման դեպքում, զնման պատասխանատու ստորաբաժանումը համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում՝

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը (նախագծային աշխատանքների տեխնիկական առաջադրանքը),
- վճարման ժամանակացույցը,
- զնման՝ աշխատանքների կատարման ժամանակացույցը,
- աշխատանքների հակիրճ տեխնիկական բնութագիրը,
- աշխատանքների կատարման համար պահանջվող սարքավորումների ցանկը,
- աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաների ցանկը,
- գնում կատարելու ձևի առաջարկը,
- այն անձանց (թեկնածուների) ցուցակը, որոնք առաջադրվում են մրցույթի կամ առաջարկները գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով:

Հավելված 4-ում բերված են համայնքի տարածքի սանիտարական մաքրման և բենզինի զնման առարկայի բնութագրի և զնման ժամանակացույցի կոնկրետ օրինակներ՝ իրական համայնքի զնման գործընթացներից:

Մինչև համայնքի ղեկավարի հաստատմանը պահանջվող փաստաթղթերը ներկայացնելը, պատասխանատու ստորաբաժանումը դրանք համաձայնեցնում է համայնքի գնումների գործի համակարգման պատասխանատուի (պատասխանատուների) հետ: Վերջինս, ներկայացված փաստաթղթերը ՀՀ օրենսդրության

Ներդիր. «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 13.

Գնման առարկայի բնութագիրը

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության տեխնիկական հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:
2. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց տեխնիկական հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության՝ որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի տեխնիկական այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների կամ միջազգային ստանդարտների վրա:
Տեխնիկական հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էքզիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում տեխնիկական հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:
3. Գնման առարկայի բնութագրերը ներառվում են գնման պայմանագրում:
4. Գնման առարկայի բնութագրերի հաստատման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

պահանջներին համապատասխան կազմված լինելու դեպքում, ստորագրում է դրանք, իսկ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում՝ վերադարձնում է ներկայացնողին՝ նշելով իրավական հիմքը:

Համայնքի ղեկավարը պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Շինարարական աշխատանքների գնման համար համայնքի բյուջեում ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Առանց այդ փաստաթղթերի առկայության, շինարարական աշխատանքների կատարման համար բյուջեում միջոցներ նախատեսվել չեն կարող:

Եթե գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ապա, գնման պայմանագիր կնքելու դեպքում, տվյալ ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում նախատեսվում են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելու կամ տվյալ գնումը ժամանակավորապես դադարեցնելու համար, եթե ժամանակավոր դադարեցման համար պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել գնման պայմանագիր՝ պայմանով, որ այն գործում է պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում: Պատվիրատուն գնման պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է՝ այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում:

Գնումների ֆինանսավորման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, գնումների գործընթացը կանոնակարգող վերոհիշյալ կարգերը հաստատվել են ՀՀ կառավարության 5 հունիսի 2008թ. հ. 853 որոշմամբ:

10. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

Համայնքի բյուջեի կատարումը

Համայնքի բյուջեի կատարումը ՏԻՄ-երի՝ համայնքի բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է:

Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը սահմանում է համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:

Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի կատարումն ապահովելու նպատակով, համայնքի ղեկավարը՝

ա) համայնքի ավագանու հաստատած տարեկան բյուջեն, եռամսյակային համամասնություններով և բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի տարեկան և եռամսյակային բաշխմամբ հաստատված նախահաշիվները տրամադրում է համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնող ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան տեղական գանձապետական բաժանմունքին (ՏԳԲ),

բ) ստորագրում է համայնքի ֆինանսական փաստաթղթերը,

գ) աջակցում է հարկային մարմիններին՝ համայնքի բյուջե հարկերի մուտքագրման գործում,

դ) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ՀՀ-ում բյուջեների (ինչպես պետական, այնպես էլ համայնքների) կատարման կազմակերպումն օրենքով դրված է ՀՀ ֆինանսների նախարարության կառուցվածքում ստեղծված կենտրոնական գանձապետարանի և նրա տեղական ՏԳԲ-ների վրա: Գանձապետական համակարգի գործունեության հիմնական կանոնները՝ բյուջեների կատարման սկզբունքները, բյուջեների կատարման ապահովման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը, փաստաթղթաշրջանառության կարգը, ժամկետները, ծավալները, բյուջեների կատարման ժամանակ բյուջետային

համակարգի սուբյեկտների պարտականությունները և իրավունքները, բյուջեների կատարման գործընթացի այլ դրույթները սահմանված են օրենքով, ՀՀ կառավարության որոշումներով և ՀՀ ֆինանսների նախարարի հրամաններով:

Ոչ մի բյուջետային միջոց չի կարող օգտագործվել որևէ այլ նպատակով, բացի նրանից, որի համար այն նախատեսված է: Յուրաքանչյուր պաշտոնյա, որն ինքնակամ ոչ նպատակային է օգտագործում բյուջետային ցանկացած միջոց, պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանված չափաքանակները:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով: Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացակարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով՝ օրենքի համաձայն:

Համայնքի հաստատված բյուջեի մուտքերի կազմում չնախատեսված և այդ բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարները համայնքի ղեկավարն իրավասու է նույն տարում ծախսել՝ ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղությունների:

Ինչպես արդեն նշվել է, բյուջետային տարին ՀՀ-ում ավարտվում է դեկտեմբերի 31-ին: Այդ օրվան հաջորդող օրվանից դադարում է նախորդ (այսուհետ՝ եզրափակվող) բյուջետային տարվա հաստատված բյուջեով նախատեսված բյուջետային ծախսեր կատարելու իրավունքը, իսկ գանձապետարանը սկսում է եզրափակվող բյուջետային տարում բացված բյուջետային հաշիվների փակումը: Արդյունքում, համայնքային բյուջետային հիմնարկների դրամարկղներում և գանձա-

պետական հաշիվներում եզրափակվող բյուջետային տարվա դեկտեմբերի 31-ի օրվա վերջում առկա միջոցների մնացորդները փոխանցվում են համայնքի բյուջե՝ որպես բյուջետային հիմնարկների կողմից եզրափակվող բյուջետային տարում չօգտագործված միջոցներ: Եզրափակվող բյուջետային տարվա նախատեսված, սակայն այդ տարվա ընթացքում չկատարած ցանկացած վճարում դեկտեմբերի 31-ից հետո չի կարող կատարվել, եթե այն նախատեսված չէ հաջորդ տարվա բյուջեով: Ընդ որում, այդ դեպքում դրանք հաշվառման մեջ արտացոլվում են որպես հաջորդ բյուջետային տարվա ծախսեր:

Համայնքի բյուջեի կատարման հսկողությունն ու վերահսկումը

Համայնքի ղեկավարը՝ հանդիսանալով համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն, իրականացնում է մշտական հսկողություն բյուջեի կատարման նկատմամբ: Համայնքների բյուջեների կատարման վերահսկողության ընթացակարգը սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» (հոդված 68, 68¹) և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» (հոդված 34) ՀՀ օրենքներով: Համայնքի բյուջեի կատարման վերահսկողություն իրավասու են իրականացնել համայնքի ավագանին, ՀՀ Ազգային ժողովը, կառավարությունը և վերահսկիչ պալատը՝ օրենքով սահմանված կարգով և իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Համայնքի ավագանին իրավագոր է ստուգել բյուջետային ցանկացած գործառնություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջել հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ:

Համայնքի բյուջեի կատարման հսկողությունը ենթադրում է՝

- կազմել բյուջեի մուտքերի և ելքերի եռամսյակային պլաններ և հետևել դրանց կատարմանը,
- ապահովել հաշվապահական համակարգի ճիշտ և ըստ ժամանակացույցի աշխատանքը,
- հաստատել բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները և ապահովել փաստացի ծախսերի համապատասխանությունը նախահաշիվներին,
- հետևել բյուջեով սահմանված առանձին ծառայությունների մատուցմանը,

- միջոցներ ձեռնարկել բյուջեն առկա պայմաններին համապատասխանեցնելու համար՝ պայմանավորված փաստացի մուտքերի չափերով:

Բյուջեի մուտքերի կատարման նկատմամբ հսկողությունը ենթադրում է բյուջետային նախահաշիվների պարբերաբար համեմատություն փաստացի մուտքերի հետ: Եթե փաստացի մուտքերը որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար քիչ են համապատասխան բյուջետային նախահաշիվներից, անհապաղ միջոցներ պետք է ձեռնարկել՝ պատճառները հայտնաբերելու և տարվա մնացած հատվածում իրավիճակը շտկելու համար: Նպատակահարմար է մուտքերի պլանները կազմել ըստ եկամտի առանձին աղբյուրների՝ եռամսյակային կտրվածքով, հաշվի առնելով նաև նախորդ երեք տարիներին մուտքերի ապահովման աստիճանը, ինչպես նաև հավանական շեղումները՝ կապված ընթացիկ տարվա տնտեսական պայմանների առանձնահատկությունների հետ: Աշխատանքների կազմակերպման մասն ընթացքը պահանջում է, որ ՏԻՄ-երը սերտորեն համագործակցեն ՏԳԲ-ների հետ, վերջիններիս կողմից բյուջեների մուտքերի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ստանալու և շեղումների պատճառները բացահայտելու նպատակով:

Ծախսերի կատարման նկատմամբ հսկողությունը համայնքներում իրականացվում է համայնքային կազմակերպությունների կտրվածքով՝ բյուջեի ծախսերի եռամսյակային պլաններ կազմելու միջոցով: Ընթացիկ տարվա ամսական կամ եռամսյակային փաստացի ծախսերի համեմատությունը պլանների հետ թույլ է տալիս պարզել բյուջեի ծախսային իրադրությունը, արագ արձագանքել ծագած ֆինանսական դժվարություններին՝ աշխատանքային ծրագրերի փոփոխության, ծառայությունների մատուցման ծավալի նվազեցման, կենսական նշանակություն չունեցող ծախսերի կրճատման և այլ եղանակներով:

Շուկայական տնտեսության պայմաններում համայնքների բյուջեների ծախսերի կատարման նկատմամբ հսկողության կարևոր ուղղություններից մեկը փաստացի գնաճի գործոնի հաշվի առնումն է, ֆինանսատնտեսական չնախատեսված փոփոխություններին արագ արձագանքումը:

Բյուջեի կատարման վերահսկումը (վերահսկողությունը) համայնքի ավագանին իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Ավագանին իր կազմից կարող է ստեղծել ֆինանսաբյուջետային մշտական հանձնաժողով, որը կարող է ինչպես համագործակցել համայնքի ղեկավարի աշխատակազմի հետ՝ բյուջեի

նախագծի կազմման ընթացքում, այնպես էլ պարբերաբար ավագանուն տեղեկատվություն ներկայացնել՝ բյուջեի կատարման վերաբերյալ:

Կառավարությունը համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից օրենքի համաձայն համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ՝ իր կողմից սահմանված կարգով պետական կառավարման լիազորված մարմնի միջոցով:

Համայնքի ղեկավարը, նրա աշխատակազմը, բյուջետային հիմնարկների պաշտոնատար անձինք, համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնող անձանց պարտականությունների կատարումը խոչընդոտելու, կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում, պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողության հիմնական ձևերն են՝

- նախնական վերահսկողություն՝ բյուջեի նախագծի կազմման, քննարկման և հաստատման ընթացքում,
- ընթացիկ վերահսկողություն՝ բյուջեի կատարման նկատմամբ, բյուջեի կատարման պարբերական վերլուծություն,
- վերջնական վերահսկողություն՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմման և գնահատման, ավագանու կողմից դրա քննարկման և հաստատման ընթացքում:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողության հիմնական խնդիրներն են՝
ա) բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը,

բ) բյուջետային միջոցների, ներառյալ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը,

գ) բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը,

- դ) բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանումը,
- ե) բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովումը:

Բյուջեի կատարման վերահսկողության գործընթացը ներառում է՝

- ա) ֆինանսական և հաշվապահական վերահսկողությունը,
- բ) կառավարման գործառույթների (գործունեության) պարբերական վերլուծությունը և վերահսկողությունը,
- գ) իրականացված ծրագրերի և կատարված աշխատանքների վերլուծությունը և գնահատումը:

Ֆինանսական և հաշվապահական վերահսկողությունը շեշտը հիմնականում դնում է միջոցների օգտագործման արդյունավետության վրա: Այն հիմք է հանդիսանում՝ պարզելու բյուջեի կատարման համապատասխանությունը օրենսդրական և բյուջետավարման պահանջներին, և իր մեջ ներառում է հաշվապահական գրանցումների և հաշվետվությունների իրականացումը՝ ելնելով այդ պահանջներից:

Կառավարման գործառույթների (գործունեության) պարբերական վերլուծության և վերահսկողության կազմում առանձնանում է իրավաբանական և օրենսդրական վերահսկողությունը, որը վերաբերում է բյուջեի փոփոխություններին ու լրացումներին, չնախատեսված հատկացումներին, պարբերական հաշվետվություններին, բյուջեի հողվածներով հատկացումների վրա դրվող պահանջներին, դրամական միջոցների օգտագործման ու չօգտագործված միջոցների ծախսման պայմաններին և աուդիտային պահանջներին: Կառավարման գործառույթների վերլուծությունն ու վերահսկողությունը ներառում է՝ հաստիքային վերահսկողությունը, գնված ապրանքների և մատուցված ծառայությունների վերահսկողությունը, գործուղումների վերահսկողությունը, վճարացուցակների համակարգի վերահսկողությունը, անշարժ, շարժական և անձնական գույքի, ինչպես նաև նյութական արժեքների և սարքավորումների (կամ պահեստամասերի) գույքացուցակի վերահսկողությունը, բյուջեում կատարվող փոփոխությունների և բյուջետային փոխանցումների ձևաթղթերի վարչական ընթացակարգերի վերահսկողությունը, կառավարման հաշվետվությունների համակարգի վերահսկողությունը, ըստ խնդիրների կառավարման համակարգի վերահսկողությունը, աշ-

խատանքների կատարման ծավալների, որակի և արդյունավետության չափման համակարգերի առկայության վերահսկողությունը և այլն:

Իրականացված ծրագրերի և կատարված աշխատանքների վերլուծության և գնահատման խնդիրը բյուջետային ծրագրերի իրականացման և աշխատանքների կատարման գնահատումն է, որի նպատակն է «ծրագիր-բյուջե» և «ծախսեր-արդյունք» կապերի պարզաբանումը՝ բյուջեի միջոցները ծախսվել են արդյոք համաձայն ծրագրերի ու աշխատանքների և այդ ծախսերի արդյունքում ի՞նչ է իրականում ստացվել: Պարբերաբար կատարվող ստուգումները ծրագրերի ու աշխատանքների պատասխանատուներին հնարավորություն են տալիս կատարելու կարգավորիչ գործողություններ՝ առաջադրված նպատակներին սահմանված ժամկետներում հասնելու համար: Ժամանակին կատարվող վերստուգումների միջոցով գնահատվում են գործունեության էական թերացումների և շեղումների պատճառները և ձևակերպվում են կարգավորիչ գործողությունների համար անհրաժեշտ առաջարկությունները:

Բյուջեի կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության բաղկացուցիչ մասն են կազմում **ներքին և արտաքին աուդիտները**: Եթե ներքին աուդիտի կատարումը համայնքի ներքին հսկողական գործառույթ է և հիմնականում կարգավորման ու խորհրդատվական նպատակ է հետապնդում (այն կատարվում է համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետի՝ ներքին աուդիտի կողմից), ապա արտաքին աուդիտը համայնքի բյուջեի կատարման վերահսկողության հիմնական տարրերից է և հետապնդում է բյուջեի կատարման իրավական ճշտության ստուգման առաջնային նպատակ (այն սովորաբար իրականացվում է մասնավոր մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպության կողմից): Աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունը բյուջեի կատարման վերաբերյալ կազմում է եզրակացություն, որը համայնքի ղեկավարը ներկայացնում է ավագանու քննարկմանը՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ միասին:

Աուդիտը պարզում է համայնքի բյուջեի կազմման, հաստատման և կատարման գործընթացում ՏԻՄ-երի որոշումների համապատասխանությունը օրենսդրության պահանջներին, բյուջետային փաստացի մուտքերի և ելքերի համապատասխանությունը բյուջեով նախատեսված մուտքերին և ելքերին: Ընդ որում, այն ապահովում է ֆինանսական գործառույթների քննումը նրանց իրականացումից և բյուջետային մուտքերն ու ելքերը համայնքի հաշվեհամարներում գրանցելուց հետո:

11. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ, ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը ներկայացնում է համայնքի ֆինանսական վիճակը ժամանակի որոշակի փուլում: Հաշվետվությունները պետք է առաջին հերթին ներկայացնեն տեղեկատվություն բյուջեով նախատեսված մուտքերի և ելքերի փաստացի կատարման վերաբերյալ: Դրանք կոչված են նաև վեր հանելու համայնքի առանցքային տնտեսական և ֆինանսական զարգացումները, բյուջեից զգալի շեղումները:

Համայնքի բյուջեի կատարման հաշվետվության տեսակներն են՝

- ընթացիկ կամ աշխատանքային հաշվետվություն, որտեղ ներկայացվում են բյուջեի կատարման ընթացիկ ֆինանսական և հաշվապահական տվյալները,
- կառավարման (գործունեության) հաշվետվություն, որտեղ ներկայացվում են համայնքի կառավարման գործառույթների կատարման աստիճանը՝ բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների սահմաններում (ո՞վ, ի՞նչ և ե՞րբ է ստացել և ինչպե՞ս է ծախսել):

Հաշվետվության հաճախականությունը կարող է լինել՝ օրական, շաբաթական, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան, որոշակի ժամանակահատվածում և ըստ պահանջի: Հաշվետվությունները պետք է կազմված լինեն դրանցից օգտվողների համար, ինչպիսիք են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքի բնակչությունը: Հաշվետվությունը պետք է պատասխան տա հետևյալ հարցերին՝ ի՞նչ է տալիս հաշվետվությունը, արդյո՞ք պետք է որևէ գործողություն ձեռնարկել, որո՞նք են բացահայտված սխալները և բացթողումները, ովքե՞ր են դրանց պատասխանատուները, կարիք կա՞ կատարելու բյուջետային շտկումներ, ընդունելու ծրագրային որոշումներ և այլն:

Բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն պետք է պատրաստել առնվազն ամիսը մեկ անգամ: Ամսական հաշվետվությունը ելնում է ՏԻՄ-ի հաշվապահական համակարգի տվյալներից, ճշգրտորեն համապատասխանում է բյուջետային փաստաթղթում օգտագործված բյուջետային դասակարգման կառուցվածքին: Բյուջետային դասակարգման յուրաքանչյուր մանրամասնված հոդվածի համար հաշվետվությունում ներկայացվում են հետևյալ տե-

ղեկությունները՝ բյուջեում տվյալ հոդվածի նախատեսված ծավալը, տվյալ ամսում փաստացի կատարված ծախսերի ծավալը, տարվա սկզբից մինչև հաշվետվության օրը փաստացի կատարված ծախսերի ծավալը, տարվա սկզբից կատարված ծախսերի ծավալը բյուջեի ամբողջ ծավալի նկատմամբ՝ արտահայտված տոկոսներով, չվճարված պարտավորագրերի ընդհանուր գումարը:

Համաձայն օրենքի, համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն և համապատասխան մարզպետին: Եռամսյակային հաշվետվությունը կազմվում է ըստ պլանային, ճշտված և փաստացի կատարված մուտքերի և ելքերի: Համայնքի ղեկավարը նշված հաղորդումը մարզպետին ներկայացնում է պետական լիազորված մարմնի սահմանած ձևով:

Համայնքի ղեկավարը բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը: Տարեկան հաշվետվությունն ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (հոդված 35, կետ 7), ներառում է՝

- տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի մուտքերի և ելքերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև,
- տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով,
- տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ,
- այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարի 2009թ. հունվարի 16-ի հ. 25-Ն հրամանով հաստատվել է համայնքի բյուջեի կատարման (եռամսյակային, տարեկան) հաշվետ-

վության նոր ձևը, որը խստորեն համապատասխանեցվել է բյուջետային գործող դասակարգմանը:

Համաձայն օրենքի, համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ աուդիտորական կազմակերպությունը համայնքի ավագանուն ներկայացնում է իր ուսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունները:

Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման կարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով:

Համայնքի ավագանու նիստում համայնքի ղեկավարը, տարեկան հաշվետվությունը ներկայացնելուց հետո, պատասխանում է ավագանու անդամների հարցերին և տալիս է անհրաժեշտ բացատրություններ: Համայնքի ավագանին, քննարկումն ավարտելուց հետո որոշում է կայացնում բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու կողմից հաստատելուց հետո՝ 3 օրվա ընթացքում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատվելու դեպքում համայնքի ավագանին, օրենքով սահմանված կարգով, կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն ներկայացնել: Եթե համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն չի ներկայացվում, կամ կառավարությունը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկությունն օրենքով սահմանված կարգով ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին որոշում ընդունվելու դեպքում համայնքի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով, վայր է դնում իր լիազորությունները, իսկ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:

Համայնքի ավագանին, բյուջեի կատարման վերաբերյալ իրավախախտումներ հայտնաբերելու դեպքում, կարող է դիմել համապատասխան իրավասու մարմինների:

12. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի բյուջեի հրապարակայնությունը համայնքի բնակչության, բոլոր շահագրգիռ կազմակերպությունների իրազեկ և ներգրավված լինելն է դրա մշակման, քննարկման, կատարման և վերահսկման աշխատանքներին:

Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (հոդված 36)՝ համայնքների բյուջեների հրապարակայնությունն ապահովելու համար՝

- ա) համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանուն ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում: Միաժամանակ, պատրաստվում և հրապարակվում են բյուջեի հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ ներառող տեղեկատուներ,
- բ) բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում հրապարակվում է տեղեկատվություն համայնքի բյուջեի եռամսյակային կատարման մասին,
- գ) համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում,
- դ) համայնքների ղեկավարները պայմաններ են ստեղծում, որպեսզի համայնքի բյուջեի նախագծին, տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները դյուրությամբ ձեռք բերեն համապատասխան փաստաթղթերը:

Քանի որ բյուջեի միջոցով իրականացվում է համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը, ուստի տեղական պաշտոնյաները պետք է ջանք չխնայեն՝ պարզելու իրականացվող քաղաքականության և ծառայությունների վերաբերյալ համայնքի բնակչության կարծիքը: Համայնքի բնակչությանը պետք է պարբերաբար հարցուն անել, թե ո՞ր ծառայությունը պետք է ընդլայնվի, ո՞րը՝ կրճատվի, ո՞ր ծառայությանը պետք է առաջնահերթություն տրվի, ո՞րը՝ հետաձգվի: Գործնականում հաճախ տեղական պաշտոնյաները հիմնվում են ՏԻՄ-երի և համայնքային կազմակերպությունների ղեկավարների կամ էլ մի քանի «ակտիվ» բնակիչների կարծիքի վրա: Երկու դեպ-

քում էլ պատկերը ստացվում է խեղաթյուրված և չի համապատասխանում իրականությանը:

Բյուջետային գործընթացի համար պարտադիր պայման է համայնքի բնակչության պահանջների բացահայտումը: Դրան կարելի է հասնել բնակչության հետ անմիջական շփումներով կամ ծանոթանալով նրանց դիմումներին: Բյուջեի մշակման և կատարման գործընթացում ՏԻՄ-երը պետք է հնարավորինս ներգրավեն համայնքի բնակչությանը: Դա կարելի է իրականացնել՝ կիրառելով հրապարակայնության հետևյալ ձևերը՝

- բնակչության համար համայնքի բյուջեն մեկնաբանող ձեռնարկի պատրաստում, որը կպարզաբանի, թե ի՞նչ է բյուջեն, ինչպե՞ս է այն կազմվում, որտեղի՞ց են գոյանում համայնքի բյուջեի մուտքերը և ինչպե՞ս են դրանք օգտագործվում,
- բնակչության պահանջների հետազոտում սոցիոլոգիական հարցումների, հարցաթերթիկների և հարցազրույցների միջոցով,
- բյուջեի մշակման աշխատանքներին մասնակցել ցանկացող բնակիչներից բաղկացած նախաձեռնող խմբերի ստեղծում,
- բնակչությանը համայնքի ֆինանսատնտեսական քաղաքականության, առանձին ծառայությունների նպատակների և խնդիրների մասին իրազեկելու, ինչպես նաև նրա կարծիքն իմանալու նպատակով հավաքների կազմակերպում,
- տեղական մամուլում բյուջեի նախագծի և կատարման հաշվետվության հրատարակում, ինչը հնարավորություն կտա բոլոր շահագրգիռ մարդկանց ծանոթանալ գալիք տարվա բյուջեի նախագծին և նախորդ տարվա բյուջեի կատարման հաշվետվությանը՝ ապահովելով հետադարձ կապ ՏԻՄ-երի և համայնքի բնակչության միջև,
- բյուջեի կատարման մասին ուղիղ կապով (մալուխային հեռուստատեսություն, հանդիպումներ) պարբերաբար հաղորդումների ներկայացում:

Բյուջեի հրապարակայնությունը մշտապես ապահովելու համար, բնակիչներին իրազեկ պահելուց բացի, պետք է նրանց լայնորեն ներգրավել բյուջեի մշակման և կատարման աշխատանքներին: Դա հնարավորություն կտա ծանոթանալ բնակչության հոգսերին, մտահոգություններին, լսել գնահատականները, սահմանել ավելի իրատեսական քաղաքականություն, նպատակներ, խնդիրներ, քննար-

կել ստացված արդյունքները: Բյուջեի հրապարակայնությանը կարող են նպաստել նաև այսպես կոչված «միջնորդ կապավորները» (համատիրությունները, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինները, քաղաքացիական ակտիվ խմբերը և այլն), որոնք անմիջական շփման մեջ են բնակչության հետ: Հետևապես, կարևոր է բյուջեի մշակման և կատարման աշխատանքներում ներգրավել ոչ միայն համայնքի ղեկավարի աշխատակազմի բաժինների, ծառայությունների ղեկավարներին, ավագանու անդամներին, այլև ներհամայնքային ներքին օղակների աշխատակիցներին: Մեծ դեր կարող են խաղալ նաև համայնքի տարածքում գործող պետական, մասնավոր ու հասարակական կազմակերպությունների, գործարարների և անհատ ձեռներեցների հետ շփումները, որոնց հետ սերտ փոխհամագործակցությամբ միայն կարելի է բարելավել համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, նպաստավոր պայմաններ ստեղծել համայնքի զարգացման և առաջընթացի համար:

13. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՏԻԾ 3 ծրագրային 38 քաղաքների 2003-09թթ. ֆինանսական վերլուծության մեթոդաբանությունը

ԱՄՆ ՄՁԳ ՏԻԾ 3-ը, «Ար-Թի-Այ» ինստիտուտի իրականացմամբ, 2005թ. հոկտեմբերի 1-ից սկսած տեխնիկական խորհրդատվություն է մատուցում ՀՀ 38 քաղաքային համայնքների ՏԻՄ-երին՝ տեղական ինքնակառավարման համակարգի օրենսդրական բարեփոխումների, ֆինանսական կառավարման, համայնքային ծառայությունների մատուցման, ավագանու գործունեության բարելավման և հանրային կապերի բնագավառներում:

Սույն ֆինանսական վերլուծության նպատակն է՝ վերլուծել և գնահատել ֆինանսական իրավիճակը համայնքներում, պարզել ֆինանսական ինչպես դրական, այնպես էլ բացասական փոփոխությունների պատճառները, գործոնները և կատարել կանխատեսումներ ապագա միտումների վերաբերյալ:

Ֆինանսական վերլուծության մեթոդաբանությունը հիմնված է հիմնականում հետևյալ գործողությունների պարբերական և հետևողական կատարման վրա՝

- համայնքների բյուջետային փաստաթղթերի հավաքում և արխիվացում,
- համայնքների բյուջետային տվյալների մուտքագրում ու մշակում, բյուջետային տվյալների շտեմարանի ստեղծում, օգտագործում և թարմացում,
- ֆինանսական ցուցանիշների սահմանում (ընտրություն), վերլուծում և գնահատում,
- ֆինանսատնտեսական պատճառների և գործոնների բացահայտում, եզրակացությունների հանգում և միտումների կանխատեսում:

ՏԻԾ 3 ծրագրային 38 քաղաքների 2003-05թթ. տարեկան բյուջեների և դրանց կատարման տարեկան հաշվետվությունների փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ քաղաքներից ոչ բոլորն էին, որ իրենց բյուջեները և դրանց կատարման հաշվետվությունները կազմում էին ՀՀ բյուջետային օրենսդրության պահանջներին խստորեն համապատասխան: Հատկապես դա վերաբերում է բյուջեների կատարման հաշվետվությունների ձևին, որը մարզից մարզ տարբերվում էր, և քաղաքներից քչերն էին օգտագործում ՀՀ ֆինանսների

նախարարի կողմից հաստատված հաշվետվության օրինակելի ձևը: Այդ պատճառով ՏԻԾ 3 ծրագրային քաղաքների 2003-05թթ. բյուջեների հաշվետվությունները մեծամասամբ թերի էին և լիարժեք չէին պարունակում ֆինանսական վերլուծության համար անհրաժեշտ բյուջետային բոլոր տվյալները:

Այդ հարցում վիճակն զգալիորեն բարելավվեց ՏԻԾ 3 «Գործառական և կապիտալ պլանավորում և բյուջետավարում» ուսուցման ծրագրի կազմակերպման և իրականացման շնորհիվ (իրականացնող՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ), որի ընթացքում ՏԻԾ 3 ծրագրային բոլոր քաղաքներին տրամադրվեց համայնքի բյուջեի նախագծի կազմման նմուշը և համայնքի բյուջեի կատարման հաշվետվության օրինակելի ձևը: Դրա շնորհիվ, հետագա տարիներին, հաջողվեց համայնքներից հավաքել քիչ թե շատ ամբողջական բյուջետային փաստաթղթեր, մասնավորապես՝ համայնքների 2006-09թթ. բյուջեները և դրանց կատարման տարեկան հաշվետվությունները:

Ելնելով վերը բերված նկարագրությունից, սույն ֆինանսական վերլուծությունը կատարվել է՝ հիմնականում համայնքների 2005-09թթ. բյուջետային տվյալների օգտագործմամբ, սակայն, որոշ ֆինանսական ցուցանիշներ վերլուծելիս և գնահատելիս, եթե 2003-04թթ. բյուջետային տվյալները ևս հնարավոր է եղել հայթայթել, ապա վերլուծությունն իրականացվել է ավելի երկար ժամանակահատվածի՝ 2003-09թթ. համար:

Հիմնվելով ՏԻԾ 3 ծրագրային 38 քաղաքների բյուջեների և դրանց կատարման հաշվետվությունների պարունակած բյուջետային տեղեկատվության վրա՝ ստեղծվել է բոլոր քաղաքների բյուջետային տվյալների շտեմարան, որի կառուցվածքը խստորեն համապատասխանեցվել է ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված բյուջետային դասակարգմանը (խոշորացված հոդվածներով)՝

- բյուջետային եկամուտներ,
- բյուջետային ծախսեր ըստ գործառական դասակարգման,
- բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման,
- բյուջեի հավելուրդը կամ պակասուրդը (դեֆիցիտը):

Բյուջետային տվյալների շտեմարանը յուրաքանչյուր տարի թարմացվել է՝ ավելացնելով արդեն եզրափակված տարվա բյուջետային տվյալները: Տվյալների այս շտեմարանը յուրաքանչյուր տարի օգտագործվել է ՏԻԾ 3 ընթացիկ վերլուծությունների կատարման, տարաբնույթ հաշվետվությունների (ըստ պահանջի, ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան) կազմման, ինչպես

նաև համայնքների վարկունակության գնահատման և այլ նպատակներով: Սույն ֆինանսական վերլուծությամբ փորձ է արվում ընդհանրացնել մինչև հիմա կատարված վերլուծություններն ու մոտեցումները և հանգել որոշակի եզրահանգումների՝ համայնքների ֆինանսական վիճակի, տեղի ունեցած փոփոխությունների պատճառների և միտումների վերաբերյալ: Կարծում ենք, սա օգտակար տեղեկատվություն կարող է լինել ինչպես, մասնավորապես, տեղական ինքնակառավարման բնագավառի առաջիկա ծրագրերի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար, այնպես էլ, ընդհանրապես, նմանատիպ ֆինանսական վերլուծություններ կատարելու մեթոդաբանությունը փորձարկելու և ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում (այդ թվում՝ առանձին վերցրած համայնքներում) այն կիրառելու համար:

Քանի որ ՏԻԾ 3-ում ընդգրկված են եղել տարբեր մեծության, սոցիալ-տնտեսական զարգացածության քաղաքներ, ֆինանսական վերլուծությունը կատարվել է ընդհանրական մոտեցմամբ՝ դիտարկելով բոլոր քաղաքների բյուջետային տվյալների ամփոփ (գումարային) տվյալները:

Ֆինանսական վերլուծությունները և հաշվարկները հիմնականում կատարվել են ՀՀ դրամով՝ որպես չափի միավոր ընդունելով «հազար դրամը» և դիտարկելով բյուջետային տվյալների բացարձակ արժեքները (բացարձակ ցուցանիշներ): Սակայն, որոշ ֆինանսական ցուցանիշներ հետազոտելիս, երբ գտնվել է դրա նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը, ֆինանսական վերլուծությունը կատարվել է նաև ԱՄՆ դոլարով՝ ՀՀ դրամով արտահայտված ամփոփ բյուջետային տվյալները վերածելով ԱՄՆ դոլարային բյուջետային տվյալների՝ հաշված դոլարի տվյալ տարվա պաշտոնական միջինացված փոխարժեքով:

Հաջորդ կարևոր գործոնը տարեկան գնաճը (ինֆլյացիան) հաշվի առնելու հարցն է: Դա հնարավորություն է տալիս ավելի իրատեսական գնահատականներ տալ տարիների ընթացքում ծախսված գումարների և կատարված աշխատանքների իրական ծավալների և արդյունավետության վերաբերյալ: Այնտեղ, որտեղ նպատակահարմար է գտնվել, ֆինանսական վերլուծությունը կատարվել է՝ հաշվի առնելով նաև տարեկան միջին գնաճը՝ սպառողական գների ինդեքսը:

Ֆինանսական արդյունավետ վերլուծություն կատարելու համար շատ կարևոր է ֆինանսական ցուցանիշների ճիշտ սահմանումը (ընտրությունը), դրանց գնահատումը և օգտագործումը: Կարող են ընտրվել և օգտագործվել միջազգայնորեն ընդունված ֆինանսական ինչպես բացարձակ, այնպես էլ հարա-

բերական ցուցանիշներ: Ֆինանսական բացարձակ ցուցանիշներն օգտակար են որոշակի ժամանակահատվածում տվյալ համայնքի կամ համայնքների խմբի (ինչպես նաև երկրի բոլոր համայնքների) բյուջետային մուտքերի և ելքերի փոփոխությունը վերլուծելու և գնահատելու համար: Սակայն, համամասնությունների պահպանման տեսանկյունից և տարբեր համայնքների (երկրների) և տարիների բյուջետային տվյալների համեմատական վերլուծություններ կատարելու համար, առավել նպատակահարմար է ֆինանսական հարաբերական ցուցանիշների օգտագործումը: Սույն ֆինանսական վերլուծությունում փորձել ենք արդյունավետորեն զուգակցել ֆինանսական բացարձակ և հարաբերական ցուցանիշների ընտրությունը, օգտագործումը և գնահատումը:

Մյուս կողմից, ֆինանսական ցուցանիշների քանակը պետք է օպտիմալ լինի: Քիչ քանակով ցուցանիշների օգտագործումը կարող է չապահովել վերլուծության ամբողջականությունը և լիարժեքությունը, իսկ չափից շատ քանակով ցուցանիշների առկայությունը կարող է առաջ բերել վերլուծական շփոթություն և տարաբնույթ մեկնաբանություններ: Այստեղից հետևում է, որ պետք է ընտրել ֆինանսական ցուցանիշներից ամենակարևորները և ամենաօգտակարները, որոնց օգտագործումը կապահովի վերլուծությունների արդյունավետությունը և եզրահանգումների հավաստիությունը:

Ուսումնասիրելով միջազգային փորձը ֆինանսական վերլուծություններ կատարելու բնագավառում՝ ընտրվել են հետևյալ հիմնական ֆինանսական ցուցանիշները՝

- Համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների հաստատված պլանների և փաստացի կատարողականների հարաբերակցություններն ըստ տարիների
- Համայնքների սեփական եկամուտների փաստացի կատարողականներն ըստ տարիների
- Համայնքների կողմից ստացված պաշտոնական դրամաշնորհների (ընթացիկ և կապիտալ) փաստացի կատարողականներն ըստ տարիների
- Բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների փաստացի եկամուտները
- Համայնքների բյուջեների եկամուտների առանձին տեսակների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ և դրանց աճը / նվազումը ըստ տարիների

- Չողի հարկի հավաքագրման մակարդակն ըստ տարիների
- Գույքահարկի հավաքագրման մակարդակն ըստ տարիների
- Կապիտալ գործառնությունների (համայնքի սեփականություն համարվող հողի և գույքի օտարման գծով) մակարդակն ըստ տարիների
- Համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտներում վարչական և ֆոնդային մասերի եկամուտների հարաբերակցություններն ըստ տարիների
- Համայնքների բյուջեների ծախսերի (ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման) հաստատված պլանների և փաստացի կատարողականների հարաբերակցություններն ըստ տարիների
- Համայնքների բյուջեների ըստ գործառական դասակարգման ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով
- Համայնքների բյուջեների ծախսերի առանձին տեսակների (ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման) տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերի մեջ և դրանց աճը / նվազումը ըստ տարիների
- Համայնքների աշխատողների աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների փաստացի կատարողականներն ըստ տարիների
- Համայնքների բյուջեների փաստացի ընդհանուր ծախսերում ընթացիկ և կապիտալ ծախսերի (վարչական և ֆոնդային մասերի) հարաբերակցությունները
- Համայնքների բյուջեների վարչական և ֆոնդային մասերի հավելուրդների / պակասուրդների տեսակարար կշիռներն ընդհանուր հավելուրդի / պակասուրդի մեջ:

Նկատենք, որ թվարկված ֆինանսական ցուցանիշներից առաջին ինը եկամտային ցուցանիշներ են, հաջորդ հինգը՝ ծախսային ցուցանիշներ, իսկ վերջինը՝ բյուջեների հավասարակշռման ցուցանիշ: Իհարկե, ֆինանսական ցուցանիշների վերջնական ֆիքսումը խիստ պայմանական է, քանի որ թվարկված ցուցանիշները փոխկապակցված են միմյանց հետ, ինչպես նաև ընտրված ցուցանիշների գնահատման ընթացքում չի բացառվում, որ վերլուծության ենթարկվեն նաև հարակից այլ ցուցանիշներ:

ՏԻԾ 3 ծրագրային 38 քաղաքների ֆինանսական վերլուծության հիմնական խնդիրները, եզրակացությունները և միտումները

Տեղական ինքնակառավարման համակարգում, այդ թվում՝ առանձին վերցրած համայնքում, ֆինանսական վերլուծություններ կատարելու համար, նախ, պետք է մշակել և գործողության մեջ դնել համապատասխան **մեթոդաբանություն**, որն ուղղակիորեն առնչվում է ֆինանսական կառավարման ռազմավարություն (քաղաքականություն) մշակելու, ընդունելու և իրականացնելու անհրաժեշտության հետ: ՏԻԾ 3-ը մշակել և ծրագրային 38 քաղաքներին է տրամադրել «Համայնքի ֆինանսական կառավարման ռազմավարություն (քաղաքականություն)» փաստաթղթի օրինակելի մի ձև (տե՛ս հավելված 1), որի հիման վրա ՏԻԾ 3 ծրագրային 35 քաղաքների ՏԻՄ-երն ընդունել և գործողության մեջ են դրել իրենց համայնքների ֆինանսական կառավարման ռազմավարությունները (քաղաքականությունները): Սակայն, վերջին մեկ տարվա մեր դիտարկումները ցույց են տալիս, որ որոշ համայնքներ դեռևս հանդես չեն բերում անհրաժեշտ մակարդակի հետևողականություն և ընդունված ռազմավարությունների իրականացումն այդ համայնքներում դեռևս ձևական բնույթ է կրում: Դա հիմնականում բացատրվում է նրանով, որ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում առայժմ չկա նմանատիպ ֆինանսական կառավարման ռազմավարություն ունենալու օրենսդրական պահանջ, ինչպես նաև համայնքներում դեռևս ձևավորված չեն համապատասխան փորձ ու ավանդույթներ:

Համայնքի (կամ համայնքների խմբի) ֆինանսական իրավիճակային վերլուծություն կատարելու հաջորդ կարևոր խնդիրը վերլուծության համար անհրաժեշտ բյուջետային տվյալների տեղեկատվական շտեմարանների (բազաների) ստեղծման, թարմացման և օգտագործման հարցերն են: Բացառությամբ մի քանի քաղաքների (օրինակ՝ Աբովյան, Ալավերդի, Արթիկ, Արմավիր, Դիլիջան, Չարենցավան, Սևան, Վանաձոր), ՏԻԾ 3 ծրագրային համայնքներում մեծամասամբ ստեղծված չեն բյուջետային տվյալների տեղեկատվական շտեմարաններ: Դրա հիմնական պատճառն այն է, որ համայնքներում բյուջետավարման համակարգչային ծրագրերի ներդրումից հետո, դրանք, հիմնականում, հետևողականորեն և անընդհատ չեն շահագործվել ու սպասարկվել, որի արդյունքում էլ աստիճանաբար դադարել են գոյություն ունենալուց: Չնայած այս հանգամանքին, համայնքները կա-

րող են նաև սեփական նախաձեռնությամբ (առանց բյուջետավարման համապատասխան համակարգչային ծրագրի առկայության) ստեղծել բյուջետային տվյալների շտեմարաններ և օգտագործել դրանք տարբեր ֆինանսատնտեսական վերլուծություններ կատարելու համար՝ օգտվելով MS Office համակարգչային փաթեթի ծրագրային միջոցների ընձեռած հնարավորություններից:

Արդյունավետ և լիարժեք ֆինանսական վերլուծություն կատարելու հաջորդ կարևոր խնդիրը համայնքների բյուջետային փաստաթղթերի (բյուջե, բյուջեի կատարման հաշվետվություն և այլն) որակի հարցն է: Ներկայումս դա առանձնակի կարևորություն ունի, քանի որ, 2009թ.-ից սկսած, համայնքներն իրենց բյուջեները կազմում և կատարում են ՀՀ-ում ներդրված բյուջետային նոր դասակարգմամբ: Սակայն, ՏԻԾ 3 ծրագրային համայնքների 2009-10թթ. բյուջեների նախագծերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների մի մասի բյուջեների նախագծերում բացակայում է բյուջեի նախագծի՝ օրենքով սահմանված կառուցվածքի առաջին մասը՝ համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը, որն իր մեջ պետք է պարունակի կարևոր վերլուծական տեղեկատվություն նախորդ երկու տարիների բյուջեների կատարման վերաբերյալ, ինչպես նաև առաջացած ապառքների ու պարտքերի, դրանց մարման ժամանակացույցերի և այլնի վերաբերյալ: Այդ համայնքները բավարարվել են՝ կազմելով միայն բյուջեի նախագծի կառուցվածքի երկրորդ մասը՝ համայնքի ավագանու որոշման նախագիծը, այն է՝ լրացնելով ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված բյուջետային ձևերը (հատված 1-6), որտեղ բացակայում են նախատեսված ֆինանսական միջոցների հիմնավորումները: Դա է պատճառը, որ ՏԻԾ 3-ը մշակել և համայնքներին է տրամադրել բյուջեի նախագծի նոր նմուշը՝ բյուջետային օրենսդրությամբ սահմանված բյուջետային նոր դասակարգմանը խստորեն համապատասխան (տե՛ս հավելված 3): Համապատասխանաբար, համայնքներին է տրամադրվել նաև ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված՝ համայնքի բյուջեի կատարման հաշվետվության նոր ձևը, որը երաշխավորում է տարբեր համայնքների բյուջետային տվյալների միասնականությունն ու ամբողջականությունը, և դրա արդյունքում նաև՝ ֆինանսական վերլուծությունների արդյունավետությունն ու լիարժեքությունը:

Վերլուծելով ՏԻԾ 3 ծրագրային 38 քաղաքների 2003-09թթ. բյուջեների կատարման հաշվետվությունները⁸, հանգում ենք այն եզրակացության, որ վերջին 7 տարիներին զգալիորեն աճել են ՏԻԾ 3 ծրագրային համայնքների բյուջեների՝ ինչպես եկամտային և ծախսային բացարձակ ցուցանիշները (մոտ 2 անգամ), այնպես էլ բյուջեների փաստացի կատարման տոկոսները՝ 2007թ.-ին առաջին անգամ գերազանցելով 100% սահմանագիծը: Չնայած դրան, նույնը չի կարելի ասել համայնքների իրական եկամուտների և ծախսերի մասին, եթե հաշվի առնենք նաև տարեկան արձանագրված գնաճը (սպառողական գների ինդեքսը ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալներով): Ընդ որում, եթե 2003-07թթ. ընթացքում ՀՀ-ում գնաճի տարեկան միջին տոկոսը պաշտոնական տվյալներով կազմել է մոտ 5%, ապա 2008թ.-ին այն հասել է 9%-ի, իսկ 2009թ.-ին՝ 3,4%-ի: Վերջին տարիների գնաճի տատանումներն որոշակիորեն կապված են նաև համաշխարհային անմախաղեպ ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով համընդհանուր տնտեսական անկման հետ, որից չի կարողացել խուսափել նաև Հայաստանը, այդ թվում՝ ՀՀ համայնքները: Դա է հիմնական պատճառներից մեկը, որ 2008թ.-ին, 2007թ. համեմատությամբ, նվազել են ՏԻԾ 3 ծրագրային համայնքների բյուջեների ինչպես ընդհանուր եկամտային և ծախսային բացարձակ ցուցանիշները (մոտ 1,25 մլրդ. դրամով կամ 8,8%-ով), այնպես էլ դրանց կատարման տոկոսները՝ իջնելով մինչև 90%-ի: Իսկ 2009թ.-ին, 2008թ. համեմատությամբ, նորից արձանագրվել է այդ ցուցանիշների որոշակի աճ (համապատասխանաբար՝ մոտ 0,8 մլրդ. դրամով կամ 6,2%-ով):

2003-09թթ. ընթացքում տարեցտարի անընդհատ աճել է բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների փաստացի եկամուտը՝ 2007-09թթ. հասնելով 50-55 ԱՄՆ դոլարի: Սակայն, եթե հաշվի առնենք նաև տարեցտարի ՀՀ-ում նկատվող գների աճը և ՀՀ դրամի ու ԱՄՆ դոլարի իրական գնողունակությունը,

⁸ ՏԻԾ 3 ծրագրային 38 քաղաքների 2003-2009թթ. ֆինանսական վերլուծության մանրամասն նկարագրությունը և ստացված արդյունքները բերված են ՏԻԾ 3 համապատասխան փաստաթղթում, սույն ձեռնարկում ներկայացվում են միայն այդ վերլուծության հիմնական եզրակացությունները և կանխատեսվող միտումները, ինչպես նաև ձեռնարկի անգլերեն լեզվով ամփոփ տարբերակի վերջում գետեղված որոշ աղյուսակներ և գծապատկերներ՝ հավելվածի տեսքով:

ապա այս ցուցանիշը, կարելի է ասել, էական որակական փոփոխության առայժմ չի ենթարկվել:

Դրական միտում է նկատվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման հարցում: Նախ, 2003-09թթ. ընթացքում համայնքներում աստիճանաբար բարձրացել է հարկային եկամուտների (հողի հարկի և գույքահարկի) հավաքագրման մակարդակը (համապատասխանաբար մինչև 70% և 85%-ի): Համայնքները 2004-09թթ. ընթացքում բավական լուրջ աշխատանք են կատարել գույքահարկի տվյալների բազաների ճշտման և թարմացման ուղղությամբ: Եթե այդ աշխատանքները հետևողականորեն շարունակվեն և գույքահարկի հավաքագրման մակարդակն էլ ավելի բարձրանա՝ մոտենալով 95-100%-ին, ապա կարելի է ակնկալել, որ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների մեջ կբարձրանա նաև գույքահարկի տեսակարար կշիռը:

ՏԻՄ-երից նույնպիսի հետևողական աշխատանք է պահանջվում նաև հողի հարկի տվյալների շտեմարանների ճշտման և թարմացման ուղղությամբ, որի արդյունավետ իրականացման դեպքում կարելի է ակնկալել, որ կբարձրանա նաև հողի հարկի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ:

Երկրորդ, 2005թ.-ից սկսած, համայնքների բյուջեներում կտրուկ աճել են կապիտալ գործառնությունների գծով մուտքերը՝ պայմանավորված հիմնականում ՀՀ կառավարության որոշումներով համայնքների սեփականությանը փոխանցված պետական պահուստային հողերի օտարման գործընթացներով: Սակայն, 2008թ.-ից սկսած, նկատվում է այդ մուտքերի նվազման միտում, քանի որ աստիճանաբար սպառվում են վաճառքի ենթակա լավագույն հողակտորները: Վերլուծության արդյունքում, 2005-09թթ. ընթացքում հողերի օտարումից մուտքերը՝ գնաճի հաշվի առնմամբ, աճել են 136,6%-ով, գույքի օտարումից մուտքերը՝ 31,8%-ով և կապիտալ գործառնությունների գծով ընդհանուր մուտքերը՝ 104,6%-ով: Հատկանշական է, որ ՏԻԾ 3 ծրագրային 38 քաղաքների 2004-08թթ. բյուջեներում քառակի անգամ աճել է կապիտալ գործառնությունների գծով փաստացի մուտքերի տեսակարար կշիռն բյուջեների ընդհանուր եկամուտների մեջ՝ 7%-ից հասնելով 28%-ի:

Տուրքերը (պետական և տեղական տուրքերը միասին վերցրած) համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների մեջ ունեն կայուն՝ 4-5% տեսակարար կշիռ: ՏԻՄ-երի կողմից տեղական տուրքերի դրույքաչափերի խելամիտ սահմանումը կարող է խթանել համայնքների տնտեսական զարգացումը և, այդ առու-

մով, պահանջվում է որոշակի քաղաքականության մշակում և իրականացում: Վերլուծելով ՏԻԾ 3 ծրագրային 38 քաղաքների բյուջետային մուտքերը տեղական տուրքերի գծով, կարելի է եզրակացնել, որ այդպիսի քաղաքականությունների ընդունումը և իրականացումը համայնքներում առայժմ ձևական բնույթ է կրում:

Համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների մեջ բավական զգալի տեսակարար կշիռ ունեն այլ եկամուտները՝ կազմելով 10-12%:

Այսպիսով, 2005-08թթ.-ին ՏԻԾ 3 ծրագրային համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտներում աճել են սեփական եկամուտների տեսակարար կշիռները՝ 45%-ից հասնելով 57%-ի, և համապատասխանաբար նվազել՝ պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռները, չնայած այն իրողությանը, որ տարեցտարի աճել են պաշտոնական դրամաշնորհների (հիմնականում՝ ֆինանսական համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների աճի հաշվին) բացարձակ ցուցանիշները: Ընդ որում, համայնքների 2004-09թթ. բյուջեներում խիստ անհամաչափ են ստացվել պաշտոնական կապիտալ դրամաշնորհները, որոնց տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ նվազել են հատկապես 2006թ.-ին, 2008թ.-ին և 2009թ.-ին՝ կազմելով համապատասխանաբար 1,2%, 1,4% և 2,0%: Այդպիսի ցածր ցուցանիշները հիմնականում պայմանավորված են ՀՀ պետական բյուջեից այդ տարիներին կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների կտրուկ նվազումով: Սա էլ նշանակում է, որ ՀՀ-ում ամբողջությամբ կանոնակարգված և նպատակաուղղված չէ պետական բյուջեից համայնքներին կապիտալ պաշտոնական դրամաշնորհների տրամադրման հարցը:

Կատարված ֆինանսական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեցտարի աճել են համայնքների բյուջեների ֆոնդային մասերի փաստացի եկամուտների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ՝ 2004թ. 12,5%-ից 2007թ.-ին հասնելով մինչև 40%-ի, իսկ 2008-09թթ. այն նորից նվազել է՝ հասնելով մինչև համապատասխանաբար 30% և 17%-ի: Սա վկայում է այն մասին, որ 2006-08թթ. ընթացքում որոշակիորեն ավելացել են քաղաքային համայնքների հնարավորությունները՝ կատարելու ինչպես կապիտալ նորոգման աշխատանքներ համայնքային ենթակառուցվածքների վրա, այնպես էլ կապիտալ ներդրումներ՝ վերականգնելու և ընդլայնելու այդ ենթակառուցվածքները, ինչպես նաև կառուցելու նորերը:

Համայնքներում դեռևս բարձր մակարդակի վրա չեն բյուջեների եկամուտների բազաների ճշտումը և եկամուտների կանխատեսումը: Նկատելի է, որ համայնքները չափից ավելի զգույշ են մոտենում իրենց եկամուտների կանխատեսումներին և ճշգրիտ չեն հաշվարկում իրենց բյուջետային միջոցները: Երբեմն էլ սա կատարվում է միտումնավոր՝ արհեստականորեն բյուջեի կատարման ավելի բարձր տոկոս ապահովելու նպատակով, կարծես, նախօրոք իրենց ապահովագրելով եկամուտների հավաքագրման թերակատարումից: Այս իրողությունը ՀՀ համայնքներում, իհարկե, ունի նաև իր օբյեկտիվ պատճառները, ինչպես ասում են՝ լավ կյանքից չէ, որ համայնքի ֆինանսական վիճակն իրականությանը համարժեք չի ներկայացվում և ֆինանսական կառավարման չլուծված շատ հիմնախնդիրներ մնում են ստվերում և չբացահայտված:

2003-07թթ. ընթացքում, բյուջետային եկամուտների անշեղ աճին զուգահեռ, բնականաբար, տարեցտարի աճել են ՏԻՄ-երի գործունեության օրենքով սահմանված **գործառական** բոլոր ոլորտներին հատկացվող **ծախսերը**: Սակայն, այդ աճը կանգ է առել 2008թ.-ին, քանի որ համայնքների 2008թ. բյուջեների եկամուտների բացարձակ ցուցանիշները նույնպես նվազել են, իսկ 2009թ.-ին արդեն նորից արձանագրվել է համայնքների բյուջետային բացարձակ ցուցանիշների աճ:

Մինչև 2008թ. աճել է նաև համայնքների բյուջեների ըստ գործառական դասակարգման ընդհանուր ծախսերի կատարման հարաբերական ցուցանիշը՝ հասնելով 100% սահմանագծին: Սակայն 2008-09թթ. այդ ցուցանիշն արդեն նվազել է մինչև 90-93%, որն արդեն անհանգստանալու լուրջ ահազանգ պետք է հանդիսանա համայնքների համար:

Համայնքների 2003-09թթ. բյուջեներում գործառական ոլորտների ծախսային փաստացի կատարողական ցուցանիշները մոտավորապես ուղիղ համեմատական են ընդհանուր ծախսերի փաստացի կատարողական ցուցանիշներին, բացառությամբ մի քանի ոլորտների՝ առողջապահության, սոցիալական ապահովության, բնակարանային-կոմունալ տնտեսության, տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի, որոնց դեպքում, որոշ տարիներին փաստացի հատկացվել են նախատեսված գումարներից ավելի շատ գումարներ, որի արդյունքում այդ ոլորտներում փաստացի կատարողական ցուցանիշները գերազանցել են 100% սահմանագիծը:

Բնակարանային-կոմունալ տնտեսության (14-20%), տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի (3-10%) ոլորտներում կատարված ծախսերի

տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերի մեջ տարեցտարի անընդհատ զգալիորեն աճել են: Սա նշանակում է, որ համայնքներն աստիճանաբար ընդլայնում են իրենց գործունեությունը բնակարանային-կոմունալ ոլորտում ծառայությունների մատուցման (աղբահանություն, սանիտարական մաքրում, կանաչապատում, ջրամատակարարում և ջրահեռացում, ջերմամատակարարում, բնակելի ֆոնդի պահպանում, շահագործում և նորոգում և այլն) և ճանապարհային տնտեսության պահպանման, շահագործման, նորոգման ու բարեկարգման աշխատանքների իրականացման ուղղություններով: Մնացած ոլորտներում 2003-2009թթ. ընթացքում կատարված ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերի մեջ մոտավորապես նույնն են մնացել կամ նույնիսկ՝ նվազել (օրինակ, ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների ոլորտում):

Միաժամանակ, մի շարք ոլորտներում ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման ընդհանուր ֆինանսավորման չափը չնչին մաս է կազմում (1-3%) համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեջ: Այդ ոլորտներում համայնքները կամ ընդհանրապես չունեն պարտադիր կամ պատվիրակված լիազորություններ (օրինակ, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության, առողջապահության, զբոսաշրջության ոլորտներում), կամ համայնքները մասամբ են ֆինանսավորում օրենքով իրենց տրված լիազորությունները (օրինակ, գյուղատնտեսության, բնապահպանության, շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտներում): Լիազորությունների մասնակի ֆինանսավորումը պայմանավորված է, այլ գործոնների թվում, համայնքների բյուջեների ֆինանսական միջոցների սղությամբ: Տպավորությունն այնպիսին է, որ միջոցները չեն բավականացնում՝ ֆինանսավորելու ՏԻՄ-երի լիազորությունների իրականացումը նույնիսկ այնպիսի սոցիալական ուղղվածություն ունեցող ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, մշակույթը, սպորտը, սոցիալական ապահովությունը, ինչպես նաև՝ էականորեն ընդլայնելու ՏԻՄ-երի գործունեությունը տնտեսական ուղղվածություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են քաղաքաշինությունը, բնակարանային-կոմունալ տնտեսությունը, շինարարությունը, տրանսպորտը, ճանապարհային տնտեսությունը և կապը և այլն:

Եթե սրան ավելացնենք նաև այն, որ որոշ պատվիրակված լիազորությունների իրականացման գծով (օրինակ, հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների, վարձավճարների գանձման և վերահսկման գծով) պետությունը չի փոխհատուցել համայնքների կատարած ծախսերը, ապա համայնքների ֆի-

նանսական վիճակի պատկերն ամբողջական կլինի: Արդյունքում, փաստորեն, համայնքների գերակշռող մասը (հատկապես՝ փոքր ու միջին մեծության), մասնավորապես, իրենց բյուջեների ֆինանսական միջոցների սղության պատճառով, չեն կարողանում լիարժեքորեն իրականացնել օրենսդրությամբ արդեն իսկ իրենց տրված լիազորությունները:

Առաջին հայացքից թվում է, թե ԱՄՆ դոլարի փոխարժեքի՝ վերջին տարիների միջին հաշվով տեղի ունեցած նվազումը դրական ազդեցություն է ունեցել կատարված ծախսերի բացարձակ և հարաբերական ցուցանիշների վրա: Սակայն, եթե հաշվի առնենք նաև տարեցտարի նկատվող գների աճը և ՀՀ դրամի իրական գնողունակության նվազումը, ապա, կարելի է ասել, որ բնակչության մեկ շնչին ընկնող՝ ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների ծախսերը, վերջին տարիների ընթացքում, զգալի փոփոխությունների չեն ենթարկվել և էական դրական ազդեցություն չեն ունեցել բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և, ընդհանրապես, նրա կենսամակարդակի վրա:

Համայնքների 2005-09թթ. բյուջեների **ծախսերը տնտեսագիտական բոլոր ուղղություններով** բացարձակ արժեքով նույնպես աճել են: Բացառություն են կազմում միայն 2008-09թթ. կապիտալ ներդրումների գծով ծախսերը, որոնք նվազել են: Սա պայմանավորված է համայնքների 2008-09թթ. ֆոնդային բյուջեների եկամուտների նվազումով: Միաժամանակ, 2008-09թթ. ընթացքում կապիտալ նորոգումների գծով ծախսերը չեն նվազել, ինչը նշանակում է, որ համայնքային ենթակառուցվածքների վերանորոգման աշխատանքների տեմպերն առաջմ չեն թուլացել: Փաստորեն, 2008-09թթ. համայնքներն առաջնահերթություն են տվել և նույն ծավալներով շարունակել են իրենց ենթակառուցվածքների կապիտալ նորոգումների աշխատանքները, իսկ կապիտալ ներդրումներ համայնքային տնտեսություններում կատարվել են այն չափով, որքանով բավականացրել են ֆոնդային բյուջեների եկամուտները:

Համայնքների 2005-09թթ. բյուջեներում արձանագրվել է համայնքային աշխատողների աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերի աճի միտում: Սա պայմանավորված է եղել ոչ այնքան համայնքային աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ (թեև որոշ համայնքներում դա էլ է տեղի ունեցել), որքան, օրենքով սահմանված կարգով, ՀՀ-ում նվազագույն աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների ներքին շենքի աստիճանական բարձրացմամբ: Վերջինս էլ պայմանավորված է ՀՀ կառավար-

րության կողմից հետևողականորեն վարվող քաղաքականությամբ՝ կապված «Կայուն զարգացման ռազմավարական ծրագրի» պահանջների կատարման հետ:

Չնայած համայնքների 2005-09թթ. բյուջեներում աշխատավարձերի և ընթացիկ տրանսֆերտների գծով ծախսերի բացարձակ ցուցանիշների աճին, այդ ծախսատեսակների տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերի մեջ նվազել են՝ աշխատավարձերի գծով 30%-ից իջնելով մինչև 22%-ի, իսկ ընթացիկ տրանսֆերտների գծով 11%-ից իջնելով մինչև 8%-ի:

Դրական է նաև համայնքների բյուջեներից կատարվող սուբսիդավորման ծախսերի անընդհատ աճը 2005-09թթ. ընթացքում: Հատկապես տպավորիչ է այդ հոդվածի գծով աճը 2008-09թթ.-ին՝ ավելի քան 40%-ով: Սա խոսում է այն մասին, որ համայնքները՝ գնալով ավելի շատ աշխատանքների կատարում և (կամ) համայնքային ծառայությունների մատուցում պատվիրակում են մասնագիտացված կազմակերպություններին, որն էլ, իր հերթին, բերում է ծառայությունների մատուցման ավելի բարձր որակ՝ համեմատած ՏԻՄ-երի կողմից այդ ծառայությունների մատուցման կազմակերպման դեպքում ծառայության որակի հետ:

Դրական միտում է նաև համայնքների բյուջեներից սուբսիդիաների գծով ծախսերի տեսակարար կշիռների տարեցտարի անընդհատ աճը՝ 4%-ից հասնելով մինչև 11%-ի: Սա նշանակում է, որ համայնքներն աստիճանաբար ավելացնում են համայնքային տարաբնույթ ծառայություններ մատուցող կազմակերպություններին դոտացիոն կամ մրցութային կարգով հատկացվող և աշխատանքների պատվիրակման գումարների չափերը, որն էլ, իր հերթին, բերում է համայնքային ծառայությունների շրջանակի, ծավալների և որակի աստիճանական բարձրացման:

Ընդհանուր առմամբ, համայնքների 2003-09թթ. բյուջեների՝ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի բացարձակ ցուցանիշներն աճել են, բացառությամբ 2008-09թթ. բյուջեների կապիտալ ծախսերի, որոնք, 2007թ. բյուջեների կապիտալ ծախսերի համեմատությամբ, նվազել են: Ըստ այդմ, աճել են նաև 2003-07թթ. բյուջեներում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում՝ 18%-ից հասնելով մինչև մոտ 40%-ի, իսկ 2008-09թթ. այդ ցուցանիշը նվազել է մինչև համապատասխանաբար՝ 34% և 19%-ի:

Համայնքների 2004-06թթ. բյուջեներում **հավելուրդի կամ պակասուրդի** չափերն առանձնապես մեծ չեն եղել և դրանք հիմնականում գոյացել են նախորդ տարիների բյուջեների կատարման արդյունքներով առաջացած տարեսկզբի

ազատ մնացորդների հաշվին, իսկ 2007-09թթ. բյուջեներում հավելուրդի կամ պակասուրդի գումարները կտրուկ աճել են՝ հիմնականում համայնքի սեփականություն համարվող հողերի օտարումների շնորհիվ առաջացած տարեսկզբի ազատ մնացորդների հաշվին: Այս ուղղությամբ մեծ չափի գումարներ են կուտակել հատկապես այն համայնքները, որոնք ունեն բավականին շատ սեփականության հողեր և (կամ) որոնց սեփականության հողերի կադաստրային և (կամ) շուկայական արժեքները համեմատաբար բարձր են:

Համայնքների բյուջեների ամփոփ հավելուրդի կամ պակասուրդի մեջ գերակշռող մաս կազմել է ֆոնդային բյուջեների հավելուրդը կամ պակասուրդը, որը, 2005թ.-ից սկսած, տարեցտարի աճել է՝ 2007թ.-ին հասնելով մոտ 98%-ի, իսկ բյուջեների վարչական մասերի հավելուրդը կամ պակասուրդը, որպես կանոն, մեծ գումարներ չի կազմել և նրա տեսակարար կշիռն աստիճանաբար նվազել է՝ հասնելով մինչև 2%-ի:

Համայնքների բյուջեների՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերում, տոկոսավճարների գծով, տարիներ շարունակ արձանագրված զրոյական ցուցանիշները փաստում են, որ համայնքները դեռևս չեն ունեցել փոխառու միջոցներ (վարկերի և պարտատոմսերի տեսքով) ներգրավելու հնարավորություններ:

Սույն ֆինանսական վերլուծության **հիմնական եզրակացությունն** այն է, որ ՀՀ ՏԻՄ-երի հիմնական խնդիրներից է՝ համայնքների վրա ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների իսպառ վերացումը և համայնքների ֆինանսական վիճակի աստիճանական կայունացումը: Հասունացել է Հայաստանում վարչական և ֆինանսական ապակենտրոնացման հետագա խորացման, նոր քաղաքականության որդեգրման և, դրան համապատասխան, ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը:

14. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՌԿ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Համայնքի բյուջեի կատարման վերահսկման գործընթացի բաղկացուցիչ մասն է բյուջեով նախատեսած համայնքային ծառայությունների մատուցման, ծրագրերի և աշխատանքների կատարման վերլուծությունն ու գնահատումը: Այն օբյեկտիվ և սխտեմատիկ գործընթաց է, որի նպատակն է՝ տվյալների հավաքումը, վերլուծումը և օգտագործումը ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների արդյունավետության և իր առջև դրված նպատակների իրականացման աստիճանի գնահատման համար: Գնահատման լավ մշակված համակարգն օգնում է ՏԻՄ-երի գործունեությունը դնել ճիշտ հունի մեջ, գործուն քայլեր ձեռնարկել իրավիճակի բարելավման համար, հետադարձ կապ է ապահովում ՏԻՄ-երի համար, առանց որի անհնար է ապահովել մատուցվող ծառայությունների շարունակական բարելավումը:

Աշխատանքների կատարման գնահատման լավ մշակված և ճիշտ կիրառվող համակարգը ՏԻՄ-երին ընձեռում է մի շարք առավելություններ՝ քաղաքականության մշակման, պլանավորման, բյուջետավարման, պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցման, օպերատիվ կառավարման, հաշվետվությունների կազմման, աշխատանքների կատարման վերահսկողության ուղղություններով:

Ընդհանուր առմամբ, ՏԻՄ-երի որևէ աշխատանքի, ծրագրի կատարման կամ ծառայության մատուցման արդյունավետությունը գնահատելու համար հիմնականում պետք է կատարել հետևյալ երեք քայլերը՝ սահմանել աշխատանքի, ծրագրի կամ ծառայության նպատակները, գնահատել դրանց իրականացման ընթացքը և արդյունքների մասին զեկուցել համապատասխան ղեկավար պաշտոնյաներին, որոնք իրավասու են ստացված տեղեկատվության հիման վրա համապատասխան որոշումներ կայացնել և դրանց համարժեք միջոցներ ձեռնարկել:

Աշխատանքների կատարման (ֆունկցիոնալ) ցուցանիշներ

Բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման գնահատումն իրականացվում է **աշխատանքների կատարման կամ ֆունկցիոնալ ցուցանիշների** միջոցով: Դրանք տեղեկություններ կամ տվյալներ են, որոնք կիրառվում են

ծրագրի կամ ծառայության որևէ ֆունկցիոնալ մասի (աշխատանքի) կատարումը կամ դրանից հրաժարումը գնահատելու համար:

Տարբերակվում են ծառայության մատուցման կամ աշխատանքների կատարման ֆունկցիոնալ ցուցանիշների չորս տեսակներ՝ մուտքային, ելքային, հետևանքային և արդյունավետության (տե՛ս ստորև բերված աղյուսակը):

Աղյուսակ. Բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման ցուցանիշների տեսակները և դրանց նկարագրությունը

<p>Ներդրված ռեսուրսներ (մուտքային ցուցանիշներ)</p>	<p>Ներկայացրեք այն ռեսուրսները (մարդկային, ֆինանսական, նյութական, սարքավորումներ և այլն), որոնք անհրաժեշտ են ծառայության մատուցման ապահովման համար, ինչպես, օրինակ, պլանավորված ծախսերը, աշխատուժը, աշխատաժամերը, նյութական ռեսուրսների քանակը և սարքավորման օգտագործման ժամերը: Ներդրված ռեսուրսները հեշտ սահմանվող են և հաճախ ընդգրկվում են բյուջեում ներառված ծրագրերում և նախահաշիվներում: Այսուհանդերձ, պետք է նշել, որ դրանք ոչինչ չեն ասում այն մասին, թե ի՞նչ է ձեռք բերվել այդ ռեսուրսների ներդրմամբ:</p>
<p>Կատարված աշխատանքների քանակական արդյունքներ (ելքային կամ քանակական ցուցանիշներ)</p>	<p>Ցույց տվեք, թե ի՞նչ ծավալի աշխատանքներ են իրականացվել, օրինակ՝ ինչքա՞ն աղբ է հավաքվել, քանի՞ հեկտար խոտ է հնձվել զբոսայգիներում, քանի՞ ճանապարհափոս է լցվել, քանի՞ արտոնագիր է տրվել, քանի՞ ստուգայց է կատարվել կառուցվող շենքերում: Այս ցուցանիշները կարող են մեկնաբանվել տարբեր ձևերով:</p>
<p>Կատարված աշխատանքների որակական արդյունքներ (հետևանքային, այդ թվում որակական ցուցանիշներ)</p>	<p>Արձանագրեք մատուցված ծառայության հետևանքային արդյունքները և որակը: Այս ցուցանիշներն արտացոլում են, թե ի՞նչ չափով են ծառայությունները բավարարում իրենց առաքելությանը, նպատակներին ու խնդիրներին: Այս տիպի ցուցանիշների օրինակներ կարող են ծառայել՝ քաղաքացիների, սպառողների բավարարվածության աստիճանը, չգործող փողոցային լույսերի տոկոսը, համայնքի գերազանց կամ լավ վիճակում գտնվող ճանապարհների տոկոսը: Գոյություն ունի մի հատուկ ցուցանիշ, որը երբեմն կոչվում է որակական ցուցանիշ և անդրադառնում է քաղաքացիների տեսանկյունից կարևոր այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են՝ ծառայության ժամանակին մատուցումը, ճշտապահությունը, մատչելիությունը, անվտանգությունը, քաղաքավարությունը, հարմարությունը, գործող ստանդարտներին համապատասխանությունը, քաջատեղյակությունը և այլն:</p>
<p>Աշխատանքի արդյունավետություն (արդյունավետության ցուցանիշներ)</p>	<p>Աշխատանքի քանակական և որակական արդյունքների ինքնարժեքը ներկայացրեք հետևյալ արտահայտումներով՝ միավորի վրա կատարված ծախսը, աշխատաժամանակը: Աշխատանքի արդյունավետությունն արտահայտող ցուցանիշներ են, օրինակ՝ մեկ տոննա աղբի աղբահանության գինը, լցրած փոսերը, բողոքների արձագանքները, կատարված աշխատանքային ստուգայցերը և դրանց վրա ծախսված աշխատաժամերը: Երբ այս ցուցանիշները գնահատվում են ժամանակի ընթացքում, դրանք ներկայացնում են աշխատանքի կատարման արդյունավետության միտումները:</p>

Սուտքային ցուցանիշները ցույց են տալիս այն ներդրված ռեսուրսները (մարդկային, ֆինանսական, նյութական, տեխնիկական և այլն), որոնք օգտագործվում են տվյալ ծառայության մատուցման կամ աշխատանքների կատարման համար: Այս ցուցանիշները, որպես կանոն, հեշտ չափելի են և կարող են պարզապես վերցվել բյուջեներում ներառված ծրագրերից կամ նախահաշիվներից: Սակայն դրանք ոչ մի բան չեն ասում այն մասին, թե ի՞նչ արդյունքներ են ակնկալվել կամ ստացվել այդ ռեսուրսների ներդրմամբ:

Ելքային (քանակական) ցուցանիշները բնութագրում են կատարված աշխատանքների ծավալները, ինչպես, օրինակ՝ հավաքված աղբի քանակը, կանաչապատված տարածքի մակերեսը և այլն: Այս ցուցանիշները պարզ են ու մատչելի, սակայն դրանք քիչ բան են ասում աշխատանքի կատարման որակի կամ ինքնարժեքի մասին:

Հետևանքային (այդ թվում՝ որակական) ցուցանիշները ներկայացնում են մատուցված ծառայության վերջնական արդյունքները և որակը: Այս ցուցանիշները նկարագրում են, թե ի՞նչ չափով են կատարվել այս կամ այն ծառայության շրջանակներում սահմանված առաքելությունները, նպատակները, խնդիրները: Հետևանքային ցուցանիշները կարող են արտահայտվել այնպիսի գործոններով, ինչպես օրինակ՝ բնակչության գոհունակության (կամ բավարարվածության) աստիճանը, չաշխատող փողոցային լույսերի թիվը, գերազանց վիճակում գտնվող փողոցների թիվը և այլն: Հետևանքային ցուցանիշների մեջ հատուկ տեղ են գրավում **որակական ցուցանիշները**, որոնք արտահայտում են ծառայությունների համապատասխանությունը ստանդարտներին և շատ կարևոր են ծառայությունից օգտվող բնակչության համար, քանի որ դրանք կապված են ծառայության մատչելիության, ճշտության, հուսալիության ու ապահովության, ծառայողների բանիմացության, քաղաքավարության, սիրալիության և նման այլ գործոնների հետ:

Արդյունավետության ցուցանիշները ցույց են տալիս նախանշված արդյունքներին հասնելու համար կատարված ծախսերը՝ արտահայտված դրամով կամ աշխատաժամերով: Արդյունավետության ցուցանիշների օրինակներ են հանդիսանում՝ մեկ տոննա աղբի հավաքման, մեկ ճանապարհափոսի լցման և ասֆալտապատման համար կատարված ծախսերը: Տարբեր ժամանակաշրջանների արդյունավետության ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս որոշելու աշխատանքի կատարման արդյունավետության ժամանակային կորերը:

Բացի թվարկված չորս տեսակի ֆունկցիոնալ ցուցանիշներից, կարող են օգտագործվել նաև այսպես կոչված *հարաբերական ցուցանիշներ*, երբ գործունեության արդյունքի ուղղակի գնահատումը խոչընդոտվում է որոշակի բարդությունների, ծախսային և ժամանակային սահմանափակումների պատճառով: Կարող են լինել նաև *փոխարինող ցուցանիշներ*, որոնք արտացոլում են աշխատանքների կատարման որոշակի միտումներ և կողմնորոշում են կառավարիչներին դեպի այն աշխատանքների կատարումը, որոնք հատուկ ուշադրության կարիք ունեն: Երբեմն կարիք է լինում օգտագործել նաև *մոտավոր ցուցանիշներ*, երբ աշխատանքի գինը, բարդությունը կամ ճիշտ ժամանակին չկատարումը խանգարում են արդյունքը ճշգրտորեն չափելուն: Այդ ցուցանիշները ցուցաբերում են գնահատման հակում, հետևապես կարելի է դրանք օգտագործել՝ գնահատման հանդեպ ղեկավարներին զգոն պահելու համար:

Այսպիսով, յուրաքանչյուր ծրագրի կամ ծառայության գնահատման համար անհրաժեշտ է մշակել դրանց մուտքային, ելքային, հետևանքային և արդյունավետության ցուցանիշները, որպեսզի ՏԻՄ-երի գործունեության պատկերն ամբողջական լինի: Ֆունկցիոնալ ցուցանիշների մշակման աշխատանքներին պետք է ներգրավել նրանց, ովքեր այդ ցուցանիշների վերաբերյալ տվյալներ են հավաքում կամ օգտագործում: Նրանք կարող են օգնել՝ հայտնաբերելու այն անկառավարելի գործոնները, որոնք անցանկալի հետևանքների են բերում: Ֆունկցիոնալ ցուցանիշները մշակելիս անպայման պետք է հաշվի առնել համայնքի բնակիչների պահանջները: Ծրագրի կամ ծառայության նպատակների և խնդիրների մեջ փոփոխություն ի հայտ գալու դեպքում անհրաժեշտ է վերանայել և լրամշակել ֆունկցիոնալ ցուցանիշները: Առավելագույնս պետք է կրճատել այդ ցուցանիշների քանակը՝ թողնելով միայն ամենաանհրաժեշտները, քանի որ չափից ավելի շատ ցուցանիշների առկայությունը շփոթություն է առաջացնում օգտագործողների մոտ և շեղում նրանց հիմնական ցուցանիշներից: Ի վերջո պետք է ընտրել այն ցուցանիշները, որոնք միասին վերցրած ամենագործնական և ամենաօգտակար տեղեկատվությունն են ապահովում ծրագրի կամ ծառայության կարևորագույն գործառույթների մասին:

Ֆունկցիոնալ ցուցանիշների մշակման հիմքում ընկած են որոշակի չափանիշներ, որոնք թվարկված են ստորև բերված ներդիրում:

Ներդիր. Ֆունկցիոնալ ցուցանիշների մշակման հիմքում դրված չափանիշները

Օգտակարություն. արդյո՞ք ցուցանիշն ապահովում է ՏԻՄ-երին անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ որոշումներ կայացնելու համար:

Տվյալների մատչելիություն. արդյո՞ք ցուցանիշի գնահատման համար անհրաժեշտ տվյալները մատչելի են:

Հուսալիություն. արդյո՞ք ցուցանիշը սերտորեն կապված է համապատասխան ծառայության նպատակների հետ: Արդյո՞ք ցուցանիշը բացահայտում է արդյունքների վրա որոշակի ազդեցություն գործադրելու անհրաժեշտությունը:

Պարզություն. արդյո՞ք ցուցանիշը հասկանալի կլինի նրանց համար, ովքեր գնահատելու և օգտագործելու են այն:

Ճշտություն. հնարավո՞ր է արդյոք ժամանակի ընթացքում պարզել ցուցանիշի ճշտության աստիճանը:

Կայունություն. եթե ցուցանիշի գնահատումը պարբերաբար կրկնվի, արդյո՞ք արդյունքները կայուն կլինեն:

Ունիվերսալություն. արդյո՞ք ցուցանիշը կիրառելի է բոլոր նպատակների կամ դրանց մեծամասնության համար: Արդյո՞ք այն բավարար տեղեկատվություն է տալիս ծառայությունը գնահատելու համար:

Եզակիություն. արդյո՞ք ցուցանիշը տալիս է այնպիսի տեղեկատվություն, որը մյուս ցուցանիշներից և ոչ մեկը չի տալիս:

Անհետաձգելիություն. արդյո՞ք ցուցանիշի միջոցով տեղեկատվությունը ստացվում է ճիշտ ժամանակին՝ որոշում կայացնելու համար:

Վերահսկելու հնարավորություն. արդյո՞ք օգտագործողը կարող է վերահսկել և կարգավորել ծառայության ֆունկցիոնալ ցուցանիշները:

Ինքնաբերական. տվյալների հավաքման և վերլուծման համար պահանջվող ծախսերը արդյո՞ք չեն գերազանցում ակնկալվող օգուտներին:

Ամբողջականություն. արդյո՞ք ցուցանիշը տալիս է իրավիճակի ամբողջական պատկերը:

Համեմատելիություն. կարո՞ղ է արդյոք ցուցանիշն օգտագործվել՝ այլ ժամանակահատվածում կամ այլ տարածաշրջանում գնահատված համարժեք ցուցանիշների հետ համեմատության համար:

Աշխատանքների կատարման ցուցանիշների գնահատման կազմակերպումը

Ֆունկցիոնալ ցուցանիշների գնահատման աշխատանքներն սկսելուց առաջ շատ կարևոր է ճիշտ ընտրել գնահատման ենթակա համայնքային ծառայության ոլորտը: Տեղական նշանակության որոշ ծառայությունների համար, օրինակ, ջրամատակարարումը և ջրահեռացումը, սանիտարական մաքրումը և աղբահանումը, հանգստի գոտիների և զբոսայգիների սպասարկումը, բնակարանային ֆոնդի շահագործումը և այլն, համեմատաբար հեշտ է սահմանել և գնահատել աշխատանքների կատարման ցուցանիշները: Սակայն այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են սոցիալական, կրթական, մշակութային, առողջապահական, էկոլոգիական և այլ նմանատիպ (բնակչության կենսամակարդակի բարելավման հետ կապված) համայնքային ծառայությունները, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների վրա հիմնված ծառայությունները (ինժեներական, իրավաբանական, պլանավորման, կառավարման և այլն) ավելի դժվար է գնահատել, քանի որ դրանց մատուցման համար պահանջվում է ավելի շատ ժամանակ և ծախս:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ըստ ոլորտների աշխատանքների կատարման ցուցանիշների համակարգը նպատակահարմար է գործադրել ծառայությունների այն ոլորտներում, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներին՝

- ծառայության կատարողական ցուցանիշները հեշտությամբ ենթարկվում են գնահատման,
- ծառայության կատարողական ցուցանիշների վերաբերյալ շարունակաբար հավաքվել են տվյալներ և արդեն կուտակվել է ցուցանիշների գնահատման որոշակի փորձ,
- նախապես սահմանվել են ծառայության մատուցման նպատակները,
- ծառայությունը կենսական և կարևոր նշանակություն ունի համայնքի համար,
- ծառայության մատուցման վերաբերյալ առկա տեղեկատվությունը ցույց է տալիս, որ կան որոշակի հիմնախնդիրներ և դրանք լուծելու կամ վերացնելու պահանջ,
- ընտրովի պաշտոնյաները և քաղաքացիները առանձնահատուկ հետաքրքրություն են ցուցաբերում ծառայության նկատմամբ և օժանդակում են դրա բարելավմանը,

- սկսվում են նոր ծառայության մատուցման կամ ծրագրի իրականացման աշխատանքները,
- այլ համայնքներ կամ կազմակերպություններ մատուցում են տվյալ ծառայությունը, նրանց կողմից շարունակաբար իրականացվել է այդ ծառայության մատուցման ֆունկցիոնալ ցուցանիշների գնահատում և հնարավորություն կա դրա վերաբերյալ ստանալ նրանցից տեղեկատվություն՝ համեմատության համար,
- ծառայության մատուցման ցուցանիշների մասին բավականաչափ տեղեկատվություն կա համապատասխան մասնագիտական գրականությունում:

Ֆունկցիոնալ ցուցանիշների գնահատման համակարգի հիմքերը ճիշտ դնելու համար, առաջին հերթին, պետք է կազմակերպել ծառայության մատուցման կամ ծրագրի իրականացման վերաբերյալ տվյալների հավաքման, թարմացման, վերլուծման և օգտագործման ամբողջ գործընթացը: Պետք է որոշել, թե ի՞նչ կարգի տեղեկատվություն է անհրաժեշտ՝ ծառայության մատուցման կամ ծրագրի իրականացման արդյունքները գնահատելու և հիմնախնդիրները բացահայտելու համար, ինչպես նաև գտնել այդ տեղեկատվությունն ստանալու եղանակները: Հավաստի տեղեկատվության հավաքումն ու վերլուծումը մշտապես դժվար կատարվող և թանկ աշխատանք է: Ուշադրության արժանի պետք է լինեն այն տվյալները, որոնք առավել հեշտ է հավաքել և թարմացնել, որոնք կարելի է ստանալ ժամանակին, ամբողջությամբ և առանց սխալների, որոնք գործնական են ու օգտակար: Սովորաբար տվյալների հավաքման աշխատանքները հանդիսանում են համայնքի ղեկավարի աշխատակազմի ուղորտային բաժինների կամ ենթակա կազմակերպությունների պարտականությունները, իսկ դրանց համակարգումը և ճշտումը՝ համապատասխան կառավարման բաժնի (ծրագրերի, ֆինանսական, գույքի կառավարման և այլն) պարտականությունները:

Համակարգիչները, տեղեկատվության մշակման այլ սարքավորումները և համապատասխան ծրագրային միջոցները մեծապես ոյուրացնում են տվյալների դասակարգման, մշակման, օգտագործման և զեկուցման աշխատանքները:

Ֆունկցիոնալ ցուցանիշների գնահատման ճշտությունը շատ բանով կախված է տվյալների վերլուծության որակից: «Հում» տվյալները սովորաբար շատ բան չեն ասում: Շատ կարևոր է հասկանալ, թե ի՞նչ են բացահայտում և ի՞նչ չեն բացահայտում տվյալները: Աշխատանքային նվաճումների և կատարված բացթողումների վերլուծությունը թույլ կտա մշակել աշխատանքային պլան՝ ֆունկցիո-


նալ ցուցանիչները բարելավելու համար: Զգալի հաջողության կարելի է հասնել՝ համենատեղով ընթացիկ ֆունկցիոնալ ցուցանիչները նախապես սահմանված նպատակների հետ, որոնք կազմում են որպես բյուջեի բաղադրիչ մաս կամ որպես աշխատանքային պլան, ինչպես նաև նախորդ հաշվետու ժամանակաշրջանի նույն ֆունկցիոնալ ցուցանիչների հետ, մասնագիտական չափորոշիչների (ստանդարտների, էտալոնների, նորմատիվների) հետ, կառավարման այլ մարմինների, մանատիպ այլ համայնքների ու կազմակերպությունների համապատասխան ցուցանիչների հետ, օրինակելի (մանատիպ կազմակերպությունների մեջ գրանցված լավագույն) ցուցանիչների հետ:

Աշխատանքների կատարման ցուցանիչների գնահատման գործընթացը սկսվում է նպատակների սահմանումով, որոնք իրենցից ներկայացնում են ձեռքբերումների նախապես պլանավորված մակարդակը: Նպատակները հիմնվում են՝ կատարողականի անցյալ տվյալների, այլ կազմակերպությունների կողմից աշխատանքների կատարման վերլուծության, ծառայության մատուցման նորմատիվների, շուկայի վերլուծության վրա: Նպատակների ձևավորման վրա ազդում են նաև համայնքային քաղաքականության առաջնահերթ խնդիրները, փոփոխական պայմանները, ծառայությունների պահանջարկը և առկա ռեսուրսները:

Բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման ցուցանիչների գնահատման ընդհանուր սխեման բերված է գծապատկեր 12-ում: Գնահատման գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը՝

- որոշեք, թե ո՞ր ծրագրերի կամ ծառայությունների համար պետք է օգտագործվի գնահատման համակարգը,
- թվարկեք ծրագրի կամ ծառայության նպատակները,
- որոշեք, թե ո՞ր գործողությունները պետք է գնահատվեն,
- սահմանեք ընտրված գործողություններին համապատասխան ֆունկցիոնալ ցուցանիչները՝ հիմք ընդունելով ցուցանիչների մշակման չափանիշները,
- սահմանեք ֆունկցիոնալ ցուցանիչների գնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքագրելու համակարգը,

Գծապատկեր 12. Բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման ցուցանիշների գնահատման ընդհանուր սխեման



- հավաքագրեք տվյալները և գնահատեք ֆունկցիոնալ ցուցանիշները,
- կատարեք ծրագրի իրականացման կամ ծառայության մատուցման շարունակական նպատակահարմարության վերլուծություն՝ կատարելագործելով ցուցանիշները,
- շարունակեք ծրագրի իրականացումը՝ կատարելագործված ցուցանիշների կիրառմամբ,
- Գնահատման արդյունքների մասին զեկուցեք ՏԻՄ-երին:

Արդյունքների մասին զեկույցն իրենից ներկայացնում է ամփոփ մի հաշվետվություն՝ ծրագրի կամ ծառայության աշխատանքների կատարման ցուցանիշների գնահատման վերաբերյալ: Ձեկույցում արված եզրակացությունների հիման վրա ՏԻՄ-երը կարող են որոշումներ կայացնել և համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Աշխատանքների կատարման ցուցանիշների գնահատման համակարգի խնդիրը կայանում է պարզապես նշված քայլերի պարբերական և հետևողական իրականացումը:

ՎԵՐԶԱԲԱՆ

Համայնքի բյուջետավարումը շարունակական, պարբերաբար կրկնվող և, դրա հետ մեկտեղ, աշխատատար ու ՏԻՄ-երի մշտական հոգածությունը պահանջող գործընթաց է: Այս գործընթացի ամբողջականությունն ու համակարգվածությունն ապահովելու, ինչպես նաև ՏԻՄ-երին օժանդակելու և նրանց աշխատանքը համայնքի ֆինանսական կառավարման բնագավառում, գործող բյուջետային օրենսդրության շրջանակներում, թեթևացնելու նպատակով, սույն ուղեցույցում բավարար մանրամասնությամբ անդրադարձ է կատարվել համայնքի բյուջետավարման համարյա բոլոր փուլերին՝ ինչպես համայնքի բյուջեի նախագիծը մշակելու ու դրա հանրային քննարկումները կազմակերպելու, այնպես էլ բյուջեի կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու ուղղություններով: Բյուջետավարման նախորդ ձեռնարկի հետ համեմատած՝ սույն ուղեցույցում մեծ տեղ է հատկացվել համայնքի կապիտալ բյուջետավարման, գնումների գործընթացների կազմակերպման, ֆինանսական վերլուծություններ իրականացնելու մեթոդաբանության մշակման ու օգտագործման և բյուջեով նախատեսված աշխատանքների, ծրագրերի ու համայնքային ծառայությունների գնահատման հարցերին:

Մյուս կողմից, Հայաստանում շարունակվում են վարչական և ֆինանսական ապակենտրոնացման գործընթացները, տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները և, դրանց զուգահեռ, փոփոխվում ու կատարելագործվում է ՀՀ բյուջետային օրենսդրությունը: Սուտ ապագայում այդպիսի բարեփոխումներ են ակնկալվում՝ համայնքներին ֆինանսական համահարթեցման նոր սկզբունքով դրամաշնորհների տրամադրման, տեղական նոր հարկերի (հյուրանոցային, տրանսպորտային միջոցների կայանատեղի) ներդրման և կիրառման, առևտրային բանկերից փոխառու միջոցների ներգրավման և այլ ուղղություններով: Ակնհայտ է, որ այդ բարեփոխումները կառաջադրեն նոր պահանջներ ու խնդիրներ՝ ինչպես ՀՀ բյուջետային ամբողջ համակարգի, այնպես էլ, մասնավորապես, նրա՝ համայնքային մակարդակի առջև:

Միաժամանակ, կարծում ենք, որ համայնքի բյուջետավարումը, որպես համայնքի ընդհանուր ֆինանսական կառավարման համակարգի բաղադրամաս, անընդհատ զարգացող ենթահամակարգ է, որի հետագա զարգացումները, բացի օրենսդրական նոր պահանջներից, պայմանավորված է նաև այդ համակարգի այլ բաղադրամասերի՝ օրինակ, համայնքի գործունեության միջնաժամկետ պլանավորման, գույքի կառավարման, վարկավորման, պարտատոմսերի թողարկման և այլ զարգացումներով:

ՍԿՁԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն
2. Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
4. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
5. «Հարկերի մասին» ՀՀ օրենք
6. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք
7. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք
8. «Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենք
9. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք
10. «Գնումների մասին» ՀՀ օրենք
11. «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող` ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենք
12. Ա. Սուրադյան. «Համայնքի բյուջետավարման ուղեցույց», ՀՖՄ, «Դար», Երևան, 2004
13. Դ. Թումանյան, Վ. Մովսիսյան. «Տեղական ինքնակառավարման համակարգում ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման ձեռնարկ», ՄԱԶԾ, «Ի-Դի-Ար-Սի Քոնսալթինգ» ՍՊԸ, Երևան, 2006
14. Վ. Մովսիսյան «Ֆինանսական համահարթեցման մեխանիզմի զարգացումը Հայաստանում», OSI/FDI, ՀՖՄ, Նոյյան տապան, Երևան, 2007
15. «Պետական գնումների համակարգը Հայաստանի Հանրապետությունում» ձեռնարկ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, 2006
16. «Գործառական և կապիտալ պլանավորում և բյուջետավարում» ուսուցման նյութեր, ԱՄՆ ՄԶԳ, «Ար-Թի-Այ» ՏԻԾ 3, ՀՖՄ, Երևան, 2007
17. «Համայնքի ֆինանսական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկ, Վ.Շահբազյանի խմբագրությամբ, ՀՍՆՀ, «Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ, Երևան, 2009
18. A. John Vogt, Capital Budgeting and Finance: A Guide for Local Governments, ICMA, Washington, D.C. 2004
19. Budgeting: A Guide for Local Governments, ICMA, Washington, D.C. 2002
20. Robert L. Bland, Irene S. Rubin, A Guide for Local Governments, University of North Texas, Northern Illinois University, 1997
21. www.mfe.am
22. www.cfoa.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ (ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ)
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____ՄԱՐԶ

_____ ՀԱՄԱՅՆՔԻ

2010-12թթ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

_____ 2009թ.

(համայնքի անվանումը)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ՏԻՄ-երին Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար ՏԻՄ-երը պետք է կատարեն մի շարք գործառույթներ, որոնցից կարևորագույններից մեկը համայնքի ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման գործառույթն է: Համայնքի ֆինանսական կառավարման սիրտը համայնքի բյուջեն է, որի ձևավորումն, ըստ էության, համայնքի սահմանափակ ֆինանսական միջոցների բաշխումն է համայնքային ծառայությունների, ծրագրերի և միջոցառումների միջև այնպես, որպեսզի առավել արդյունավետ բավարարվեն համայնքի հանրության կարիքներն ու պահանջները:

Համայնքի ՏԻՄ-երի և համայնքային կազմակերպությունների գործունեությունն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար նպատակահարմար է, որ ՏԻՄ-երը մշակեն և ընդունեն «Համայնքի ֆինանսական կառավարման ռազմավարություն (քաղաքականություն)» փաստաթուղթը, որով կսահմանվեն համայնքի ֆինանսական կառավարման հիմնական քաղաքականությունները գալիք 3-4 տարիների համար և որը կդառնա ՏԻՄ-երի ուղեցույցը համայնքի ֆինանսական կառավարման բնագավառում:

Ֆինանսական կառավարման ռազմավարության մշակումը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները`

1. Համայնքի զարգացման քառամյա ծրագրին (այդ թվում` կապիտալ զարգացման ծրագրին) համապատասխան, համայնքային ծառայությունների մակարդակի և որակի պահպանում, խթանում և բարձրացում:
2. Հաշվեկշռված տարեկան բյուջեների կազմում և կատարում` համայնքի նպատակային գործունեությունն, առկա ռեսուրսների սահմաններում, կազմակերպելու և ծավալելու համար:

Սույն փաստաթղթում անդրադարձ է կատարվում համայնքի ֆինանսական կառավարման ռազմավարության բաղկացուցիչ մասերը հանդիսացող ընդհանուր, եկամտային, ծախսային, պահուստային, կապիտալ բարեփոխումների և փոխառու միջոցների (պարտքի) քաղաքականություններին, ձևակերպվում են այդ քաղաքականությունների հիմնական դրույթները:

Ստորև ներկայացվում են վերոհիշյալ քաղաքականություններն առանձին-առանձին:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Համայնքը պետք է կառավարի իր ֆինանսական միջոցները օրինական և ողջամիտ ձևով:
- Համայնքը պետք է ծավալի ռազմավարական և օրենսդրության պահանջները բավարարող ֆինանսական գործունեություն՝ ուղղելով իր ֆինանսական ռեսուրսները համայնքի երկարաժամկետ նպատակների իրականացմանը:
- Համայնքը պետք է խնամքով մշակի և իրականացնի գործողությունների պլաններ, որոնք շարունակաբար ուղղվում են բնակչության պահանջների պատշաճ և երկարաժամկետ բավարարմանը՝ կապված ծառայությունների որակի հետ:
- Համայնքը պետք է ընդունի և կիրառի այնպիսի հաշվապահական համակարգ, որն արտացոլում է ՀՀ օրենքով ամրագրված հաշվապահական սկզբունքները:
- Համայնքը պետք է համագործակցի ՀՀ այլ համայնքների, ՏԻ բնագավառում գործող ՀԿ-երի հետ՝ օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ դիրքորոշում ձևավորելու համար:
- Համայնքի ավագանին ընդունում է սույն ֆինանսական կառավարման ռազմավարությունը՝ այն գործնական կիրառության մեջ դնելու համար:

Բ. ԵԿԱՍՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Համայնքը պետք է աշխատի ապահովել բյուջեի բազմազան և կայուն մուտքային բազա, որը ամբողջովին կախված չէ միայն առանձին եկամտատեսակներից կամ հիմնական հարկատուներից:
- Համայնքը պետք է ուսումնասիրի և գտնի եկամուտների հնարավոր լրացուցիչ աղբյուրներ՝ առանց էականորեն մեծացնելու համայնքի բնակչության կամ տեղական գործարարների հարկային բեռը:
- Համայնքը պետք է մշակի և կիրառի բյուջեի մուտքերի ճշգրիտ կանխատեսումն ապահովող մեթոդներ:
- Համայնքը պետք է դրսևորի հետևողականություն բյուջեի սեփական մուտքերի գանձման և վերահսկման հարցում՝ դրանք ժամանակին և անխափան ապահովելու համար:
- Համայնքը պետք է սահմանի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, համայնքային ծառայությունների մատուցման վարձավճարների չափերը՝ ելնելով համայնքի առանձնահատկություններն արտացոլող, համաձայնեցված չափորոշիչներից, և ապահովի դրանց գանձումը հնարավորության սահմաններում:

- Ծառայության վարձավճարի չափը պետք է սահմանվի այնքան, որը լիովին կբավարարի ծառայության մատուցման հետ կապված ուղղակի և անուղղակի բոլոր ծախսերը (այդ թվում՝ մաշվածությունը) ծածկելու համար:
- Համայնքը պետք է պարբերաբար վերանայի ծառայությունների մատուցման համար սահմանված վարձավճարների չափերը և փորձի դրանք հնարավորինս մոտեցնել ծառայությունների մատուցման ծախսերին, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայության մատուցման սակագինը բխում է համայնքի կողմից ընդունված ֆինանսական կառավարման ռազմավարությունից կամ որոշակի նպատակներից:
- Համայնքի ավագանին պետք է ստանա առնվազն եռամսյա ֆինանսական հաշվետվություններ բյուջեի փաստացի մուտքերի վերաբերյալ՝ համայնքի ֆինանսական վիճակի մասին հստակ պատկերացում կազմելու համար:
- Համայնքը պետք է մշակի և կիրառի համայնքի ֆինանսական ցուցանիշների գնահատման համակարգ՝ աստիճանաբար զարգացնելով այն:

Գ. ԾԱՆՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի բյուջեն, հնարավորության սահմաններում, պետք է արտացոլի համայնքի զարգացման քառամսյա ծրագրում տվյալ տարվա համար նախատեսված աշխատանքների, ծառայությունների, միջոցառումների և ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը:
- Համայնքի վարչական բյուջեի տարեկան ելքերը չեն կարող գերազանցել տարեկան մուտքերը: Վարչական բյուջե փաստացի մուտքագրված հավելուրդը կարող է օգտագործվել՝ կամ վարչական բյուջեի ժամկետանց պարտքերի մարման համար, կամ ֆոնդային բյուջեում (որպես վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումներ)՝ ֆինանսավորելու տվյալ տարվա կապիտալ ծրագրերը, կամ համայնքի հաջորդ տարվա բյուջեում (որպես տարեսկզբի ազատ մնացորդ)՝ կայունացնելու ծառայությունների մատուցումը և ֆինանսավորելու բազմամսյա կապիտալ ծրագրերը:
- Համայնքի բյուջեում պետք է ներառվեն համայնքի ինչպես գործող, այնպես էլ զարգացման արդյունքում ստեղծված նոր համակարգերի և ենթակառուցվածքների պահպանման, շահագործման և նորոգման ծախսերը:
- Համայնքը պետք է ծառայություններ մատուցի առավելագույն արդյունավետությամբ և խնայողությամբ, օժանդակի մասնավոր և հասարակական հատվածների՝ ծառայությունների մատուցման այն նախաձեռնություններին, որոնք տնտեսապես կենսունակ են և համապատասխանում են շահառուների ակնկալիքներին:
- Համայնքը պետք է իրականացնի ֆինանսական վերլուծություններ բյուջեով կատարած ծախսերի և դրանց արդյունքում ստացած օգուտների վերաբերյալ:

Դ. ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Համայնքը պետք է բյուջեում (և՛ վարչական, և՛ ֆոնդային մասերում) նախատեսի պահուստային ֆոնդ՝ ֆինանսավորելու նախատեսված պարտավորությունների լրացուցիչ և չնախատեսված աշխատանքները:
- Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդը պետք է ընդգրկի որոշակի միջոցներ՝ ֆինանսատնտեսական անկայուն վիճակների համար (օրինակ՝ գների փոփոխության դեպքում):
- Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից չնախատեսված ծախսերը պետք է կատարվեն բացառապես համայնքի ավագանու որոշումներով՝ օրենքով սահմանված կարգով:

Ե. ԿԱՊԻՏԱԼ ԲԱՐԵՓՈՒՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի կապիտալ բարեփոխումները (ներդրումները) պետք է համապատասխանեն ավագանու կողմից հաստատված համայնքի զարգացման քառամյա ծրագրին և կապիտալ զարգացման ծրագրին:
- Համայնքը պետք է իրականացնի բազմամյա (առնվազն երեք տարվա) ֆինանսական կանխատեսումներ ինչպես վարչական, այնպես էլ ֆոնդային բյուջեների համար:
- Համայնքը պետք է կազմի կապիտալ զարգացման ծրագիր, որը պետք է վերանայվի և թարմացվի առնվազն տարին մեկ անգամ: Յուրաքանչյուր տարի պետք է ճշտվեն առաջիկա առնվազն երեք տարիների կապիտալ ծրագրերը՝ կախված համայնքի բնակչության ժողովրդագրական կազմի փոփոխությունից, անշարժ գույքի շուկայից, համայնքի ենթակառուցվածքների վերանորոգման կամ փոխարինման կարիքից և այլ գործոններից:
- Համայնքը պետք է կազմի գալիք տարվա բյուջե՝ վարչական բյուջեում ներառելով նաև կապիտալ բարեփոխումների արդյունքում առաջացող ապագա շահագործման ծախսերը և ֆոնդային բյուջեում ներառելով կապիտալ զարգացման ծրագրով առաջին տարվա համար նախատեսված կապիտալ ծրագրերը:
- Համայնքը պետք է կազմի ֆոնդային բյուջեով առաջարկվող յուրաքանչյուր կապիտալ ծրագրի բյուջեն (նախահաշիվը)՝ նշելով դրա ֆինանսավորման հնարավոր աղբյուրները, նախքան բյուջեն ավագանու հաստատմանը ներկայացնելը:
- Համայնքը պետք է փորձի գտնել բոլոր կապիտալ ծրագրերի ֆինանսավորման և իրականացման նվազագույն ծախսատար եղանակը:
- Համայնքը պետք է ձևավորի ֆոնդային բյուջեի իրատեսական մուտքային մասը և հետևողականորեն ապահովի դրա հայթայթումը:
- Համայնքը պետք է արդյունավետորեն հաշվեկշռի կատարման ենթակա կապիտալ ծախսերը և պարտքի մարումը:

- Համայնքի ենթակառուցվածքների փոխարինման դեպքում (ինչպես օրինակ, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում), դրանց պահպանման և շահագործման ծախսերի նախահաշիվները պետք է վերանայվեն առնվազն երկու տարին մեկ՝ գանձվող վարձավճարների գումարների բավարար լինելը գնահատելու համար:

2. ՊԱՐՏՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Համայնքը պետք է զգուշություն հանդես բերի պարտքի (փոխառու միջոցների) ներգրավման նկատմամբ, որպեսզի չմեծացնի համայնքի բյուջեի (ինչպես նաև՝ հարկատուների) պարտավորությունների բեռը:
- Համայնքը չպետք է օգտագործի երկարաժամկետ պարտքեր՝ ընթացիկ գործառնությունների համար:
- Դրամական հոսքերը կարգավորելու նպատակով համայնքը կարող է ներգրավել կարճաժամկետ բյուջետային փոխառություններ՝ ապահովելու դրամական միջոցների շրջանառության ժամանակավոր կարիքները:
- Այն կապիտալ ծրագրերի իրականացման համար, որոնք հնարավոր չէ ֆինանսավորել համայնքի բյուջեի սեփական միջոցներից, համայնքը պետք է ձգտի ձեռքբերել երկարաժամկետ փոխառու միջոցներ՝ հնարավորինս ձեռնու պայմաններով:
- Համայնքը պետք է իրատեսորեն գնահատի և մնա պարտք վերցնելու իր հնարավորությունների սահմաններում:
- Համայնքը պետք է աշխատի սահմանափակել պարտքի գործակիցը (ընդհանուր բյուջեով երաշխավորված պարտք)՝ բյուջետային օրենսդրությամբ սահմանված չափաքանակների սահմաններում: Պարտքի գործակիցը հաշվարկվում է պարտքի գումարի և բյուջեի ընդհանուր մուտքերի հարաբերությամբ:
- Համայնքը պետք է պլանավորի և կառավարի փոխառու միջոցների ներգրավումը և մարումը արդյունավետ ձևով:
- Երբ կապիտալ ծրագիրը ֆինանսավորվում է փոխառու միջոցների հաշվին, համայնքը պետք է ձգտի պարտքը մարել պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև վաղաժամկետ:
- Պարտքի սպասարկման համար, հնարավորության դեպքում, համայնքը պետք է ուսումնասիրի և գնահատի եկամտի այլընտրանքային աղբյուրների օգտագործման հնարավորությունները՝ բյուջեի պարտավորությունների բեռը թեթևացնելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱԿԻՐՃ ՆԱԽԱԳԾԻ ՆՄՈՒՇ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2010 ԹՎԱԿԱՆԻ

ԲՅՈՒՋԵԻ ՀԱԿԻՐՃ ՆԱԽԱԳԻԾ



2009

Ի՞ՆՉ Է ԲՅՈՒՋԵՆ

Բյուջեն համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին /ՏԻՄ/ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման տարեկան ֆինանսական ծրագիր է:

Եթե ամենապարզ ձևով ներկայացնենք, բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծախսերի համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, կառավարման մարմինների յուրաքանչյուր գործառույթի գծով: Լավագույն դեպքում, բյուջեն պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝ բյուջեն ՏԻՄ-երի գործունեության ֆինանսական կառավարման առանցքն է:

Սույն փաստաթղթի նպատակն է՝ ներկայացնել համայնքի բնակչությանը, թե քաղաքապետարանը ինչպե՞ս է արձագանքում համայնքի բնակիչների բարեկեցության բարձրացմանը՝ տարաբնույթ ծառայությունների մատուցման և ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՉԸ

Համայնքի 2010թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2009-2012թթ. զարգացման քառամյա ծրագիրը և 2008-2010թթ. կապիտալ զարգացման ծրագիրը: Համայնքի ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Համայնքի 2010թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- ❖ *Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝*
- *ճշտելով և թարմացնելով հողի հարկի և գույքահարկի տվյալների շտեմարանները,*
- *իրականացնելով տեղական տուրքերի և վճարների, համայնքային ծառայությունների մատուցման վարձավճարների սահմանման և գանձման ձկուն քաղաքականություն,*

- *խթանելով ծեռներեցությունը և համայնքային տնտեսության զարգացումը,*
- *ապահովելով բյուջեի մուտքերի կանխատեսումների իրատեսությունը,*
